ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դ. Ա. ՍՊԻՐՈՎ
ՀԱՅԵՐԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
(1894 - 1896)



ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մատենաշար թիվ 3

ԴԻՄԻՏՐ Ա. ՍՊԻՐՈՎ
ՀԱՅԵՐԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
(1894 - 1896 ԹԹ.)
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ (Նախագահ), Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ,
Վ. Գ. ՍՎԱՉԼՅԱՆ, Վ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թարգմանությունը բուլղարերենից
(երկրորդ հրատարակություն, Սոֆիա, 1897)
և առաջաբանը՝ Կ. Հ. ճինգոյանի

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժողովուրդների կյանքում երբեմն արձանագրվում են եղերական այնպիսի դեպքեր և իրադարձություններ, որոնք խորապես դրոշմվում են ինչպես իրօրյա, այնպես էլ հետագա սերունդների հիշողության մեջ և բախտորոշ նշանակություն ունենում նրանց հոգևոր-ընկերային կյանքում:

Անցյալ դարավերջում, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերից հետո, երբ աղոտ կերպով ուրվագծվեցին Արևմտյան Հայաստանում որոշ բարենորոգումներ անցկացնելու պատրանքները, Օսմանյան պետության կառավարող շրջանների և հատկապես սուլթան Աբդուլ Համիդ II-ի դժոխային խորհրդով մշակվեց ու գործադրության մեջ դրվեց օսմանյան թուրքերի հայաջինջ քաղաքականությունը: Սկսվեց հայազգի բնակչության հալածանքների ու զանգվածային կոտորածների ոճրապարտ ծրագրի իրագործումը: Սուլթանի և մեծապետական թուրքերի համոզմամբ չպետք էր թույլ տալ, որ Հայաստանը դառնար երկրորդ Բուլղարիա, ուստի կայսրության սահմաններում ապրող հայկական տարրի արմատական բնաջնջումով միայն կարելի էր մեկընդմիշտ լուծել Հայկական հարցի կնճռոտ բարդույթը, որը որպես թունավոր ոսկոր դեմ էր առել պանթուրքիզմի հովերով տարված օսմանյան պետական այրերի ընչաքաղց կոկորդում:

1890-1896 թվականների հայկական կոտորածների հետևանքով հեղվեց ավելի քան 300000 հայերի անմեղ արյունը, հրկիզվեցին հարյուրավոր գյուղեր ու տասնյակ քաղաքներ:

Հետագայում, 1915-ի առավել զանգվածային ոճրագործությունների ազդեցությամբ, մարդկային հիշողության մեջ կարծես մշուշվեցին հազիվ երկու տասնամյակ առաջ կատարված արյունալի դեպքերը, թեև դրանք արդեն իսկ կանխագուշակում էին թուրք բարբարոսների հայասպան քաղաքականության առավել վայրագ ծրագրումները:

Այսօր թուրք ջարդարարների արժանավոր հետնորդները, նրանց վայ գիտնականներն ու ծախու գրչակները անպատկառ լկտիությամբ փորձում են խեղաթյուրել ու նենգափոխել պատմական ճշմարտության անվիճելի փաստերը, չքմեղանալ և խուսափել պատասխանատվությունից, ջանալով մարդկությանը հավատացնել, թե այդ ամենը չարամիտ հերյուրանքների արդյունք է, թե Թուրքիայում ոչ մի միտումնավոր ցե-

դասպանություն չի եղել, թե պատահածն էլ թյուրիմացություն է և կամ պատերազմի անխուսափելի հետևանք:

Իսկ ինչպե՞ս մեկնաբանել աղետալի իրադարձություններին անմիջականորեն ականատես օտարազգի նշանավոր մարդկանց բազում ու բազմապիսի վկայությունները, այդ տագնապալի օրերի ցնցող տպավորությունների ազդեցությամբ նրանց գրած և հրապարակած առանձին գրքերն ու հոդվածները: Եվ, ի հեճուկս թուրքական դիվանագիտության համառ ջանքերի, օրավուր բազմապատկվում են այդ հանցագործությունը վերապրողների հուշագրությունները, ժամանակի օտարազգի դիվանագետների ու հասարակական-քաղաքական գործիչների վկայությունները, որոնք հաճախ անսքող կրքով ու ցասումով նկարագրում կամ դատապարտում են Արևմտյան Հայաստանում օսմանյան դահիճների գործած անասելի գազանությունները:

Դժոխային այդ օրերին բուլղարական մամուլը («Սոցիալիստ», «Միսլ», «Նովո վռեմե», «Դեն», «Ռաբոտնիչեսկի վեստնիկ», «Գլաս մակեդոնսկի», «Օսվոբոժդենիե» և այլն) հանդես եկավ թուրք ջարդարարների և սուլթան Համիդի վարած հայահալած քաղաքականության խիստ քննադատությամբ: Օրինակ, «Սոցիալիստ» թերթի քաղաքական տեսաբանը գրում էր. «Արդեն երեք տարի է, ինչ գազազած սուլթանական հորդաներն ու ոստիկանության կողմից զինված մոլեռանդ ամբոխը աշխարհով մեկ տարածել է հայ ժողովրդի դառն հառաչանքը: Հայաստանում տեղի ունեցող արհավիրքն ու գազանությունները իրենց նմանը չունեն պատմության մեջ: Այնտեղ առանց սեռի ու տարիքի խտրության սպանում են ոչ թե հարյուրներով կամ հազարներով, այլ տասնյակ ու հարյուր հազարներով: Այնտեղ հրկիզված են ոչ թե մեկ կամ երկու, այլ հարյուրավոր գյուղեր ու տասնյակ քաղաքներ: Ողջ երկիրը վերածված է ավերակների ու մոխրակույտերի: Սասունը, Սվազը և Դիարբեքիրը գերազանցեցին մեր Բատակը, Պերուշտիցան և Պանագյուրիշտեն»:

Իսկ «Դելո» թերթը նույն այդ օրերին անդրադառնալով Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի նկատմամբ թուրքերի գործած անմարդկային բարբարոսություններին, նկատում էր. «Դժվար է դատել, թե ինչպիսի դաժանություններ են կատարվում Արևմտյան Հայաստանում, որոնց մասին դեռ ոչ մի տեղեկություն չունենք: Եվ փոխանակ մեկընդմիշտ վերջացնելու «հիվանդ մարդու» հետ և փրկելու ժողովրդին, եվրոպական դիվանագիտությունը փորձում է կիսամիջոցներով երկարացնել նրա հանցալի կյանքը: Խայտառակություն»:

Ժամանակի բուլղարական հեղինակավոր պարբերականները ողողված էին Հայաստանում և Կ. Պոլսում կատարվող հայկական կոտորածների, թալանի ու բռնությունների մանրամասն նկարագրություններով ու բողոքի ընդվզումներով: Սակայն, բավարարվենք այսքանով:

Անցյալ դարավերջում հայ ժողովրդին վիճակված դառն ճակատագիրը խորապես հուզել է ժամանակի այնպիսի կարկառուն դեմքերի, ինչպիսիք էին Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը, Վիլյամ Գլադստոնը, Վիկտոր Բերարը, Յոհաննես Լեփսիուսը, Հենրի Լինչը, Էմիլ Դիլոնը, Ժակ դը Մորգանը, Յուրի Վեսելովսկին և շատ ուրիշներ, որոնք իրենց հրապարակային ելույթներում բողոքի ձայն են բարձրացրել քսաներորդ դարի շեմին կատարվող այդ անօրինակ նախճրի դեմ: Մեծ մարդասերների այս փայլուն համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի նաև բուլղար անվանի հրապարակախոս, պատմաբան և հասարակական-քաղաքական գործիչ Դիմիտր Սպիրովը (1868-1906):

1896-ին, երբ Արևմտյան Հայաստանում և Կ. Պոլսում հայերի հալածանքներն ու մասսայական ջարդերը դեռ չէին դադարել, Բուլղարիայում լույս տեսավ Դ. Սպիրովի «Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը» ցասումնալից գիրքը, որն ընթերցող հասարակայնության պահանջով, լրացված ու ճշտված, վերահրատարակվեց 1897-ին՝ Սոֆիայում: Այն նվիրված էր Կ. Պոլսում, Սասունում և պատմական Հայաստանի այլ վայրերում սուլթանի գաղտնի հրամանով սանձազերծված հայկական ջարդերի ու հալածանքների նկարագրությանն ու հարակից վերլուծությանը: Հանգամանքների բերումով Սպիրովը ականատեսն ու վկան է եղել Կ. Պոլսում տեղի ունեցող աղետալի դեպքերին: Իր ուսումնասիրության մեջ նա հաճախ հենվում է նաև հայրենակիցների և օտար ականատեսների վկայությունների վրա, քաղվածքներ անում եվրոպական թերթերից, մեջբերում հայկական կոտորածներին վերաբերող եվրոպացի հեղինակավոր անձանց ասույթներն ու խորհրդածությունները, վկայակոչում հանրածանոթ քաղաքական գործիչների միջպետական զեկուցագրերը, անձնական նամակագրություններն ու հոդվածները: Այս ամենը հաստատում է Դ. Սպիրովի ճշգրտումների ու լրացումների անվիճելի հավաստիությունը:

Դ. Սպիրովը ազգությամբ բուլղար է: Բայց նա այնքան սրտամոտ է ընդունում դեռևս օսմանյան տիրապետության տակ հեծող եղբայրական Մակեդոնիայի հարցը, որ իրեն համարում է մակեդոնական բուլղարի ծնունդ: Հաճախ, երբ նկարագրում է հայերի հանդեպ գործված անարդարությունները, Սպիրովը անդրադառնում է նաև Մակեդոնիայում գործադրվող օսմանյան բարբարոսություններին և անկեղծ վշտով ու կարեկցանքով արտահայտվում մեծ տերությունների կողմից մակեդոնական հարցի ամոթալի շահատակություններին: Ինչպես երևում է Դ. Սպիրովի խոստովանություններից, ինքը, որպես «Մակեդոնիայի զավակ», օսմանյան դարավոր բռնությունից եղբայրական Մակեդոնիայի ազատագրության ջերմ պաշտպանն է, և մեկ անգամ չէ, որ շեշտում է հայ և մակեդոնական ժողովուրդների գաղափարական ու զինական համագործակցութ-

յան անհրաժեշտությունը: Պատահական չէ, որ դիմելով մակեդոնացիներին՝ Սպիրովը կոչ է անում. «Եղբայրական ձեռք մեկնեք հային, և միասնական պայքար, անդադրում, առանց հանգստի, մինչև վերջ... Առա՛ջ»:

Դ. Սպիրովը ցասումով է պատկերում 1896-ին Կ. Պոլսում տեղի ունեցած հայկական ջարդերի ու թալանի ցնցող տեսարանները և հավաստիացանում, որ այդ ողբերգական իրադարձությունները կատարվել են սուլթանի հատուկ հրամանով և իրագործվել թուրք ոստիկանության, բանակի սպաների ու զինվորների, ինչպես նաև կողոպուտով ու անառակությամբ զբաղվող հանցագործ տարրերի կողմից: Ուստի, Սպիրովը ջատագովում ու արդարացնում է կոտորածների ընթացքում պոլսահայ որոշ հայրենասերների ինքնապաշտպանական հանդուգն գործողությունները: Անվանի հրապարակախոսը պատշաճ տեղ է հատկացրել նաև հայ հեղափոխականների կողմից Օտոմանյան բանկի բռնագրավման աղմկալի դեպքերին:

Դ. Սպիրովը հանգամանորեն անդրադառնում է 1893-1894 թվականներին Սասունում՝ Տալվորիկում, Սեմալում, Շենիկում, Գելիեգուզանում և Անդոք լեռան բարձունքներին ապաստանած հայ գյուղացիության ինքնապաշտպանական, դիմադրական կռիվներին, հիշատակելով նաև այդ շարժումների կազմակերպիչներից մի քանիսի, այդ թվում նաև Միհրան Տամատյանի, Մարգար վարժապետ Ամրոյանի, հայդուկապետ Գևորգ Չաուշի և այլ նվիրյալների անունները: Այս և նման տեղեկությունների մի զգալի մասը Սպիրովը քաղել է «Թայմս» թերթից, որի թղթակիցը (էմիլ Դիլոնը-Կ. Ճ.), չնայած օսմանյան կառավարության խստագույն արգելքներին, կարողացել էր թափանցել այդ վտանգալի վայրերը և, ամիսներ ապրելով այնտեղ, ականատես եղել հայերին վիճակված ողբերգական իրադարձություններին:

Դ. Սպիրովը խոր վերլուծության է ենթարկում ու դատապարտում թուրքական ցեղերի նողկալի վերաբերմունքը քաղաքակիրթ աշխարհի հանդեպ, նկատելով, որ՝ չնայած թուրքերը դարեր առաջ տիրացել են Բյուզանդիային, ապա և եվրոպական մի շարք երկրների, սակայն, շփվելով նրանց տնտեսական կյանքին և այս կամ այն չափով առնչվելով նրանց լուսավորությանն ու մշակույթին, ոչ մի հոգևոր կամ մշակութային արժեք չեն կարողացել կամ չեն ուզեցել յուրացնել, մնալով նույն բարբարոս ու վայրագ ցեղը, արժանանալով ստրկացված ժողովուրդների ատելությանն ու արհամարհանքին: Դ. Սպիրովի կարծիքով, կրոնական մոլեռանդությունն է գլխավոր ազդակներից մեկը, որ թուրքական ցեղերին դատապարտել է հետամնացության, ընչաքաղցության ու խավարի: Հեռանկարում նույնպես Սպիրովը թուրքերի ցեղային նկարագրի ոչ մի բարեփոխում կամ ազնվացում չի նկատում: Ըստ նրա՝ ամենակրթված թուրքի էության մեջ ծանրորեն նստած է կրոնական մոլեռանդության մոլ-

6313

լագարության հասնող մրուրը, որն ամեն րոպե կարող է նրան մղել ծայրահեղ բարբարոսության ու անասելի դաժանության: Եվ որպես կենդանի օրինակ, հեղինակը փորձում է բնութագրել «մեծ մարդասպանի»՝ արյունարբու սուլթան Համիդի անմարդկային, այլասերված, դաժան ու արգահատելի կերպարը:

Դ. Սպիրովն անկեղծ համակրանքով է տոգորված հայ ժողովրդի ազատագրական ձգտումների նկատմամբ: Նա գտնում է, որ օսմանյան բռնակալության ճիրաններում բզկտվող հայ ժողովրդի փրկության միակ ուղին հեղափոխությունն է: «Հայկական հեղափոխությունը,- գրում է նա,- միայն առերևույթ է դադարել, իսկ իրականում այն եռում է ինչպես ստորերկրյա հրաբուխ, որպեսզի մի օր ժայթքի առավել մեծ ուժգնությամբ: Այո՛, ընդերքում այն շարունակում է և պիտի շարունակի եռալ այնքան ժամանակ, մինչև հայերը նվաճեն իրենց իրավունքները»:

Այս իսկ առումով Սպիրովը հետաքրքիր ընդհանրություններ է հայտնաբերում հայ, բուլղար, հույն, մակեդոնացի և կրետացի ժողովուրդների պատմական ճակատագրի միջև և կոչ անում համագործակցել ու միասնական ուժերով ծառանալ օսմանյան բռնատիրության դեմ:

Հեղինակը քննադատության է ենթարկում եվրոպական մեծ տերությունների զայրացուցիչ անտարբերությունը հայ ժողովրդի դժնի ճակատագրի հանդեպ, մերկացնելով ոչ միայն թուրքական դիվանագիտության զազրելի դավերը, այլև սուլթանին ակնհայտորեն հովանավորող եվրոպական մեծ տերությունների քաղաքական խարդավանքները: Կ. Պոլսում և այլուր հայերի նկատմամբ օրը ցերեկով կատարված հանցագործությունների առթիվ Սպիրովը անարգանքի սյունին է գամում «քաղաքակիրթ» Եվրոպային, որը Թուրքիայի հանդեպ իր դիվանագիտական խաղերը ծրագրավորում և շահարկում է քաղաքական ու տնտեսական նպատակներով: Նա վրդովված գրում է. «Դժբախտ հայ ժողովուրդ: Խայտառակությունն ամոթ այս դարին, որն ապրում ենք, ծաղր ու ծանակ քաղաքակրթության համար: Խայտառակությունն Եվրոպային, քանզի երկրի երեսից ոչնչացվում է մի ամբողջ ժողովուրդ»:

Դ. Սպիրովի գիրքը հարցադրումների ու մեկնաբանությունների սրությամբ, որոնք վերաբերում են ոչ միայն սուլթանի և օսմանյան կառավարության ոճրապարտ քաղաքականությանը, այլև եվրոպական մի շարք երկրների նվաստալի ու հովանավորչական միտումներին, մեծ աղմուկ բարձրացրեց Բուլղարիայում, ուստի բուլղար կառավարող շրջանները «նորին գերազանցություն սուլթանին վիրավորանք հասցնելու» պատրվակով Սպիրովի գրքի նկատմամբ դատավարություն սարքեցին և նրա հեղինակին դատապարտեցին վեցամսյա բանտարկության, հանգամանք, որն առավել սաստկացրեց կառավարության զգուշավոր քաղաքականությունից դժգոհ տարրերի զայրույթը: Բուլղար ժողովրդի ազ-

գային հեղափոխության ու ազատասիրական ավանդույթների պաշտպան «Օսվոբոժդենիե» թերթն այս առթիվ գրում էր. «Դատապարտել Սպիրովին, միևնույն է, թե թքել անցյալի և բուլղար ժողովրդի իդեալների վրա, ոտնատակ անել ազատության համար մարտնչող մեր հերոսների հիշատակը»:

Այսպիսի ջերմ ու աշխույժ արձագանք է գտել Բուլղարիայում հայրենասիրությամբ ու հումանիզմով տոգորուն և հատկապես օսմանյան բռնատիրության դեմ ատելության ու ընդվզումի տրամադրությամբ շնչող այս գիրքը, որի արտահայտած վեհ ու համարձակ գաղափարները համահունչ են հայ ժողովրդի ու նրա նվիրյալների ազատախոհ ձգտումներին: Դ. Սպիրովի «Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը» գրքույկը կա ու կմնա որպես անցյալ դարավերջին հայերի նկատմամբ օսմանյան թուրքերի գործած անմարդկային ոճիրները դատապարտող հուշարձան[1]:

Կ. ԵՒՆԳՈՉՅԱՆ

1. Տառերով ծանոթագրությունները հեղինակինն են, թվանիշերովը՝ թարգմանչինը:

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԸ

«Բ. Դռան հաղորդագրությունը, թե հայերն այսօր ինչ-որ հեղաշրջում են նախապատրաստում, զուտ խաբեություն է: Այս լուրն անվստահությամբ ընդունվեց մեծ տերությունների կողմից: Ընդհակառակը, դա կասկած հարուցեց, որ *թուրքերն են կոտորածներ սարքում Սկյուտարի արվարձանում: Բանտերում բազմաթիվ հայեր են սպանված և կամ տվից տանջահարված: Կրետեի ռազմաճակատից այստեղ եկած վիրավոր թուրքերը ներկայացվում են որպես հայերի զոհեր...»*[2]:

(Հեռագիր՝ քաղված «Ֆիգարո» թերթից)

«Երեկ մեծ տերությունների կողմից հայտագիր ներկայացվեց Բ. Դռանը: Պարզվեց, որ պատասխան նոտայում չեն ժխտվում Բ. Դռանը ներկայացված մեղադրանքները (23-ը սեպտեմբերի, 1896 թ.): *Դեսպանորդական հայտագիրը հավաստում է այն անվիճելի իրողությունը, թե հրոսակախմբերին առաջնորդել են ոստիկանությունն ու զորքը* (ի՞նչ ավելի խիստ դատավճիռ բոսֆորյան հարեմական սանին.-*խմբ.*): Եթե բազմաթիվ մուսուլմաններ վիրավորվել են, դա վկայում է այն մասին, որ ավազակախմբերի ղեկավարությունը կենտրոնացված չի եղել: *Անկախ սոսկալի կոտորածներից, հայտագիրը ներկայացնողները ծանոթ են նաև թալանի ու բռնաբարության բազմաթիվ դեպքերի: Ջարդերի արագ դադարեցումը (իբր թե 38 ժամից հետո՝ արագ է) ապացուցում է, որ ավազակախմբերը գտնվել են քաղաքացիական և զինվորական իշխանությունների ենթակայության ներքո*: Հաստատվում է նաև, որ տականքների սանձարձակությունները դադարեցնելու հրամանը *մեծ ուշացումով* հայտարարվեց. այն պետք է շատ ավելի շուտ տրվեր: Բ. Դուռը պատասխանատու է լինելու որոշ նոր դեպքերի համար (իբր հները քիչ են): Նոտան ավարտվում է, հայտարարելով, թե վեց մեծ տերությունները չեն ցանկանում մասնակցել վերոնշյալ փաստերի հետագա քննարկումներին...»:

(Կ. Պոլսի սպանդից հետո մեծ տերությունների կողմից Բ. Դռանն ուղղված նոտայից)

«Հիմա ժամը 10-ն է, իսկ ամբոխի մոլեգնությունը դեռ իր բարձրակետին չի հասել: Զոհերի թիվը հասնում է մի քանի հարյուրի, իսկ ծերբակալվածներինը՝ հազարների: Ծովի մակերևույթին արդեն դիակներ են լողում: Երեկ կախեցին մի քանի հոգու, իսկ զնդաններում քայքայվում է հայ երիտասարդության առողջությունը: Գիշերը կոտորածներ են տեղի ունեցել քաղաքի շատ թաղամասերում, իսկ քրդերը, սոֆտաները[3] և մոլլաները[4] անդադար զբաղված են սպանություններով ու կողոպուտով: Երկու օր է, ինչ հարյուրից ավելի հայեր, կարծեցյալ հեղափոխականներ, խոշտանգվում են թամերլանյան եղանակով: Երեկ գիշեր Քասըմ փաշայի թաղը ահավոր ջարդերի թատերաբեմ էր դարձել: *Երեք հարյուրից ավելի սպանվածներ կան*, իսկ ծերբակալվածները գլխատված են՝ դեռևս ոստիկանատուն չհասցված: Շատ խանութներ, տներ ու կրպակներ թալանված են: Պատվազրկված են բազում կանայք, երեխաներ ու աղջիկներ:

Ոստիկանությունը ուժեղացված է ոստիկանի համազգեստ հագած զինվորներով ու սպաներով: Մի խոսքով՝ սոսկալի է, սոսկալի...»:

«Մի լրագրողի հետ զրուցելիս, հայոց պատրիարք Իզմիրլյանն ասել է, թե հայ ժողովուրդը երկարատև հալածանքների ու սարսափելի կոտորածների հետևանքով, որ իրագործվեցին հայկական նահանգներում, ծայր աստիճան հուսալքված է: Մուսուլման բնակչությունը *ուլեմների*[5] *մոլեռանդ քարոզների* ազդեցությամբ անընդհատ գրգռվում ու հրահրվում է բռնությունների: Կ. Պոլսում ահավոր դեպքերի միայն առաջին օրերին սպանվել է *չորս հարյուր երեք մարդ*, որոնց դիակները թաղելու համար հանձնվել են Գում-Գափուի հայոց պատրիարքարանին: Պատրիարքի հաշվումներով զոհվածների ընդհանուր թիվը հասել է 5780-ի: Յոթ հարյուր յոթանասուն հոգի անհետ կորել է: Բոլոր ծերբակալվածները բանտերում ենթարկվում են ահավոր խոշտանգումների: Զնդաններում շատերը խեղդամահ են արված կամ թունավորված»:

«Տրապիզոնում պատկերը շատ ավելի սոսկալի է: Թուրքական կառավարական աղբյուրների տվյալներով զոհվածների թիվը հասնում է 7500-ի: Սակայն իրականում այս թիվը շատ ավելի մեծ է հենց այն պատճառով, որ ներկայացված է *կառավարական շրջանների* կողմից»:

«Օտարերկրյա բժիշկները հավաստում են, որ սպանվածների վերքերը *բացառապես թիկունքից են հասցված՝ յաթաղանով կամ երկաթյա մահակներով*, իսկ ոմանք սպանված են հրացանի գնդակից: Ալիքները անընդհատ ափ են նետում դիակներ: Դրանք ահավոր այլակերպված են: Սոսկալի՜ է, սոսկալի...»:

(Պատկերներ Կ. Պոլսում անցյալ տարվա (1895 թ.) կոտորածների պատմությունից, Գում-Գափու):

Վերջերս ահավոր դեպքեր պատահեցին Կ. Պոլսի քարաժայռի որջում: Կ. Պոլսի փողոցները ողողվում են անպաշտպան հայերի արյունով: Քրիստոնեական արյուն, մի ամբողջ ժողովրդի արյուն: Նորածին մանկիկների, անպաշտպան կանանց արյունը հեղվում է վայրագ անհավատների ձեռքով, այն էլ ասիականության կենտրոնում՝ Կ. Պոլսում, որտեղ ի փառս Մոհամեդ մարգարեի և ի պատիվ 120 հազար առաքյալների բուժվում և սնվում են երկու միլիոնից ավելի շներ: Ասիական տականքներից միայն մի քանի մղոն այն կողմ՝ Կ. Պոլսում, եվրոպական մեծ տերությունների ներկայացուցիչների աչքի առջև, որոնք պարծենում են իրենց քաղաքակրթությամբ, մարդասիրությամբ ու քրիստոնեությամբ, գազանաբար մորթված են 20000-ից ավելի հայեր: Ամո՛թ, ամո՛թ, ամո՛թ Եվրոպային, ամոթ 19-րդ դարին. գիտության, առաջադիմության լույսի, մարդկային թևածող մտքի, լուսավորության այս դարում ոչնչացվում է մի ամբողջ ժողովուրդ, պատմականորեն ազնվական ժողովուրդ, որ առաջինն է ընդունել լույսն ու քրիստոնեությունը, և որին ինքը՝ Պողոս առաքյալն է քարոզել Ավետարանը: Ամոթ Եվրոպային, որ այդպես անվրդով նայում է, թե ինչպես իր հայացքի առջև ոչնչացվում է այն ժողովուրդը, որը դարեր շարունակ տնքացել է արևելքի ամենաբիրտ լծի տակ, և այդպես, ճակատագրով հայտնվել գազանների մեջ ու դարձյալ կարողացել է պահպանել իր ազգությունը, դավանանքը, լեզուն, քրիստոնեությունը: Բացաստի, դեռ մեր թվարկության առաջին դարից, հայ ժողովուրդը եղել է քրիստոնեության առաջատարը, այն էլ ասիական մոլեռանդների՝ Մոհամեդի և Ալիի վայրագ հետնորդների աքցանի մեջ: Իսկ ի՞նչ է անում Եվրոպան Կ. Պոլսում տեղի ունեցող մարդկային ահավոր սպանդի դեմ: Ի՞նչ է անում սուլթան Աբդուլ Համիդը, 700 կանանց ասիական հարեմի այդ տիրակալը, որն ի հեծուկս 19-րդ դարի և քաղաքակրթության, գովաբանում է իր մարդասիրությունը: Ի՞նչ է անում այդ մեծ փաթթոցավորը, որի աչքերի առաջ, մայրաքաղաքում գազանավարի մորթում են անմեղ մարդկանց, իր իսկ հպատակներին, որոնց ավելի քան 700 տարի կթելխուզել է իր կանաչ պալատի շքեղության և իր հարեմի հուրի-փերիների պահպանության համար: Ի՞նչ միջոցներ է ձեռնարկել, որպեսզի կասեցնի Մոհամեդի հետնորդների, իր հավատարիմ ասիացիների և հավատարիմ մուսուլմանների՝ մի անպաշտպան ժողովրդի հանդեպ գործադրած անօրինակ ջարդերն ու կոտորածները: «Ես մի մարդ եմ, որ անկարող է որևէ մեկին չարիք պատճառել: Ես խուսափում եմ նույնիսկ ոտք դնել մրջյունի վրա,- ասել է ասիական խալիֆը հանգուցյալ հայոց պատրիարք Ներսեսին: Իսկ, իմիջիայլոց, ինչպես անցյալ տարվա կոտորածները Կ. Պոլսում, Տրապիզոնում և, առհասարակ, ամբողջ Հայաստանում, այնպես էլ այս տարվանները՝ սուլթանական պալատի գործն են:

Անցյալ տարվա դեպքերը ուսումնասիրեցին և հավաստեցին եվրոպական մեծանուն թերթերի հատուկ թղթակիցները, որոնք Հայաստան էին գործուղվել այդ իսկ նպատակով, այսինքն՝ պարզելու այնտեղի խեղճ հայերի բարբարոսական և բարբուղիմեոսյան ջարդերը քրդերի կողմից, իսկ առավել էական է «Թայմս» թերթի թղթակցի հաղորդումը, թե «կոտորածներն» իրագործվում էին պալատի հատուկ հրամանով, և որ այդ գործում քրդերի հետ մրցակցել են «համիդիե» կոչված սուլթանական կայսերական գվարդիայի գնդերը: Այսօր Կ. Պոլսում տեղի ունեցող բոլոր ջարդերը, գազանություններն ու ասիական-մանաֆական[6] վայրագ բարբարոսությունները հաստատում են նաև «Բալկանիկ գործակալության» հեռագրերը. այդ ամենը գալիս է «ազնիվ» սուլթան Համիդի, սուլթաններիի որդու, Յլդըզ-Քյոշկ պալատի տեր ու տիրակալից, որտեղ սուլթանը ամենայն անվրդովությամբ ու խալիֆայական նենգությամբ հաշվում է իր կյանքի համրիչի հատիկները, թաղված արևելյան-ասիական հեշտանքի մեջ, դեռևս անհասանելի որևէ մահկանացուի, նույնիսկ՝ որևիցե թագավորի: Արքայական այս պալատից սուլթանը հանգիստ դիտել է կանանց ու երեխաների, մի անպաշտպան ժողովրդի, այդ ահավոր սպանդը, որը մեղավոր է ճանաչվում միայն իր մարդկային իրավունքները պաշտպանելու համար, քանզի հարյուրամյակներ շարունակ բգկտված ծաղրվել, հալածվել է ասիացու յաթաղանից, ենթարկվել այնքան անկարագրելի զրկանքների ու տառապանքների: Եվ երբ խեղճ հայերի հուսահատության ճիչը հասել է երկինք[ա], երբ հազարավոր զոհերի ու կանանց ողբագին կանչը օգնություն էր աղերսում, այնժամ օսմանյան խալիֆը Յլդըզ-Քյոշկի իր պալատում հանգիստ ծխել էր թեհրանյան բամբուկով լցված իր ոսկե նարգիլեն: Դրսից երևացող ու փարթամ կանաչի մեջ սուզված քաղաքը՝ Բեշիկթաշի հավերժ կանաչազարդ բլրի վրա, որպես պատանեկան երազ արտացոլվում է արևելյան ջինջ կապույտով ողողված Բոսֆորի մեջ: Իսկ ներսը, արևելյանը արևմտյան շքեղության հետ միահյուսված, ողողված է մի այնպիսի հարստության, պերճանքի ու վեհության մեջ, որը դեռ անծանոթ է որևէ տիրակալի: Այստեղ է բերված ամբողջ Ասիան և Եվրոպան, իսկ կայսերական հարեմում հարյուրավոր հուրիներ ցուցադրում են իրենց հեշտանքն ու մեղկությունը, կարապի պարանոցները՝ թաղված ընտիր մարգարիտների մեջ, իրենց ալաբաստրե թևերը՝ զարդարված թանկագին սուտակե ապարանջաններով, առանց մտահոգվելու, որ այդ մարգարիտներն ու սուտակները այլ բան չեն, եթե ոչ կատաղի շներից սպանված դժբախտ քրիստոնյա հարկատուների բյուրեղացած արցունքներ ու արյան կաթիլներ՝ քամված ամենաանմարդկային, ասիական վայրի միջոցներով: Ինչպես խալիֆի մայրաքաղաքում՝ ասիական Ստամբուլում, այնպես էլ գավառներում, որոնք ներկայացնում են բարբարոսական, բռնատիրական տիրապետությունը, պատուհասը, խոլերան ու ժանտախտը անպակաս են քրիստոնյա ժողովուրդների համար, նրանք դժբախտություն ունեն պատկանելու նեխած, փտած, մինչև ուղն ու ծուծը քայքայված օսմանյան պետությանը, որը համոթ և ի խայտառակություն 19-րդ դարի, ամրապընդվում ու ղեկավարվում է քաղաքակրթված Եվրոպայի կողմից. այստեղ մորթվում ու ոչնչացվում են քրիստոնյաները, որոնք լույս աշխարհ չեն տեսել ասիական այս կեղտոտ, զզվելի, գազանանման ազգության ճիրաններն ընկնելուց ի վեր... Ու դեռ գտնվում են կիրթ ու լրջմիտ եվրոպացիներ, որոնք գովաբանում են այս նեխած պետությունը, ինչպես, օրինակ, պատմաբան Լամարթինը, այդ խարդախ խաբեբան ու մարդակերը, որը սուլթանի պալատը նմանեցնում է Մոհամեդի իսկական դրախտի՝ բերված իրանյան բարձունքներից, և որն իբր կոչված է երջանկություն ու բարօրություն պարգևելու արևելյան ժողովուրդներին... Սակայն Եվրոպան, կաշառված զանազան լամարթինների, վուդսպաշների, վամբերովների և սրանց նման տգրուկների ու մարդկության վիժվածքների՝ սուլթանին նվիրած ներբողներով, այդուհանդերձ, արդեն գիտե, թե ինչ է նշանակում թուրքական բռնակալություն, թուրքական իշխանություն, թուրքական բռնություն, թուրքական բարբարոսություն...

Այո, գիտե, քանզի նրա եվրոպական պարանոցը ևս բազմիցս «շոյել» է թուրքի յաթաղանը: Սակայն ասիական փաթթոցավորը խրախճանքի ու հաճույքի համար հազարներով կոտորում է իր հպատակներին, և եթե նրա բարբարոսական բնազդը թելադրում է երկրի երեսից բնաջնջել մի ամբողջ ժողովուրդ, ապա Եվրոպան, մարդասեր և քրիստոնյա Եվրոպան, հարյուրապատիկ հանցավոր է, առավել այպանելի, քանի որ տարիներ շարունակ հովանավորում է այդ նեխած բռնակալին: Ինչի՞ց է կազմավորվել այս մանաֆական պետությունը, այս պատմական աղբակույտը, որը համոթ ներկա դարի՝ կոչվում է Օտոմանյան կայսրություն: Եվ ինչեր չտեսան, ինչպիսի կորուստներ կրեցին քրիստոնյա ժողովուրդները, որոնք դժբախտություն ունեցան ընկնելու աշխարհի ամենազզվելի ու ամենաբռնակալական լծի տակ: Կարո՞ղ է, արդյոք, այս ջինջ երկընքի տակ ապրող մարդը, ինչպիսի արտակարգ կարողություններով էլ օժտված լինի՝ նկարագրել այն բոլոր ասիական կեղտոտությունները, որ այս բարբարոսների, այս վայրագ տականքների հանդես գալուց հետո մինչև օրս կատարվել են քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ընդհանրապես և հայ ժողովրդի նկատմամբ՝ մասնավորապես: Մարդկային երևակայությունն արդյո՞ք ի վիճակի է ստեղծել ասիական վայրագությունների թեկուզ մի կենդանի պատկեր... Այս գավառներում, որոնք մի ժամանակ կազմում էին ասիական թագավորությունը, և այն հողերում, որոնք ցայսօր մնացել են մոհամեդական կիսալուսնի տակ, մարդկային որքա՜ն արյուն է թափվել մարդակերպ գազանի ու անհավատի ձեռքից...

Ամբողջ գավառներ անմարդաբնակ է դարձրել այս եկվորը, ամայացրել է բարեբեր դրախտային վայրերը, և այնտեղ, ուր ոտք է դրել այս անհավատը, այլևս չի կանաչել, ամեն ինչ վերածվել է ավերակների, անջրդի սահարյան անապատների: Ապացուցված պատմական իրողությունները, ինչպես և ժողովրդական ավանդույթները վկայում են, որ Բալկանյան թերակղզու շատ վայրերում տարիներ շարունակ աքլորականչ չի լսվել, չի հնչել ոչ մի մարդու ձայն: Ամբողջ գավառներ այս բարբարոսների ձեռքերով ամբողջովին վերածվել են ահավոր սպանդանոցների: Սակայն մի կողմ թողնենք եկվորների հին բարբարոսությունները, որոնք, ինչպես ասացի, անհնար է մանրամասնորեն նկարագրել: Առանց այդ էլ մենք նման խնդիր չենք դրել մեր առջև, որը նաև վեր է մեր ուժերից: Թեկուզ հիշենք վերջին մեկ հարյուրամյակի ընթացքում ասիական այս պետության գործած խժդժությունները, որոնք իրենց մանրամասների մեջ կազմում են մի ցնցող պատկեր: Եվրոպան գիտի Լիբանանում տեղի ունեցող բնաջնջումը, Կրետեում, Էրզրումի շրջանում քրիստոնյա լազերի ջարդերը (որոնց մեծ մասը, շուրջ 70000 հոգի, թուրքական յաթաղանից փրկվելու համար 3-4 տարի առաջ ընդունեցին իսլամը), կոտորածները Նիշի (այժմ Մակեդոնիա-*թարգմ.*), Պիրոտի և Լոմի շրջաններում, Էպիարում և Թեսալիայում, ջարդերը Պազարջիկում՝ զավերայի ժամանակ, որտեղ բուլղարները ևս ընդունեցին մուսուլմանություն, որպեսզի փրկվեն, կոտորածները Վիդինի շրջանում, ջարդերը Մոսկոպոլում և այլ տեղերում, բոլորը հիմա դժվարանում եմ մեկ-մեկ թվարկել: Բայց որտե՞ղ կոտորածներ չեն եղել: Իսկ Բաթակի, Պերուշտիցայի ջարդե՞րը: Սակայն, կրկնում եմ, հնարավո՞ր է արդյոք նկարագրել թուրքական բոլոր կոտորածները, այս վայրագ ու դաժան ժողովրդի գործած բոլոր ջարդերը, որոնք կազմակերպել է անբարոյականությունից ու անառակությունից նեխած Օտոմանյան քարացած և բարբարոսական պետությունը: Այն ժամանակ էլ Եվրոպայում կային թուրքասերներ, կար մի մկրտված հրեա՝ Բիկոնսֆիլդ, որը գլուխ էր խոնարհում թուրքական պետությանը, որը Բատակի և այլ վայրերի բուլղար նահատակներին նայում էր արհամարհանքով ու զզվանքով, ինչպես վայել է մի հրեայի: Այն ժամանակ, երբ նրա նման հրեաները արգահատանքով են նայում այստեղ-այնտեղ հրեա ազգի նկատմամբ գործադրված առանձին հալածանքներին, ազգ, որն իր անբարոյականությամբ ու սրիկայությամբ չի զիջում անատոլյան բռնակալներին, քանզի միշտ էլ եղել է անհավատների դաշնակիցը, նաև այն օրերին, երբ Կ. Պոլսում տեղի էին ունենում խեղճ հայերի կոտորածները, ստոր ու թշվառական հրեաները ցույց էին տալիս հայերի խանութներն ու կրպակները և թուրքերի հետ թալանում, կողոպտում հայերին: Մեր հայրենակիցները լավ գիտեն հրեաների՝ ինչպես 1875, 1876 և 1877 թվականների, այնպես էլ Մակեդոնիայում նրանց նորօրյա լրտեսության մասին: Եվ

այս ողորմելի ու ծույլ ժողովուրդը գանգատվում է հալածանքներից, իսկ վերջերս Սոֆիայում հիմնադրվել է «Հրեական ձայն» ինչ-որ լրագիր, որպեսզի պաշտպանի գործընկեր «խաղաղ» իսրայելական ժողովրդի նելիրական շահերը:

Կա՞, արդյոք, առավել մեծ անպատվություն, քան դառնալ բարբարոսության կամուրջ և օգնական, ոչնչացնելու համար մի ժողովրդի, ապա էլ՝ նրա ունեցվածքն ու խանութները կողոպտելու նպատակով, որը գլուխ է բարձրացրել հանուն մարդկային իրավունքների: Դա ստորություն է ու նվաստացում, որը բնորոշ է միայն հրեությանը: Հրեական պատվախնդրության ու հրեական իրավունքի քարոզիչները պետք է ամաչեն ու գլուխներին մոխիր ցանեն:

***

Առհասարակ, Եվրոպայի վերաբերմունքը այս արյունարբու բռնակալի նկատմամբ, դատապարտելի է վաղուց ի վեր, իսկ ինչ վերաբերում է շնական Ստամբուլում ներկայիս կոտորածներին, ապա Եվրոպան ստանձնել է իսկական բռնակալի դերը: Մի՞թե Եվրոպան, որ հոխորտում է իր քաղաքակրթությամբ ու մարդասիրությամբ, սիրտ չունի: Քրիստոնյա ու քաղաքակիրթ Եվրոպան, որ ավելի քան 60 տարի այնքան ճիգ ու ջանք է թափել, որպեսզի մարդկայնացնի, ոտքի կանգնեցնի, որպեսզի վերակառուցի դարերով բարբարոս այս պետությունը, մի՞թե չտեսավ, չհասկացավ, որ իր ջանքերը հօդս են ցնդում, որ ինչքան ջանում է բարեփոխել այս պատմական աղբակույտը, այն, ի հեճուկս Եվրոպայի ու մարդկության, դառնում է ավելի անհեռատես ու ավելի անպատկառ: Նապոլեոնը Թուրքիային ներգրավեց Եվրոպական դաշնության մեջ, դարձրեց յոթ մեծ տերությունների անդամակիցը միմիայն նրան վերակառուցելու նպատակով, սակայն հիմար մոհամեդական պետությունը, առ ի երախտագիտություն Նապոլեոնին, գլխովին կոտորեց Լիբանանի բնակչությանը... Թուրքիան այս առումով ինչպես Բալկաններում, այնպես էլ Ասիայում չի տարբերվում մի անառակ կնոջից, որը քացի է տալիս, կծում, մորթում է՝ առանց դրդապատճառի և աննպատակ: Ու Եվրոպան հովանավորում է այս փչացած կնոջը: Այսքան ժամանակ մի՞թե Եվրոպան չհասկացավ, որ այդ պատմական աղբից լավագույնս մի երկար ու լայն գերեզման կստացվի: Չհասկացա՞վ նրա նենգ, անատոլաբյուզանդական ու մանաֆական քաղաքականությունը, որ նրա հազարավոր խոստումները, խաթթը-հյումայումները, խաթթը-շերիֆները մի խոշոր զերո են[7]: Լուսավորյալ Եվրոպան չհասկացա՞վ, որ Թուրքիան ու բարեփոխումները տարբեր բաներ են՝ միմյանց հակասող, որ Թուրքիայում բարենորոգում նշանակում է յաթաղան, ջարդ ու կոտորած, կախաղաններ և ծովի հատակ...

Անոթալի ու անպատվաբեր է Եվրոպայի վերաբերմունքը Ստամբուլում տեղի ունեցող սպանդին: Եվ նույն այդ Եվրոպան դեռ հավակնություն ունի մարդասիրական ու կրթված կոչվելու: Երբ ամեն վայրագություն, դաժանություն, որ Փոքր Ասիան կարողացավ ներբերել ասիական Ստամբուլ, երբ բոլոր հիմարներն ու անբանները, քրդերն ու լազերը, մանաֆներն ու ապուշները մինչև ատամները զինված յաթաղաններով, դաշույններով, ունելիներով, մահակներով, երկաթներով, սպանում էին հայերին և թալանում ամբողջ թաղեր, ինչպես այդ տեղի ունեցավ Բերա փողոցում, Եվրոպան ու եվրոպական դեսպանները անվրդով, սառնասրտորեն դիտում էին այս ամենը, բավարարվելով միայն ժամ առաջ կարգ ու կանոն հաստատելու մասին սուլթանին ներկայացրած պահանջներով, այն էլ այն սուլթանին, որն ամեն ինչի պատճառն էր: Կարծես Եվրոպան իր իսկ փորձից չգիտի, թե որքան նենգ է Թուրքիա կոչվող անառակ կնոջ քաղաքականությունը, թե որքան լավ է նախապատրաստված թուրք ժողովուրդը՝ ամուր շաղախված մի ամբողջության մեջ, ժողովուրդ, որը կազմում է մի մարմին՝ միշտ պատրաստակամ լսելու իր տերերին և տառացիորեն կատարելու նրանց հրամանները: Թուրք հոգևորականությունն այն շաղախն է, որը շաղկապում, զոդում է այս կազմալուծված պետության բոլոր մասերը: Այնտեղ, որտեղ առկա է հինգ թուրք (կամ ընտանիք), կա նաև մի մզկիթ և ամենաֆանտաստիկ ուղեղով մի խոջա, իսկ թուրքական կայսրությունում անդադար շրջագայող սոֆտաները Ստամբուլի պետերի լրտեսներն են, այն էլ մոլեռանդ շուն լրտեսներ:

Եվրոպան պետք է մեկընդմիշտ հավատա, որ փուշը երբեք խաղող չի տա, որ «փառաշուք դռան» կամ «դարպասի» (ինչպես անվանում էր Բոգորով պապը)[8] միայն ստվերն հանդիսացող կառավարության կողքին առկա է մի ուրիշ՝ *սոֆտայական կառավարություն*, որը պետության իսկական տերն ու տիրակալն է, և քարոզում է «յոթ պետություն՝ մեկ թագավոր». այն իր ձեռքում պահում է հոգևոր ու բարեգործական ընկերությունների, դերվիշների, վանքերի ու մզկիթների հարուստ եկամուտները, տրամադրության տակ ունի Կ. Պոլսի հրացանների ու թնդանոթների զինանոցները և հանգիստ գործում է պաշտոնական կառավարության շվաքի տակ՝ իրականացնելով իր նվիրական գաղափարը՝ գլխովին ոչնչացնել *երկրագնդի բոլոր գյավուրներին*: Բարձրագույն Դուռը այս կառավարության ձեռքին մի զենք է Եվրոպային խաբելու և ժամանակ շահելու համար, հնարավորություն ընձեռելու սոֆտայական կառավարությանը, որպեսզի գործի եվրոպական պետությունների սնամեջ կարգադրությունների դեմ: Այս կուսակցությանն է պատկանում նաև ինքը՝ սուլթանը, բոլոր թուրք նախարարները՝ Ռիֆատ փաշայի գլխավորությամբ և փոքր կամ մեծ պաշտոնյաները, որոնք ղեկավարում են Թուրքիան: Սոֆտայական կառավարության անդամները *մի տեսակ նիհիլիստներ են*: Նրանց

նշանաբանն է՝ մեզնից հետո ջրհեղեղ, իսկ իդեալը՝ էպիկուրիզմն է: Նրանք, ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ ծայրամասերում հայդուկների[9] ու գող-ավազակների հովանավորներն են: Նրանք, առհասարակ, անբարո թուրքերի, ամեն տեսակ այլասերված տարրերի հովանավորներն են և հասարակության թշնամին: Նրանք զոր ու գիշեր մի բան են քարոզում, և նրանց նվիրական ցանկությունն է *սանջակի զարգացումը և շերի*[illegible] հետևաբար, դրա հետ նաև՝ գյավուրների բնաջնջումը:

Այս անօրինակ մոլեռանդները միայն մի կիրք ունեն՝ *կողոպուտը*, որով նրանք քանդեցին մի ժամանակ բավական հզոր ասիական պետությունը: Նրանք էին, որ երկիր ներբերեցին սնանկությունը, որովհետև պարտազանցների, խաբեբաների և ավազակների բարեկամն ու հովանավորներն են: Այդպիսիները ծույլերի ու ավազակների գործակիցներն են, առաջադիմության, առևտրականների ու բոլոր ունևոր մարդկանց հակառակորդներն ու մահացու թշնամիները:

Այսպիսին են այդ անձնավորությունները, որոնք այսօր տիրում են բարբարոսական թուրքական կայսրության մնացորդին: Եվրոպական և Բեռլինի համաժողովը հենց սրանց պատվիրեց բարեփոխումներն այն գավառներում, որոնք չար բախտի բերումով մնացել էին նրանց ճիրաններում: Սակայն ասիական մոլեռանդները, որոնք կարգ ու կանոնից ու բարեկեցությունից ոչինչ չէին հասկանում, թուրք ֆանատիկոսների ուժն ու զորությունը օգտագործեցին ամեն տեսակ բարենորոգումների դեմ, մարդկային ամեն տեսակի առաջադիմության դեմ: Բայց Եվրոպան չէր ուզում հասկանալ, որ *շիբից շաքար չի ստացվի*, որովհետև ավելի մտահոգված էր այլասերված ու քայքայված Օտոմանյան կայսրության վերականգնումով, քան կոտորածները կանխելու ու խեղճ քրիստոնյաներին որոշ իրավունքներ տալու խնդրով, քրիստոնյաներ, որոնք մնում էին իր իշխանության տակ և որոնց ամեն ժամ շան պես մորթում են, կախում, խոշտանգում ու թալանում: Նրանք Բեռլինի դաշնագրի մեջ գրավ թողեցին մի քանի հոդվածներ, սակայն դրանք միջոցներ էին քրիստոնյաներին ավելի լավ ոչնչացնելու համար: Քանզի զանազան Բիկոնսֆիլդյաններ, Անդրաշեյաններ մեծ հոգսեր ունեին և հետամուտ էին Վալախիայում ու Սերբիայում հրեաների համար քաղաքական իրավունքներ նվաճելուն, գոնե այն իրավունքները, որոնք իրենք էին նախատեսել և ստորագրել Բեռլինի դաշնագրության մեջ: Եվ անցան 20 տարիներ այդ դաշնագրությունը ստորագրելուց, իսկ թուրքերի կողմից քրիստոնյա հպատակների կոտորածը շարունակվում է: Եվրոպան լսու՞մ էր արդյոք այդ դժբախտների տնքոցները: Մակեդոնիայում ու եվրոպական մյուս գավառներում, որոնք բեռլինյան դաշնագրից հետո ուղղակի մնացին բոսֆորյան բռնակալի իշխանության տակ, ինչպես նաև Փոքր Ասիայում տիրապետում է ոչնչացման համակարգը: Քսան տարի է, ինչ ասիական

ձևով կոտորվում ու հալածվում է Մակեդոնիայի և Հայաստանի բնակչությունը: Ժողովուրդը պլոկվել ու վերածվել է իսկական մուրացիկի: Եվ այս ամենի վրա «մարդասիրական» ու քրիստոնյա Եվրոպան նայում է սառնասրտորեն: Եվ եթե 20 տարի առաջ չէր հավատում քրիստոնյաների գանգատներին, հիմա, 20 տարի անց, թուրքերի այսքան անկարգություններից ու քրիստոնյաների արյունը թափելուց հետո, մի՞թե Եվրոպան նորից անզգա է մնալու, մի՞թե եվրոպական ներկայացուցիչների աչքի առաջ այսքան բացահայտ կոտորածներից հետո, այն էլ փադիշահի մայրաքաղաքում, ասիական այս բռնակալն անպատիժ է մնալու: Իրավիճակը, որն առկա է ասիական թուրքական կայսրության մնացորդում, արժանի է եվրոպական կառավարությունների ծայրաստիճան լուրջ ուշադրությանը, եթե նրանք ունեն մի փոքր մարդասիրություն, քանի որ ասիական այս պետությունը հակված է տապալվելու, քայքայվելու: Այդ են վկայում վերջերս Կ. Պոլսում անպաշտպան հայերի կոտորածները: Լուսավորյալ Եվրոպայի պարտականությունն է կանխել այս փլուզումը, որպեսզի նրա փլատակների տակ չմնա այսքան քրիստոնյա բնակչություն: Եվ ստոր ու արգահատելի կդառնա Եվրոպան, եթե սառնասրտորեն նայի արևելքի դեպքերին ու դեռ ձգտի ուժի դիրքերից հովանավորել օսմանյան տիրապետության գոյատևումը և անտարբերությամբ ու նյութական, շահադիտական նպատակներով գնահատի զարգացող իրադարձությունները: Եվ, առավել ևս, եթե Եվրոպան չազատագրվի այս մոլորությունից, իր դիվային քաղաքական և տնտեսական շահագրգռություններից, գոնե իր հնարամտություններով թող չմիջամտի աղայի գերիշխանության տակ մնացած ժողովուրդների գործերին, ինչպես այդ անում է Կրետեում: Թուրքական կայսրության ժողովուրդները պահանջում են ազատություն և արդարություն, և ինչ միջոցով էլ լինի, վաղ թե ուշ նրանք դա ստանալու են: Թուրքական տիրապետությունն ու բռնակալությունը այլևս ատելի են դարձել: Դա պիտի որ լավ իմանան եվրոպական պետությունները: Եվ եթե Եվրոպան չի ուզում հետևություն անել թուրքական լծի տակ հեծող քրիստոնյաների տառապանքներից ու արցունքներից, ավելի վատ իր համար:

Զարմանալին այն է, որ անցյալի ու ներկայիս Եվրոպայում թուրքական տիրապետության ամենացայտուն պաշտպանները՝ Անգլիան և ջիուդական Ավստրիան (իսկ հիմա ցավալի է, որ Թուրքիայի պաշտպանների առաջին շարքում է նաև «ուղղափառ» Ռուսաստանը, որն իրեն ներկայացնում է Թուրքիայի ռայայի հովանավորն ու պաշտպանը), ճաշակել են և լավ գիտեն, թե ինչ է նշանակում թուրքի յաթաղանը: Անգլիացիները, այս ծայրահեղ թրքասերները, բավական լավ լպստեցին Աֆղանստանի թուրքերի բրդոշը: Բացի այդ, նրանց մի քանի սպաները համտես արեցին նաև թուրքական Սոդոմ-Գոմորը (ինչպիսին էր նախանցյալ աշ-

նանը Գալիպոլիի սպաների հետ պատահած դեպքը): Եվ երբ «ազնվական» Բիկոնսֆիլդը ուրախությամբ ձեռքերն էր շփում, որ փրկել է թուրքական կայսրությունը, ու երբ ուրախությամբ կարդում էր «վերածնված» նոր թուրքական կայսրության քրիստոնյաների ոչնչացման, այրվող տների, մորթված տղամարդկանց, ռայայից անարգված կանանց ու երեխաների մասին, այն ժամանակ Աֆղանստանի թուրքերը, հրահրված Կ. Պոլսի սոֆտաներից, նույն այդ վայրերում ողջ-ողջ այրում էին անգլիական գաղութարարներին: Չխոսենք Հնդկաստանի մասին, որտեղ, չնայած անգլիական գերիշխանությանը, երբեմն կատարվում են զուտ ասիական եղանակով կոտորածներ: Նույնը Ավստրո-Հունգարիայում. այն մաջարները, որոնք մի ժամանակ ոսկեզօծ թրեր էին նվիրում Սերդար էկրեմին՝ Արևելքում քրիստոնյաներին, առավել ևս սլավոններին կոտորելու համար, իրենց կաշվի վրա թուրքական նենգությունն ու թուրքական մոլեռանդությունը զգացին այն ժամանակ, երբ թուրքերը զավթեցին Բոսնիան ու Հերցոգովինան: Ահա թե մի պատմաբան ինչպես է նկարագրում ջարդերը՝ Բանյա-Լուկայի հիվանդանոցում:

«Ավստրիական զորքերը առանց կռվի մտան այս քաղաքը: Քրիստոնյա բնակչությունը, կաթոլիկները և ուղղափառները նրանց ընդունեցին ուրախությամբ, շատ քիչ թուրքեր, այն էլ ստորին խավերից, միացան նրանց: Երկրորդ օրը ավստրիական զորքերն առաջ շարժվեցին՝ քաղաքում թողնելով միայն մի վաշտ: Տասն օր անց սկսեցին Բանյա-Լուկա բերել ավստրիացի և թուրք վիրավորներ. տեղի հիվանդանոցը լցվել էր նրանցով: Իսկ մեկ շաբաթ անց քաղաքի շրջակայքում *հայտնվեցին ապստամբ ջոկատներ: Քաղաքի թուրք բնակչությունը նույնպես զենքը ձեռքին սկսեց դուրս թափվել փողոցները և հարձակվել քրիստոնյաների ու զինվորների վրա:*

Մի օր էլ հիվանդանոցի առջև հայտնվում են մեկ տասնյակ թուրք երևելի քաղաքացիներ և ցանկանում ներս մտնել՝ թուրք վիրավոր զինվորներին այցելելու: Բժիշկները թույլատրում են: Ապա գալիս են ևս երեսուն հոգի, որոնք հիվանդանոց են մտնում *առանց թույլտվության: Սրանք հանում են թաքցրած զենքերը և սկսում մորթոտել ավստրիացի վիրավոր զինվորներին, բժիշկներին, քույրերին, ծառաներին, մի խոսքով՝ բոլոր քրիստոնյաներին, ովքեր պատահում են:* Միաժամանակ, ապստամբները, որոնք թաքնված էին շրջակայքում և պայմանավորված էին տեղի բնակչության հետ, հարձակվում են քաղաքի վրա և սկսում կոտորել *քրիստոնյաներին*»:

Իսկ *Սարաևոյի* գրավման մասին ասում են հետևյալը.

«Կռվի ժամանակ, որը նկարագրեցինք (խոսվում է, թե ինչպես է գրավվել Սարաևոն), հրկիզվել են բազմաթիվ տներ. հրդեհը մեծ ջանքերի շնորհիվ կարողացել են հանգցնել, սակայն քանդել են նաև հրդեհից

հեռու գտնվող շատ տներ՝ պատճառաբանելով, թե իբր կրակը մարելու համար ձեռքի տակ չեն ունեցել հրշեջ պոմպեր և այլ միջոցներ: Բոլոր այն թուրքերը, որոնց բռնել են զենքը ձեռքին՞, հանձնվեցին ռազմական ատյանին: Մի թուրք թաքնված է եղել վարագույրի ետևում, և գիշերն սկսել է լուսամուտից կրակել փողոցով անցնող զինվորների վրա. մինչև զոհվելը նա վիրավորել և սպանել է 8 ավստրիացի զինվորների: Գերի վերցրած թուրք ապստամբներին անընդհատ բերում են, իսկ շատերին դուրս են հանում տներից, որտեղ թաքնված են եղել: Ավստրիացիները գտել են 29 հրանոթ և 20 հազար հրացան, փամփուշտներով լի հազարավոր սնդուկներ»:

Իսկ մեկ ուրիշ մաջար սպա հետևյալ նամակն է գրում իր բարեկամներին.

«Մենք բոլորս հավատում էինք, որ Բոսնիայում ոչ ոքի հետ գործ չենք ունենալու, բացի մի քանի սերբ հայդուկներից, և որ թուրքերը մեզ ընդունելու են գրկաբաց: Երկու շաբաթում երկրում բոլորովին փոխվեց տրամադրությունը: Բնավ չէի սպասում, որ հարյուր հազարավոր երիտասարդներ այդքան շուտ կփոխեն իրենց կարծիքը, ինչպես մտավորականները փոխեցին: Հունգար զինվորները ծայր աստիճան դառնացած են մահմեդականներից (դառնացած են, հավանաբար, թուրքի յաթաղանից): Մինչ այդ մենք հավատում էինք, թե թուրքերը գիտեն ով է *մաջարը*: Հիմա համոզվեցինք, որ մենք նրանց համար օտարներ ենք, գյավուրներ, ինչպես մյուս բոլոր եվրոպացիները: *Նրանք ոչ մի տարբերություն չեն դնում ժողովուրդների միջև, նրանց ցանկությունն է կոտորել բոլոր ոչ մահմեդականներին: Հավանաբար թուրքերից բացի գոյություն չունի ավելի դաժան, ավելի վայրագ և ավելի անմարդկային ժողովուրդ: Նրանք հիվանդներին ու վիրավորներին վերաբերվում են այնքան բարբարոսաբար,* որ հիմա մերոնցից ոչ ոք չի համարձակվում ետ մնալ իր ընկերներից, եթե նույնիսկ հիվանդ է և չի կարողանում քայլել, քանի որ գիտե, թե ինչ է սպասում իրեն, եթե ընկնի այդ *բարբարոսների ձեռքը*»:

Այսպես էին արտահայտվում մաջարները՝ թուրքերի ամենաջերմ բարեկամները, երբ Սարաևոն գրավելուց հետո բախվեցին թուրքական բիրտ ուժին: Բայց նրանք այդ մասին շուտ մոռացան և այժմ կրկին ցանկանում են պաշտպանել Բոսֆորի փադիշահին: Մի՞թե ավստրոմաջարները ի վիճակի չեն պատկերացնել, թե Թուրքիայում ինչպիսի ոչնչացման է ենթարկվում ռայան: Ու երբ թուրք բնակչությունը փորձում է դիմադրել ավստրիացի զինվորներին, հարյուրավոր զինվորներ է ոչնչացնում. ինչպես է վարվում այդ մոլեռանդ ու բարբարոս ամբոխը, օրինակ, Մակեդոնիայի բուլղարների հետ, որոնք զրկված են նույնիսկ մի մահակ ունենալու իրավունքից: Բայց ամենից հետաքրքրականը, Ավստրիայի կողմից Բոսնիան ու Հերցոգովինան գրավվելուց հետո, Ավստրիայի ու

Թուրքիայի միջև փոխանակված նոտաներն են: Վերջինս, որ փայլուն է տիրապետում իր արհեստին՝ ջարդ, կոտորած, բարբարոսություն և տեռոր, ավստրիական ռազմական դատարանների վճիռները, որոնցով դատվեցին ու պատժվեցին Կ. Պոլսի սոֆտայական կառավարությունից ոգեշնչված ապստամբ թուրք մարդասպանները, համարեցին անմարդկային՝ «խաղաղ մուսուլմանների» նկատմամբ: Բ. Դուռը որպես մի կառավարություն, որը հասկանում է (՞) քաղաքակրթությունից ու մշակույթից, ենթադրելով, որ իր երկրում խորապես հարգվում է մարդկային իրավունքը (!), անհարմար չի զգում մի անպատկառ շրջաբերական ուղարկել մեծ տերություններին, որում նկարագրված են այն բոլոր դաժանությունները, որ իբր գործել են ավստրիացի զինվորները Բոսնիայում և Հերցոգովինայում: Գրողի տարած թուրքերը վրդովվել գիտեն նաև կոտորածներից ու դաժանություններից: Ահա այդ զավեշտական թուրքական նոտան.

«Նոտա մեծ վեզիրից՝ Վիեննայում թուրքական դեսպան Կարատեոդորիդի փաշային.

Բ. Դռանը Հաֆուս փաշայի ներկայացրած զեկույցներից:

Մեր քաղաքացիներից և ռազմական իշխանություններից, ինչպես նաև բոսնիական պատվիրակներից ստացած հեռագրերից պարզվում է, որ ավստրոհունգարական զորքը մեծ ավերածություններ է գործել *Սարաևոյում և Բանյա-Լուկայում, այսինքն՝ կատարել է դաժանություններ, այդ թվում՝ կոտորել է կանանց, երեխաներին ու ծերունիներին, թալանել տները, դաշտերում սպանել գյուղացիներին ու հովիվներին:*

Բացի այդ, մեր զինվորները, որոնք չեն կռվել և դիմադրություն ցույց չեն տվել, տարվել են Ավստրիա որպես ռազմագերիներ: Ավստրիական զորքերի գլխավոր պարետը ռազմական հիվանդանոցներից բռնի ուժով ու վիրավորական արտահայտություններով դուրս է շպրտել թուրք հիվանդներին, հայտարարելով, թե անասունները չպետք է ապրեն մարդկանց մեջ:

Այս ցավալի դեպքերն ու դաժանությունները, որոնք գործադրվում են հատկապես մուսուլմանների դեմ, պատճառ եղան, որ թուրք բնակչությունը ավստրիական զինվորների կողմից գրավված երկրներում վերջնականապես կորցնի վստահությունը ավստրիական իշխանությունների հանդեպ:

Մենք համոզված ենք, որ ավստրիական կառավարությունը, որի մարդասիրական զգացմունքները հանրահայտ են, ամենից առաջ պիտի որ ցավ զգա գործերի այսպիսի ընթացքի համար: Այսօր այլևս ոչ մի կասկած չկա, որ ավստրոմաջարական զորքերի մուտքը Բոսնիա և Հերցոգովինա կատարվել է առանց երկու պետությունների միջև որևէ համաձայնագրի (երևի «պայծառաշուք Դուռը» ուրիշ տեսակի ճաշ չի ուտում, բա-

ցի համաձայնագրերն ու հաթթը-հյումայունները, գործն ավարտելով ավանդական *«Երեք օր հետո»* և *«Կտեսնենք»* ասույթներով): Բեռլինի դաշնագրի 25-րդ հոդվածը ոչ միայն չծառայեց այս երկու գավառների խաղաղեցմանը, այլև բնակչությանը պատճառեց աներևակայելի դժբախտություններ ու առավել դժվարացրեց այդ գործընթացը:

Բոսնիայի և Հերցոգովինայի ապստամբությունը պաշտպանություն էր գտնում այս գավառների *սլավոն բնակչության կողմից*, որը գլուխ էր բարձրացրել սուլթանական իշխանության դեմ, և այսօր ավստրիական զորքերը փոխանակ վռնդելու ապստամբներին, իրենց դաժանությունը թափում են մահմեդական բնակչության վրա:

Կոմս Անդրաշին ներկայացրեք այն ամենը, ինչ շարադրված է վերևում և արթնացրեք նրա մարդասիրական զգացմունքները, որպեսզի *ծեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ կասեցնելու համար այս իրավիճակը*, որը միանգամայն անհարիր է ավստրիական կառավարության ստանձնած առաքելությանը:

Բ. Դուռը սույն հեռագիրն ուղարկեց նաև մյուս մեծ պետություններին, խնդրելով բարեկամական միջնորդությամբ պաշտպանել մեր ցանկությունը Վիեննայի կաբինետի առջև: Հուսով ենք, որ առկա իրադրության մեջ կոմս Անդրաշին կրկին կապացուցի իր բարեկամությունը՝ կհրամայի կասեցնել ավստրիական զորքերի առաջխաղացումը, հակառակ դեպքում կարող է ավելացնել արյունահեղությունը»:

Տեսնու՞մ եք, որքան զգայուն է թուրքական կառավարությունը: Մի կողմից ուղարկում է կանաչ չալմայով իր էմիսարներին, որպեսզի այս շրջաններում հրահրեն թուրք բնակչության մոլեռանդությունը, միաժամանակ նրանց մատակարարելով *«Հենրի մարտիններ»*, թնդանոթներ և միլիոնավոր փամփուշտներ, իսկ մյուս կողմից շատ նրբորեն բողոքում է ինչ-որ *ավերածությունների ու դաժանությունների մասին*, որոնք իբր կատարվել են ավստրոմաջարական զորքերի կողմից՝ խաղաղ մուսուլմանների նկատմամբ, ավելացնելով, որ այդ ամենը պետք է գործադրվեր սլավոն ապստամբների դեմ: Բ. Դուռը չափազանց զգայուն է, երբ գործը վերաբերում է մուսուլմանների նկատմամբ կատարված դաժանություններին (հնարովի, թե իրական), իսկ երբ նրա վայրի հորդաները, զեյբեկները, բթամիտ մանաֆները և այլ գազաններ ամայացնում ու կոտորում են հազարավոր դժբախտներով լի ամբողջ շրջաններ, ինչպես այդ անընդհատ տեղի է ունենում Մակեդոնիայում և Հայաստանում, որտեղ բնակչության ինչքն ու պատիվը գտնվում են մինչև ուղն ու ծուծը այլասերված աղաների, փաշաների ու լեռնային ավազակների ձեռքին, այդ ժամանակ նա դյուրազգաց չէ, չի հասկանում, թե ինչ են դաժանություններն ու ավերածությունները: Ի՞նչ պատահեց որ, ի՞նչ է եղել, մի տարվա ընթացքում կոտորվել է մի քանի հարյուր *գյավուր*, պատվազրկվել են

հարյուրավոր կույսեր, թալանվել են հազարավորներ և, թեկուզ, դերվիշական Պոլսում 20 հազար հայ գյավուրներ շների պես մորթվել են... Բայց չէ՞ որ դրանք ռայաներ են, որոնք մարգարեի կողմից որպես պարգև տրված են կարմիր կիսակոշիկով և անգորյան բրդյա չալմայով ուղղափառ մուսուլմաններին և դրված են նրանց տրամադրության տակ, որպեսզի իրենց քեֆի ու հաճույքի համար խաղան գյավուրի կյանքի, ունեցվածքի ու պատվի հետ: Հազարավոր շուն գյավուրներ մի մուսուլմանի կյանքը չարժեն: Ահա թե ինչու՝ մա՛հ գյավուրներին, բոլորին պետք է ոչնչացնել, ինչպես անում են Մակեդոնիայում մեր դժբախտ եղբայրների հետ, որտեղ հողը ծայրից ծայր ներծծված է արյունով ու արցունքով, ինչպես և տարաբախտ Հայաստանում, որտեղ երկու տարում արդեն մորթվել են 250000 մարդկային էակներ, ամեն տեսակի խոշտանգումներով, դաժանություններով ու ասիական վայրենի մուսուլմանների շրջանում ընդունված կտտանքներով: Եթե Կոստանդնուպոլսում, դեսպանների ներկայությամբ, անմիջապես նրանց ոտքերի առջև կոտորում են այդքան մարդ, ո՞վ իմանա ինչեր են կատարվում գավառներում... Եվ եթե հռչակավոր Եվրոպան դեռ ունի մարդկային կերպարանք, ժամանակն է, որ պատեհ առիթով մեջտեղից վերացնի փտախտով վարակված, բյուրավոր մարդկային կյանքեր խժռած և արդեն նեխած լեշը...

Բոլոր մեծ տերությունները փորձից գիտեն 99 տիտղոսներով պճնված թուրքական Բ. Դռան մոլեռանդությունը, անպատկառությունը, նենգությունն ու ստորությունը: Բոլոր տերությունները լավ են հասկանում մանաֆական մոլեռանդությունը՝ անկախ բոսնիա-հերցոգովինյան իրադարձություններից: Իտալիան իր գաղութներում, հանձին այսպես կոչված *մամելյուկների*, բազում անգամ ճաշակել է թուրքական յաթաղանը: Ֆրանսիան շատ լավ հիշում է դերվիշական մոլեռանդությունը Ալժիրում, քանի՞-քանի ֆրանսիացիներ զոհ գնացին դերվիշների այդ հանդգնությանը: Անգլիան մեծաթիվ զոհեր տվեց Կիպրոս կղզում, երբ այն զավթում էր: Չխոսենք Աֆղանստանի մասին, իսկ Ռուսաստանը երբեք չի մոռանալու Ղրիմի թուրքերի դաժանությունները, որոնք հարյուրամյակներ շարունակ փտախտի նման հյուծում էին ռուսական պետական օրգանիզմը:

Սակայն, որպեսզի մեր ընթերցողներն իմանան, թե Ավստրիան ինչքանով է տեղյակ թուրքական նենգություններին, այն Ավստրիան, որն օր ու գիշեր ջանում է Թուրքիային ամրապնդել իր եվրոպական տիրույթներում, թե ինչպես ամեն կերպ ձգտում է խեղդել ազատության ոգին Մակեդոնիայում, հետաքրքրության համար այստեղ կներկայացնենք այն հուշագրությունը, որի լեզվից մեր ընթերցողները շատ բան կսովորեն.

«Կոմս Անդրաշին, կոմս Զիչիին,

Կոստանդնուպոլիս, 14-ը հոկտեմբերի, 1878 թ.

Թուրքական հյուպատոսը մեր կառավարությանը հանձնեց մի շրջաբերական նամակ այն դաժանությունների մասին, որ իբր կատարել են մեր օկուպացիոն զորքերը: Դուք փոստով կստանաք պատճենը:

Նախ և առաջ մենք *վրդովմունքով մերժում ենք* այն անհիմն մեղադրանքները, որոնք դեմ են ճշմարտությանը: Դրանք Եվրոպայում ոչ ոքի չեն կարող մոլորեցնել, քանզի կայսերական բանակի բարի համբավը դրված է այնպիսի ամուր հիմքերի վրա, որ հնարավոր չէ այն *սևացնել* զրպարտչական հերյուրանքներով:

Առաջինն, ինչը զարմացնում է, թուրքական պաշտոնական այդ նամակում տեղ գտած այն վկայություններն են, որ շարադրողը ներկայացնում է: *Բոլորին հայտնի է Հաֆըզ փաշայի մասնակցությունը Բոսնիայի և Հերցոգովինայի շարժմանը*: Ավստրիայի գլխավոր հյուպատոս պարոն Վասիչը վաղուց է ապացուցել նրա մասնակցությունը, և մենք, երբ հրապարակեցինք մեր հյուպատոսի զեկույցները, լռության մատնեցինք այն հատվածները, որոնք վկայում էին այդ մասնակցության մասին, քանզի չէինք ուզում հրապարակավ խայտառակել (բայց խոզն ի՞նչ է հասկանում ջրհորի ջրից) Բ. Դռան բարձրաստիճան պաշտոնակատարին:

Զարմանալի է նույնպես, որ *Դուռը չի վախեցել նվաստացնել իր արժանապատվությունը* (բավական դիվանագիտորեն է ասված...), մեծ տերությունների ղեկավարներին հրամցնելով այդքան խիստ մեղադրանքներ, որոնք կառուցված են ստահոդ լուրերի վրա, և շրջաբերականը նախապես չի ուղարկել մեր կառավարությանը, որը կներկայացներ բոլոր ապացույցները:

Մենք նողկանքից չենք ցանկանում հիշել անգամ այդ շրջաբերականի պարունակած մեղադրանքների մանրամասնությունները: Սակայն պարտավոր ենք ցույց տալ, որ Բանյա-Լուկայում կայսերական զորքերը սահմանափակվեցին միայն *ետ մղելով բարբարոսական հորդաների հարձակումները հիվանդանոցների վրա*, որոնք լեցուն էին հիվանդ, վիրավոր և մահամերձ բոսնիացիներով ու ավստրիացիներով: *Սարաևոյում* միայն մի քանի տներ հրկիզվեցին և այրվեցին, այն էլ՝ ճակատամարտի հետևանքով և ոչ թե վրեժխնդրության համար: Եվ եթե *մոլեռանդները պատուհաններից ու տանիքներից կրակում էին մեր զինվորների վրա*, ապա քաղաքը չենթարկվեց թալանի ու կրակի, չնայած այդ անելու իրավունքն ունեինք, ինչպես կաներ յուրաքանչյուր թուրք փաշա՝: Չի ապացուցվել թալանի ոչ մի դեպք: Ընդհակառակը, մեր զորքերը կասեցնում էին տեղի բնակիչների՝ կողոպուտի ու թալանի փորձերը:

Բոլոր երկրների զինվորական թղթակիցների պաշտոնական զեկույցները միաձայն հաստատում են վերոհիշյալը:

«Թող Բ. Դուռը ներկա օկուպացիան համեմատի *Օմեր փաշայի 1851-1852 թթ.* օկուպացիայի հետ, որը ձեռնարկվեց *թանզիմաթը* կիրառելու համար: Մենք պայքարում էինք այն տարրերի դեմ, որոնց թուրք նախարարները կոչում էին անսանձելի հիմարներ, մենք երկու ամսում կատարեցինք այն, ինչ Օմեր փաշան հազիվ կարողացավ անել երկու տարվա ընթացքում: Այդ ժամանակաընթացքում թուրքական բանակն ապրեց բնակչության հաշվին, և Օմեր փաշան մահվամբ պատժեց հարյուրավոր մեծամեծների, փաշաների, բեյերի, որոնց անունները կարող ենք դնել Բ. Դռան տրամադրության տակ: Մենք, ընդհակառակը, ամեն ինչ գնում էինք հատով, և դատի հանձնեցինք միայն նրանց, որոնց մասնակցությունը մեր զինվորների ու պաշտոնյաների սպանությանը ապացուցվեց:

Բ. Դուռը թող համեմատի մեր զորքերի մարդկայնությունը մուսուլմանների կողմից մեր զինվորների նկատմամբ կիրառված սպանությունների ու վիրավորներին հաշմելու հետ: Ինչ վերաբերում է այն մեղադրանքին, թե իբր մենք գերի ենք վերցրել կռիվներին չմասնակցած զինվորների, ապա պետք է միայն զարմանք հայտնել, որ Բ. Դուռը զրկվել է հիշողությունից: Դա երևում է նրա մեղադրանքից: Այդ կառավարությունը չի՞ հիշում, որ հազարավոր մարդիկ, որոնք չէին մասնակցել կռիվներին, սովորական զինվորական պատիվներով ուղարկվեցին իրենց հայրենիքը նախքան պատերազմի ավարտը:

Ոգին, որն առաջնորդում էր մեզ, երբ ձեռնարկեցինք այդ գավառների օկուպացումը, շարադրված էր մինչ այդ գործողություններն արված հայտարարության մեջ: Հարգելով հանդերձ ամեն տեսակի դավանանքները, մենք, եթե պարզած լինեինք միայն քրիստոնյաներին ազատագրելու դրոշը, այդքան զոհեր չէին պահանջվի, սակայն դա կլիներ բոլոր մահմեդականներին կոտորելու ազդանշան, իսկ մենք նրանց հովանավորում էինք ավելի, քան քրիստոնյաներին:

Արգահատելի զրպարտանքները, որոնք տարածվում են կայսերական զորքերի դեմ, ոչ միայն չեն կարող վնասել նրանց, այլև վրդովում են Ավստրո-հունգարիայի խիղճը: Իմ պարտականությունն էր հերքել այդ զրպարտությունները և նախազգուշացնել Բ. Դռանը սպասվող այն վատ տպավորության մասին, որ հարուցելու են դրանք այստեղ:

Ձերդ գերազանցությունը այս հեռագիրը հասցեագրելու է Սավֆեր փաշային, և եթե ցանկանա, պատճենը թողեք նրա մոտ»:

Այսպիսին են թուրքերը: Թուրքը մոլեռանդ է, ինքնագլուխ, անասուն և անուղղելի: Բացի ուղղափառներից, որոնք մարգարեին համարում են ալլահի պատվիրակ, մյուսները, մինչև վերջինը, աշխարհիս անհավատներն են ու գյավուրներ, որոնք արժանի են լոկ յաթաղանով կոտորվելու:

Ավստրո-մաջարները Սերդար էֆրեմին ուղարկում էին թանկարժեք թուր՝ սլավոններին կարգին ջարդելու համար և համերաշխ էին փաթթոցավորների ամենասրտագին բարեկամների հետ, սակայն, դաշնագրից

հետո, որպեսզի օկուպացնի Ավստրիան, Բոսնիան, Հերցոգովինան, թուրքը մի կողմ շպրտելով բարեկամությունը, կացնահարում էր ավստրիացի զինվորներին, իսկ մեծ չալմակիրները շրջաբերական հայտագրեր էին հղում՝ գանգատվելով «խաղաղ և մուսուլման հովիվների» նկատմամբ ավստրիական զորքերի գործած ինչ-որ դաժանություններից: ... Երբ Անգլիան ռուս-թուրքական պատերազմից հետո զօր ու գիշեր ջանքեր էր թափում ասիական պետությունը կարկատելու, երբ Կ. Պոլսում նրա գործակալ Լեյարդը պատրաստում էր ռոդոպյան ապստամբությունը ռուսական օկուպացիոն զորքերի դեմ, իսկ այդ ապստամբության ղեկավարը, ոմն Սենկլեր, Լեյարդի ամենամտերիմ բարեկամներից մեկն էր, նույն այդ ժամանակ թուրքերը Կիպրոսում ջարդում էին անգլիացիներին և անգլիական սպաների նկատմամբ գործադրում ամեն տեսակ սոդոմական մեթոդներ, որովհետև թուրքը՝ թուրք է, նա չգիտի բարեկամություն, չգիտի ինչ է երախտագիտությունը: Այն օրերին թղթակիցները Կիպրոսից գրում էին.

«Շատ տեղերում ոտքի են հանված թուրքական չեխեները, որոնք ոչնչացնում են անգլիական ամբողջ զորամասեր, Լառնակայի մոտ թուրք չեխեները կրակի մատնեցին մի գյուղ, գերի վերցրին և անտառ տարան անգլիական մի պահակախումբ և զինվորներին ենթարկեցին ամոթալի դաժանությունների: Լառնակայի մոտ ապստամբները թալանել են անգլիական փոստը և ջախջախել կապիտան Պոբսոնի ջոկատը: Կղզու արևելյան մասում հնդկական զորքերը հանդիպել են թուրք ապստամբների, որոնք ունեցել են նաև թնդանոթներ»:

Իսկ նույն այդ ժամանակ անգլիական գործակալները Բիկոնսֆիլդի, Լեյարդի և ուրիշների գլխավորությամբ աշխարհը խլացրին աղաղակելով, թե ռուսական զորքերը և բուլղարները ինչ-որ խժդժություններ են գործել «խաղաղ մուսուլմանների» նկատմամբ, որի հետևանքով Կ. Պոլսի խալիֆը անամոթաբար ու անպատկառորեն հետևյալ հեռագիրն ուղարկեց ռուսական կայսրին.

«Ձեկույցները (միշտ այդ գրողի տարած զեկույցները), որոնք հասնում են իմ կառավարությանը՝ Հյուսիսային և Հարավային Բուլղարիայի մուսուլման բնակչության տառապանքների մասին, այնպիսին են, որ կարող են խռովել Ձերդ գերազանցության հանրահայտ մարդասիրական զգացումները:

Բռնությունները, որ բուլղարները գործում են հազարավոր մարդկային արարածների նկատմամբ, հնարավոր չէ նկարագրել[գ]: Նրանք կանգ չեն առնում ոչ սպանությունների, ոչ էլ կողոպուտի ու բռնաբարությունների առաջ: Օր չի անցնում, որ նրանք չկատարեն նման չարագործություններ:

Այս դժբախտ գաղթականները, որոնց ամբողջ ունեցվածքը թալանված է, մշտապես ահ ու դողի մեջ են:

Հենվելով Ձերդ գերազանցության մարդասիրական զգացումների վրա, խնդրում եմ հրամաններ արձակեք, որպեսզի հաստատապես ապահովագրվեն մուսուլմանների կյանքը, ինչքն ու պատիվը»:

Աբդուլ Համիդ

Ուրեմն, Նորին գերազանցություն սուլթան Աբդուլ Համիդը հասկանում է, թե ինչ են նշանակում թալանը, սպանությունները ու անպատվությունը: Եվ ցավում է, երբ նման դաժանություններն ու կողոպուտը կատարվում են[դ] մուսուլմանների նկատմամբ: Իսկ երբ նրա հրամաններով իրականացվում են հազարավոր խաղաղ բնակիչների ջարդեր ու սպանություններ, այն էլ՝ իր հպատակների, ինչպես մի ժամանակ բուլղարների, իսկ ապա հայերի հետ կատարվեց անցյալ և այս տարի Կ. Պոլսում, երանելի խալիֆի արարմունքն ինչպե՞ս հասկանալ... Թուրքական բարոյախոսություն և ղուրանական ուսմունք ...

Վերոնշյալից որոշակիորեն երևում է, որ Եվրոպան հասկանում է Թուրքիայի ասիական դիվանագիտությունը, գիտե նրա ջարդարարական քաղաքականության լեզուն, որն իր իշխանությանը ենթակա քրիստոնյա ժողովուրդներից այնքան արյունՁ և արցունք է խլել:

Եվ եթե հաշվի առնվեն ու մի հայտարարի բերվեն նյութական ու տնտեսական շահերը եվրոպական մեծ տերությունների, որոնք խաչաձև երթևեկում են Կ. Պոլսում և Թուրքիայում, և եթե նկատի առնվեն քաղաքական ամեն տեսակի կեղտոտ գործառնությունները, բանսարկություններն ու դիվանագիտական մնջախաղերը, որոնք զուգորդվում են մեծագույն ստորությամբ և ամենանուրբ լրտեսությամբ, եղբայր հայերն ու մյուս ստրկացված ժողովուրդները քայքայված մարդկային կեցության և պահվածքի ոչ մի բարելավում չեն կարող ակնկալել Եվրոպայից, որի համար նյութական շահերը շատ ավելի են կարևորվում, քան հարյուր հազարավոր մարդկային զոհերն ու անպատվությունները: ... Եվրոպայի համար քաղաքակրթություն, մարդասիրություն և նման հասկացությունները *դատարկ խոսքեր են*, մի տեսակ օղակներ, որպեսզի նրանց միջով անցկացնեն արևելյան և ասիական հիմարներին: Սակայն, քանի Եվրոպան որդեգրել է այս քաղաքականությունը, որը վաղուց հայտնի է արևելքին, մի՞թե կարող են քրիստոնյա ժողովուրդները մարդկային ճակատագրի բարելավման որևէ նախաձեռնություն ակնկալել Թուրքիայից և անձամբ Աբդուլ Համիդից: Այս հարցին հենց այնպես պատասխանել, նշանակում է ծաղրել հազարավոր հայ զոհերի արյունը: Թուրքիայի նման պետությունից, որը սնվում և իր գոյությունը պահպանում է *գերեզմանափորությամբ*, ոչ մի բան, բացարձակապես ոչինչ չի կարելի սպասել: Հիմարությամբ կամ ասիական պնդաճակատությամբ են խմորված

այն դիվանագետները, այն պետական այրերը, լինեն եվրոպացի, բուլղար կամ հասարակ հայեր, ովքեր որևէ նախաձեռնություն են ակնկալում Թուրքիայից: Բորենին ապրում է լեշով, Թուրքիան ևս, ինչպես բորենին, իր նեխած կյանքը պահպանում է քրիստոնյա հպատակներին սև ահաբեկչության ենթարկելով:

Թուրքիայի նման մի պետությունից, որտեղ ամբողջ բնակչության ճակատագիրը կախված է զինվորականից կամ ցանկացած ասիացու դեղին-կանաչ չալմայից, որի տերը բախտի բերմամբ Ստամբուլում դարձել է մեծավոր, և որտեղ «արդարադատության» կամ «սոֆտայական» կառավարության որևէ անդամի կես կամ քառորդ գլխի հիվանդությունը դարերով բռնատիրական այս պետության մեջ համարվում է կարևոր իրադարձություն, որտեղ բաղնիք գնալը կամ չգնալը, պալատական հարեմները, սքանչելի հարճերը դառնում են քաղաքական տագնապ և դիվանագիտական խնդիր, ի՞նչ կարող են սպասել խեղճ հայերը և Բալկանյան թերակղզու քրիստոնյաները:

Թուրքը մինչև ուղնուծուծը մոլեռանդ է: Ոչ մի քաղաքակրթություն կամ մշակույթ չի կարող ազդել նրա վրա: Թուրքի մոլեռանդ ուղեղն այնպես է թունավորված և հունցված մահմեդական ուսմունքներով, որ սատանայական ոչ մի խունկ չի կարող ազդել նրա վրա:

Կան թուրքեր, որոնք իրենց կրթությունն ստացել են Եվրոպայում, խոզի ճարպ են ուտում և *թասով* օղի են խմում, սակայն մոլեռանդությունից չեն ազատվել: Ընդհակառակը, ապացուցված ճշմարտություն է, որ կրթված թուրքը ավելի դաժան է, ավելի արյունարբու: Սուլեյման փաշան, որը ռուս-թուրքական վերջին պատերազմի ընթացքում ամայացրել է ամբողջ Թրակիան, սրի քաշել Ստարա-Զագորայի բնակչությանը և բազում ծաղկուն քաղաքներ, առաջին թուրք գեներալն էր, որ ամենից ուսումնականն էր, ամենից կրթվածը: Նա արժանավոր Մոլտկեի աշակերտն էր, և վերջինս մեծ հույսեր էր կապում Սուլեյմանի հետ: Գերմանական զինվորական շրջանների հանձնարարությամբ Բարձրագույն Դուռը այդ Սուլեյմանին հանձնել էր իր լավագույն զորքերը, որոնք, ինչպես հայտնի է մեր ընթերցողին, փոխանակ կռվելու մոսկվացու դեմ, պատրաստվեցին բնաջնջել անպաշտպան բուլղարներին: Կամ՝ Միտհադ փաշան, անկասկած, թուրք պետական այրերից ամենակրթվածը, բայց ով չգիտի, թե ինչպիսի գազանն էր այդ հոգեսպանը: Ով չգիտի, որ Միտհադ փաշան մինչև ուղն ու ծուծը ֆանատիկոս էր և արյունարբու քրիստոնեատյաց: *Քանի քրիստոնյա հոգիներ* ուղարկեց նա Իբլիսին երկրպագելու: Հաֆըզ փաշան, որ ավերակների վերածեց Պանագյուրիշտեն[10], մի ֆրանսիական ուսումնարանի սան էր: Թուրքն օրը յոթ անգամ աղոթում է ալլահին և այս յոթնապատիկ աղոթքներում անընդհատ միևնույն բանն է խնդրում մարգարեից. *երկրի երեսից բնաջնջել գյավուրական ողջ աշ-*

խարհը՝ յաթաղանի միջոցով: Ոչ մի քաղաքակրթություն ի զորու չէ բարելավելու թուրքի բնույթը: Ավելի քան 80 տարի Թուրքիան գոյատևում է *խաբեությամբ*: Շնորհիվ խելապակաս թուրքասերների, ավստրիական ջհուդները իրենց փողերը «պետական փոխառություն» բարետես պիտակի տակ, տալիս են Թուրքիային՝ տնտեսապես, քաղաքականապես ու բարոյապես *բզկտված* այս պետությանը, որ անամոթաբար այդ նպաստների հաշվին է պահպանում իր հյուծախտավոր կյանքը: Վճարովի շատ հացկատակների մեջ, որոնք կաշառված են քրիստոնյա հպատակների արյունով ու արցունքով ձեռք բերված փողերով, կան նաև շատ ազնիվ եվրոպացիներ, որոնք դեռ 50 տարի առաջ ապացուցել են Թուրքիայի ոչնչությունն ու կանխատեսել փլուզումը: Երբ Կ. Պոլսում անգլիական հյուպատոս Լեյարդը ռուս-թուրքական պատերազմից հետո բնակվում էր սուլթանի պալատում և օր ու գիշեր թրև գալիս Կ. Պոլսի փողոցներով Թուրքիան վերափոխելու համար, նույն այդ ժամանակ Կ. Պոլսում Ռոբերտ Կոլեժի լավ բարեկարգված դպրոցի հարգելի տնօրեն *պարոն Վըշբըռնը* իր *«Թուրքական կայսրության ապագան»* խորագրով մի նամակում գրում էր.

«Թուրքը և թուրքական վարչակարգը անհնար է ուղղել: Անգլիական որոշ այրեր զուր են ղեկավարում անհնարինը (խոսքը Թուրքիայի մի շարք անվանի հովանավորների մասին է): *Դրսից ոչ* մի մարդկային կարգադրություն չի կարող փրկել Թուրքիային, առավել ևս անգլո-թուրքական հռչակավոր համաձայնագիրը, որը ապահովագրում է Թուրքիայի ամբողջականությունը (*): Եթե մարդ սառնասրտորեն ուսումնասիրի անգլո-թուրքական պայմանագիրն ու Կ. Պոլսում և Լոնդոնում դրան տրվող տարբեր մեկնաբանությունները, կհամոզվի, որ ոչ Թուրքիայում,՝ ոչ էլ Անգլիայում որևէ նշանակություն չեն տալիս այդ պայմանագրին: Անգլիացիներն ուրախ են, որ իրենց թաթը դրեցին Կիպրոս կղզու վրա (անգլիացիների նվիրական իդեալն էր՝ մի բան պոկել, ինչ գնով ուզում է լինի), իսկ թուրքերը ցնծում են, որ Անգլիան իրենց պաշտպանելու է Ասիայի հարձակումներից (լավ է պաշտպանում, մինչև մի բան չպոկի): Անգլիան ի զորու չէ Թուրքիային ստիպելու, որ բարենորոգումներ անի: Նա նաև անկարող է վախեցնել Թուրքիային, որ չի հովանավորելու, քանզի թուրքերը *գիտեն*, որ Անգլիան հովանավորում է իրենց՝ *իր սեփական շահերի համար և ոչ թե հոգուտ Բ. Դռան*: Եթե Անգլիան, *ի հեծուկս իր ավանդական քաղաքականության*, ուզենա Թուրքիային ուժով մղել վերափոխությունների, թուրքերն առանց այլևայլի ընդդիմանալու են՝ մերձենալով Ռուսաստանին: Թուրքական բնակչությունը սոսկալի մոլեռանդ է և դժվարությամբ է ընկալելու նոր իրավիճակը, որին նրան հասցրել է պատերազմը: Անգլիական ազդեցությունը միայն դժբախտություն կարող է բերել քրիստոնյա բնակչությանը (և իրավամբ բերեց, որովհետև

հազարավոր հայեր կոտորվեցին ճիշտ նույն՝ ասիական ձևով): Անգլիայի դրությունը պահանջում է, որպեսզի Թուրքիային թողնի իր բախտի քմահաճույքին...»:

Քսան տարի առաջ այսպես էր արտահայտվում հարգարժան պրոֆեսորը Թուրքիայի մասին: Իսկ հիմա, քսան տարի անց, ինչպիսի՞ն է Թուրքիայի կացությունը: Այժմ բոլոր կրթված և իրենց անկախ համարող մարդիկ միայն մի կարծիք ունեն Թուրքիայի մասին, *որ նա մոտիկ կամ հեռավոր ապագայում կազմալուծվելու, քայքայվելու, հոդս է ցնդելու, ինչպես փտած տանձը*: Դա հիանալի գիտեն նաև եվրոպական կառավարությունները: Բայց, ինչպես արդեն նշեցի, քաղաքական ու տնտեսական պատճառներով նրանք մինչև վերջ վարելու են Թուրքիային պաշտպանելու քաղաքականությունը: Հետևաբար, որտե՞ղ է ինչպես թշվառ հայերի, այնպես էլ մյուս ժողովուրդների փրկությունը, որոնք կազմում են այս անգլուխ, նեխած պետության խղճուկ մնացորդները: Մեկ կամ երկու անգամ չէ, որ «մարդասիրական» Եվրոպայի աչքի առաջ կատարվել են այնպիսի ահավոր ոճիրներ, ինչպիսին տեղի ունեցավ Կ. Պոլսում, բայց նա միշտ էլ էժան ցավակցությունից ու կեղծ *կարեկցանքից հետո շրջվել է իր հին պատմական ազդրի վրա* և ապա վառել սուլթանի չիբուխը: Իսկ սուլթանը հանդիսավորությամբ ու նենգորեն ծխում է այդ հսկայական չիբուխը, ժամանակ առ ժամանակ արհամարհական հայացք նետելով գյավուր Եվրոպայի վրա, որին անընդհատ խաբում ու ծաղրում է:

Հայերի ու մակեդոնացիների փրկությունը իրենց ճաքճքած ձեռքերի գործն է: Այս երկու ժողովուրդները միայն համագործակցության մեջ պետք է փնտրեն իրենց փրկությունը: Մենք ավելի քան հավատացած ենք, որ ամենից սոսկալի գերության մեջ տքնող երկու համերաշխ, ընդհանուր նշանաբանի տակ համատեղ գործող ազգերի մի ընդվզում և միասնական գործողություն, մի ընդհանուր հարձակում և մի ուժգին *քացի*, ջախջախելու են այս արյունախում ցեղի խղճուկ մնացորդներին: Ապացույցներ ունենք հազարավոր: Ամենից թարմ օրինակը Կրետեն է, որն, համոթ երևութական օսմանյան մեծության, ահա ավելի քան վեց ամիս է, ինչ շարունակում է քաջաբար մարտնչել: Առաջին անգամ մեր օսմանցիները ցանկացան ապստամբությունը խեղդել խանչալով ու թրով, սակայն հանդիպեցին հերոսական դիմադրության ու խոնարհաբար հավաքեցին իրենց պոչը, և ինչպես անում են սովորաբար՝ դիմեցին Եվրոպայի օգնությանը, իբր խուսափելու համար *ավելորդ արյունահեղությունից*: Բայց խիզախ կրետացիները դիմադրեցին և զենքը վայր չդրեցին: Մեր բարի փաթթոցավորը արդարությունը փոխարինեց *հալեպյան* ինչ-որ կարգ ու կանոնով, ոչ ոքի պիտանի հալեպյան կանոնադրությամբ: Եվ վստահ ենք, որ եթե կրետացիները որոշ ժամանակ էլ շարունակեն պայքարը, Թուրքիային ստիպելու են ամեն տեսակ զիջումների, ինչ-

պիսիք որ ցանկանում և պաշտպանում են իրենք՝ կրետացիները, *հակառակ մեծ չալմայակրի վերջերս հայտարարած բարձրագույն ողորմածությունների* և հռչակավոր «իրադեների», «ֆերմանների» ու «տեսքերեների»[11], որոնք վերածվեցին մի պատմական շիլայի, ինչը չի կարող մարսել նույնիսկ խոզի ստամոքսը, էլ ուր մնաց այն ժողովուրդների ստամոքսները, որոնք սմքել են թուրքական բռնություններից և արյունոտ յաթաղանից: Այն, որ կրետացիները վճռել են շարունակել պատերազմը, որպեսզի մեկընդմիշտ նվաճեն իրենց մարդկային իրավունքները, երևում է Աթենքում հրատարակվող մի լրջմիտ հունական լրագրից, որը պատերազմի առաջին իսկ օրերից միշտ էլ դրական տեղեկություններ է հաղորդել կրետական շարժման մասին: Մեր ընթերցողների հետաքրքրությանը հագուրդ տալու համար, թարգմանաբար ներկայացնում ենք այդ թղթակցություններից մի հատված, որպեսզի տեղյակ լինեն, թե ինչ են մտածում Աթենքի և Կրետեի որոշակի շրջանները:

«... Ինչպես հայտնի է, բացառությամբ մի քանի գյուղերի ու քաղաքների՝ Կենեյա, Կանդիա և Ռետիմո, ամբողջ Կրետե կղզին գտնվում է ապստամբ հույների ձեռքին: Նրանք այնտեղ կազմել են *ժամանակավոր կառավարություն*, որը կարգադրություններ է անում, տուրքերն է հավաքում, զբաղված է կղզու կառավարման գործերով և ամենասերտ հարաբերությունների մեջ է թագավորության ներսի ու դրսի որոշ հույն հայրենասերների, ինչպես նաև Աթենքում հունական հեղափոխական կոմիտեի հետ: Հավաստի աղբյուրից տեղեկացա, որ կրետացիներն արդեն ունեն կանոնավոր բանակ՝ բաղկացած 22 դրուժինայից, յուրաքանչյուրը՝ 4-ական վաշտից, իսկ յուրաքանչյուր վաշտը՝ 118 մարդուց: Նրանք ունեն նաև 700 հոգիանոց հեծելազոր, 5 մարտկոց՝ 4-ական հրանոթով և 40-ական հրետանավորներով: Կրետական զորքը հաշվում է 9000 մարդ:

Թուրքական նավատորմին, որն անընդհատ պտտվում է կղզու շուրջը, լավ պատրաստված մասնագետների՝ հայտնի *Հոբարտ փաշայի* աշակերտների գլխավորությամբ, դեռ չի հաջողվել հանդիպել *կրետական թեթև նավերին*,[t] որոնք Հունաստանից և այլ տեղերից Կրետե են փոխադրում ռազմամթերք, հանդերձանք, զենք, թնդանոթներ և հազարավոր կամավորներ: Կրետական ապստամբների ղեկավարն է ոմն Հաջի Մախալիս...»:

Շարժվել են նաև ալբանացիները: Իսկ ինչպես հայտնի է, ալբանացիների վրա կարելի է հենվել... Ահա թե ինչու ավստրիացիները, որոնք լավ են ճանաչում Մակեդոնիան, Սանջակը, Նովի-Բազարը, ինչպես և այսպես կոչված Հին Սերբիան, միշտ էլ լավ հարաբերությունների մեջ են եղել ալբանացիների և նրանց «Ալբանական միության» հետ, որը մի ահաբեկող խրտվիլակ է թուրքերի համար: Ճիշտ է, որ սուլթանի անձնական նախաձեռնությամբ սովորական նվիրատվություններով ու սիրալի-

ությամբ գրավել են ալբանացիների առաջնորդներից մի քանիսին, սակայն այս հրապուրանքը շատ լավ հասկանում են իրենք՝ ալբանացիները, քանզի նրանք ոչինչ չեն կորցնում: Ընդհակառակը, նրանց երկիրը terra incognita[12] է չալմայակիրների համար: Դա միանգամայն ձեռնտու է ալբանացիներին, սակայն, տեսնելով, որ թուրքական տիրապետությունը քայքայվում է, նրանք էլ ձգտում են ամրապնդել իրենց դրությունը և ավելի շատ տարածք պոկել փառապանծ *«Սկիպետարիայի»*[13] համար:

Բացի այդ, թուրքական պետական կամ, այսպես կոչված, հասարակական պարտքը հասնում է մի քանի միլիարդ լիրայի, այնպես որ, եթե թուրքերն իրենց ամբողջությամբ ծախելու հանեն, նույնիսկ Կ. Պոլսի շների հետ միասին, որոնց համար մի ժամանակ Անգլիան հարց էր հարուցել և լավ գին տվել, դարձյալ չեն կարող պրծնել այդ պարտքից: Հասկանալի է, այս ամենը մազաչափ իսկ չի մտատանջում թուրքերին, որովհետև, ըստ նրանց, դրանք *գյավուրի փողեր են*, սակայն բանն այն է, որ այդ կեղտոտ պարտքերի պատճառով օտարերկրացիները կորցրին վստահությունը, որի հետևանքով էլ սուլթանական կառավարությունը տարիներով չի կարողանում վճարել իր սպաների ու պաշտոնյաների գեթ մի քանի ամսվա ռոճիկը, ուստի դրանք ապրել և ապրելու են մինչև Թուրքիայի քայքայվելը՝ նստած ռայայի մերկ թիկունքին: Զինվորները վերածվել են իսկական *դիակապուտների*: Մակեդոնիայում բուլղարական և հունական չետեների հետ ընթացիկ՝ 1896 թ. կռիվներից շատ թուրք զինվորներ փախուստի դիմեցին հագուստ ու կոշիկ չունենալու պատճառով: Կան սպաներ, որոնք բացարձակապես դժգոհ են Բ. Դռնից, որի հետևանքով էլ լքում են բանակը և վերածվում *ավազակային խմբերի* ու բացահայտ թալանում բնակչությանը: Անցյալ տարի երկու թուրք ֆելդֆեբել գանգատվել են Մորավյան լեռներում կռվող վոյեվոդա քեռի Դիմոյին, թե՝ «Գիտենք, որ այս երկիրը մերը չէ, և իզուր են մեզ *գրգռում*: Շնորհակալ եղեք Աստծուց, որ ժամ առաջ այս հողը ևս անջատվեց պետությունից և օսմանցիներից»: Այսպիսի գաղափարներով են տոգորված բոլոր թուրքերը, և դա նրանց կատաղեցնում է, քանզի այդ են թելադրում Կ. Պոլսի սոֆտաները, որոնք, տեսնելով իրենց գոյության վախճանը, ձգտում են թալանել գյավուրների աշխարհը, բնական է՝ առավել հարուստներին, և նոր միայն ձեռնարկել համընդհանուր կոտորածը: Վերջերս ալբանական ցեղերի մեջ տարածվել է այն մտայնությունը, թե Պոլսում տիրություն են անում գյավուրները, որ նրանք իրենց փողերով սուլթանին և նրա նախարարներին գործիքի են վերածել: Հասկանալի է, այս հրահրումները հեռու չեն սոֆտայական կառավարությունից: Ուլեմներն ու սոֆտաները տեղյակ են ալբանացիների տրամադրություններին և համոզիչ քարոզներով բորբոքում են նրանց մոլեռանդությունը, որ իբր նրանց հայրենիքը կարող է մեծապես տուժել Կ. Պոլսի մեծամեծների

գյավուրանալու հետևանքով: Դրա համար էլ Ալբանիան պետք է անջատվի Բ. Դռնից: Բնական է, Թուրքիայի տապալման համար հարմար լծակ է նաև այսպես կոչված «Երիտասարդ Թուրքիա» կուսակցությունը, որը ձգտում է բարենորոգումներ մտցնել երկրում և որը, ըստ էության, հեռու կանգնած չէ «սոֆտայական» կառավարությունից:

***

Այս ամենը գալիս է ապացուցելու, որ թուրքական փլուզված, քայքայված պետության գոյատևումն այլևս անկարելի է: Ու եթե այդպես է, այստեղ տեղին է սոֆտայական դիվանագետներին հարց տալու՝ ի՞նչ են մտածում և ի՞նչ միջոցներ են ձեռնարկում Կ. Պոլսի կոտորածների կապակցությամբ, որոնք մի օր կարող են տարածվել նաև թուրքական կայսրության՝ բուլղարներով բնակեցված գավառները: Մակեդոնական բուլղարները Բուլղարիային և նրա կառավարությանը նայում են որպես եղբայրական երկրի, որը կոչված է օգնելու Ռիլա լեռան[14] այն կողմում ապրող իր եղբայրներին: Կառավարությունից պահանջել, որպեսզի նա բացի պետական արխիվները իր կարգադրություններին տեղեկացնելու համար, մենք չենք կարող: Սակայն, եթե ճշմարիտ են Սոֆիայում, պետական բարձրագույն շրջանակներում տարածված լուրերը, թե ամեն ինչի համար պետք է ապավինել սուլթանի բարեհաճությանը, որի «բարյացակամությունը» իբր անսպառ է, որ էվոլյուցիոն ճանապարհով կարելի է լցնել մակեդոնական բուլղարների հյուծված ստամոքսն ու հասնել ինչ-որ բարեփոխումների՝ պնդաճակատություն է և որևէ մեկնաբանություն չի պահանջում: Մենք չենք, որ դասեր պիտի տանք մեր դիվանագետներին, առավել ևս մեր կառավարությանը, որն, ինչպես ամեն մի կառավարություն, կարիք ունի կոտրատվելու Թուրքիայի առջև: Բայց, քանի որ հանձն ենք առել հրապարակավ հայտնելու մեր կարծիքը, պարտավոր ենք մինչև վերջ հասցնել մեր դատողությունները:

Ավելի վերևում տեսանք, որ Թուրքիայում «ռեֆորմներ», «վերափոխումներ», «թանզիմաթներ» հասկացությունները դատարկ խոսքեր են և, ըստ էության, *«նախաբաններ»* գալիք կոտորածների ու սպանդի համար: Հարց ենք տալիս մեր «դիվանագետներին», որոնք խորապես հավատում են սուլթանի ու նրա կառավարության *անկեղծությանը*՝ ի զորու՞ է, արդյոք, թուրքական կառավարությունը ինչ-որ բարեփոխումներ մտցնելու արյուն արցունքով թաթախված Մակեդոնիայում, և արդյո՞ք թուրքական ցեղը ի վիճակի է վերափոխվելու... Մենք ասել ենք, որ դա անկարելի է: Սակայն, ենթադրենք, թե ստեղծվել են բացառիկ իրադրություններ՝ հօգուտ Թուրքիայի, նույնիսկ այդ դեպքում հնարավո՞ր է, որ վերակառուցվի այս պետությունը: Դիմենք պատմությանը, որ մեզ տալիս է ամենահամոզիչ և հիմնավոր պատասխանը: Ինչպես հայտնի է, միջին դարե-

ռում թուրքերը երկար ժամանակ Ասիայում ունեին հարևաններ, օրինակ՝ Բյուզանդական կայսրությունը, որը ժամանակին աշխարհի ամենաքաղաքակրթված պետություններից մեկն էր: Միջին դարերում Բյուզանդիան մի պայծառ ջահ էր, որ լուսավորում և լույս էր տալիս ժամանակի բոլոր ժողովուրդներին: Կարելի է ասել, որ մենք՝ բուլղարներս, քրիստոնեությանը այդ լուսավորությամբ ենք պարտական: Սակայն թուրքերն ինչպե՞ս օգտվեցին այս բազմադարյան հարևանությունից: Հետագայում նրանք հարձակվեցին այդ պետության վրա, որը ներքին խռովություններից թուլացել էր, և գրավեցին այն, ինչպես հետո գրավեցին նաև Բուլղարիան, Սերբիան և այլ երկրներ: Այս միջոցով թուրքական ցեղը մտավ այլ ժողովուրդների հետ առօրեական սերտ շփումների ու հարաբերակցության մեջ: Բայց թուրքերը օգտվեցի՞ն իրենց հպատակության տակ գտնված ժողովուրդների կրթական մակարդակից: Ոչ: Հնագույն պատմիչները, հնագույն փիլիսոփայությունը, որոնք մեծ հարգանք էին վայելում Բյուզանդիայում, մեռած տառ մնացին նրանց համար: Նրանք վայրագորեն ոչնչացրին Կ. Պոլսի և այլ քաղաքների հարուստ գրադարանները, որտեղ ոտք դրեցին՝ որբացրին և սփռեցին բարբարոսությունը, անբարոյականությունը, տգիտությունը: Հաճույք էին գտնում միայն մի բանում՝ քրիստոնյաներին ջարդելու և կոտորելու մեջ: Թուրքական սուլթաններն ու թուրքական մանդարինները[՞] սկզբից ևեթ սերտ հարաբերությունների մեջ էին եվրոպական ժողովուրդների ու կառավարությունների հետ: Կանոնավոր առևտուր ունեին այն ժամանակվա ամբողջ կրթված աշխարհի հետ, ուղարկում և ընդունում էին զարմանալի պատմական «պատվիրակություններ»՝ իրենց տարատեսակ վարքաձևերով, այնպես որ բավական լավ հնարավորություններ ունեին գնահատելու եվրոպական կրթության ու մշակույթի բարձր մակարդակը: Բայց թուրքական ցեղը կարողացա՞վ օգուտ քաղել այս նպաստավոր հանգամանքներից, բազմացրե՞ց իր դպրոցներն ու գրականությունը, զարգացրե՞ց իր արդյունաբերությունը, առևտուրը: Մինչև երեկ Թուրքիայում աշխարհագրությանը նայում էին որպես սատանայական գիտության, իսկ գլոբուսը, ինչպես հայտնի է շատ ընթերցողների, քաղաքական պատճառ էր դառնում բազմաթիվ դժբախտ բուլղարների բանտարկելու Դիարբեքիրի[15] զնդաններում: Քսան միլիոն քրիստոնյա հպատակներ ամենաառատ միջոցներ էին հայթայթում, ամեն կարգ ու կանոնով քամվում էին սուլթանների բազմաշերտ չալմաների համար, թանկարժեք ու կանոնավոր միջոցներ էին տալիս հաղթողներին, այսինքն, հնարավորությունների տեսակետից թուրքական ցեղը ամենից հարուստն էր աշխարհում, քանզի, բացի այն, որ իր տիրապետության տակ էին աշխարհի ամենահարուստ հողերը, քրիստոնյա հպատակներին էլ շահագործում էր ամենատարրական ու անասնական ձևով: Բայց ճանձրալի կլիներ կրկնել, որ

թուրքը թուրք է, որ թուրքական ցեղը ընդունակ չէ կուլտուրայի ու վերածնության, այլապես, եթե ընդունակ լիներ «եվրոպականացման», ինչպես ուզում են հավատալ մեր որոշ դիվանագետներ, ապա թուրքերն իրենց վերածնունդը կսկսեին դեռ այն ժամանակներից, երբ ոտք դրեցին Եվրոպա, կհետևեին կուլտուրային ու քաղաքակրթությանը և, անկասկած, արևելքում կդառնային ամենալուսավորյալ ցեղն ու կկանգնեին շատ ավելի բարձր, քան իրենց ստրուկները՝ բուլղարները, հայերը, հույները և ուրիշներ: Դրանից հետևում է, որ թուրքերն ունեին հարուստ հնարավորություններ կրթության ու առաջադիմության համար, և եթե չեն օգտվել դրանից, պատճառն այն է, որ օժտված են միայն բարբարոսության և արյուն հեղելու «ընդունակություններով»: Սակայն, բացի մեզ արդեն ծանոթ վայրագ մոլեռանդությունից, ինչպես նաև թուրքական քայքայվածությունից, հետամնացությունից, պատճառը նաև նրանց դավանանքն է, ինչը ուրիշ անգամ էլ ենք շեշտել: Եթե սուլթանը, ինչպես հավաստում են մեր ղեկավար շրջանները, վճռել է վերափոխումներ ու բարենորոգումներ կատարել, նախ պետք է հաշիվը փակի *գաղտնի սոֆտայական կառավարության հետ*, դառնա մահմեդականության հալածիչը, հավատակիցների ու համացեղակիցների գլխից դուրս բերի այն հավատամքը, որը նրանց սովորեցնում է ատել ու արհամարհել որպես *կեղտոտ, որպես քյաֆիրական, որպես գյավուրական* այն ամենը, ինչ քաղաքակրթության պտուղ է, այն ամենը, ինչ Եվրոպայից է, այսինքն՝ այն ամենը, ինչ թուրքական չէ: Այն ժամանակ կարող ենք գլուխ խոնարհել, եթե նույնիսկ հավատանք, որ թուրքական ցեղը կարողանում է վերածընվել, և դրա հետ պիտի հաջողի քրիստոնյա ցեղերին ենթարկել իրեն: Սակայն դա հնարավո՞ր է: Հավատու՞մ են դրան մեր դիվանագետները: Բայց մենք, ինչպես նշել ենք, չենք կարող դասախոսություններ կարդալ մեր դիվանագետներին, որոնք, ինչպես ամեն կառավարություն, յուրովի են նայում իրենց վարած քաղաքականությանը: Բացի այդ, կառավարությունը ներկայացնում է միայն Բուլղարիան (՞), և ոչ թե նաև բուլղար ստրուկներին, որոնք գտնվում են թուրքական լծի տակ և որոնց օրինական տերը թուրքի չալման է: Ճշմարիտ է, որ եթե մեր կառավարությունն ավելի հայրենասեր լիներ և ավելի ճկուն, օժտված քաղաքական ավելի մեծ եռանդով Մակեդոնիայի և բուլղարների համար այս բացառիկ ժամանակներում, կողմնակի ճանապարհներով, կարող էր շատ բան անել: Սակայն դա կառավարության գործն է, ինչը մենք, Մակեդոնիայի զավակներս, չենք կարող իմանալ և ոչ էլ մեզ իրավունք է վերապահված պարսավելու նրան... Եղածից էլ ենք շնորհակալ, որովհետև անցյալ տարի «Վոենեն լիստի» միջոցով լսեցինք անջատողականության մահահունչ երգն ու քարոզը... Գուցեև կառավարությունն ունի գործողության իր խորհրդատու ավետարանը, ուստի պետք է նրան հանգիստ թողնել:

Գոհ ենք նաև այն իրավիճակից, որ ամենաավերիչ պառակտողականությունը վերևից չի հովանավորվում... Սակայն, որպես այս դժբախտ երկրի զավակներ, մենք, ցավոք, չենք կարող հարցնել, թե ի՞նչ են անում այնքան բարձրագոչ «վերին» ու «ստորին» մակեդոնական կոմիտեները: Մեր հայրենիքի համար այս լարված իրավիճակում որևէ բան անու՞մ են: Գիտե՞ն իրենց անելիքը: Ամոթ, եթե այս կոմիտեներն ուզում են ամեն ինչ ձեռք բերել բուլղարական կառավարության միջոցով: Բալկանյան թերակղզում այնքան բերք կա, որ նույնիսկ մի ծուռումուռ հեռանկար կարող է փրկարար երանգ հաղորդել ազատագրական շարժմանը: Իսկ երբ խնդիրը վերաբերում է այս սրբազան գործին, բոլոր միջոցները թույլատրելի են, և մակեդոնական կոմիտեն, եթե իրոք ներկայացնում է մեր երկիրը, պետք է հեռանա այդ որջից, որտեղից բորբոսի հոտ է գալիս: Պայքարը պետք է տեղափոխել այլ տարածքի վրա, և, մեր համոզմամբ, այնտեղ է ռայայի փրկությունը: Միայն ձևի չոր ցուցադրումը կարող է հետաքրքրել Սոֆիայի թուրքասերներին... Ավարտելով մեր այս հոդվածը, մենք, սոցիալ-դեմոկրատների նման, բացականչում ենք. «Ժողովուրդնե՛ր, որ կրում եք թուրքական լուծը, միացե՛ք... Միացե՛ք, դուք՝ մակեդոնացիներդ՝ ալբանացիների հետ, հայերդ՝ կրետացիների հետ, միացե՛ք, հարաբերակցե՛ք, քանզի մոտ է ժամը Թուրքիայի կործանման... Ուժ ու պաշտպանություն փնտրեք ձեր կոշտացած ձեռքերում, փրկությունը ձեր միասնական գործողության մեջ է: Մակեդոնացինե՛ր, ձեզնից թոթափեք ստրկական ոգին:

Ձեզ պարզապես խանգարում են մեկ նպատակի շուրջ համախմբվելու: Եռանդով ու արիությամբ նայեք ազատագրական պայքարին:

Գործի՛, քանզի ժամանակը արտակարգ տագնապալի է դառնում»:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ, ԳԱՂԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱԼԱՆՆ ՈՒ ՊԱՏՎԱԶՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Չնայած բոսֆորյան սատրապի ասիական-մանաֆական միջոցառումներին, ինչպես նաև թուրքական անատոլա-բյուզանդական կառավարության ջանքերին, որպեսզի եվրոպական ոչ մի ներկայացուցչի թույլ չտրվի թափանցելու Սասունի մարզը, մարդկային անօրինակ սպանդի այդ թատերաբեմը, արգելվեն թշվառ հայ ժողովրդի նկատմամբ կատարված վայրագությունները տեղում բացահայտելու նպատակով ձեռնարկված որոնումները, այնուամենայնիվ, մեծ կամքի տեր ու անսահման համբերությամբ օժտված մի թղթակից կարողացել է թափանցել այս վայրերը, ավելի քան 7 ամիս մանրակրկիտ հետազոտել ամեն ինչ և կազմել հետևյալ զեկույցը, որը հանձնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը: Ահա այն.

«Հայերը, որոնք ապրում են Մուշից հարավ գտնվող լեռնային վայրերում, արտակարգ ամրապինդ, խիզախ մարդիկ են: Նրանք այդպիսին են դարձել քոչվորների և քրդերի հետ հաճախակի ընդհարումների բովում: Վերջիններիս մեջ իշխում են մի տեսակ ավատական կարգեր: Քրդական մի խումբ առաջնորդներ, որոշ հայկական գյուղեր իրենց սեփականությունը համարելով, դրանց վրա հարկադիր տուրքեր են դնում և հրահրում են հայերին՝ քրդական իրենց թշնամի ցեղերի դեմ: Տալվորիկն ու մերձակա մի քանի գյուղեր վերջին տարիներին հրաժարվել են կառավարությանը տուրք տալուց, քանի որ չեն կարող քրդերի վերցրածից ավելին տալ: Ահա թե ինչպիսի վայրեր և մարդիկ էին հարկավոր հայ ագիտատորներին, և նրանք շուտով հայտնվեցին այնտեղ: Կառավարությունը, տեղեկանալով, որ հիշյալ վայրերում թաքնվում են նման քարոզիչներ, 1892-1893 թվականների ձմռանը Բիթլիսում հավաքում է շրջակա վայրերի քրդական առաջնորդներին և, ըստ էության, հրամայում է գարնանը հարձակվել հայերի վրա, խոստանալով թալանի ամբողջ ավարը թողնել նրանց, իսկ *ամբողջ պատասխանատվությունը վերցնել իր վրա:*

1893 թ. մայիսի վերջին ագիտատոր Դաղմահտյանին[16] ձերբակալում և հանձնում են կառավարությանը, իսկ հունիսի 8-ին ուղարկում են Բիթլիս: Ճանապարհին նրան տանող զափթիեները հրացանի խզակոթով կոտրում են ոտքը, որպեսզի չփախչի: Դաղմահտյանի ձերբակալությունից հետո, Տալվորիկում հայերն սկսում են պատրաստվել: Տալվորիկը մի գյուղ է համանուն տեղանքում, ուր կան ևս 9 փոքրիկ գյուղեր, միմյանցից երկու-երեք մղոն հեռավորության վրա, ընդամենը 400-500 տուն: Քրդերը, առավելապես բակրանլի ցեղից, սկսում են հավաքվել Տալվորիկի շուրջը: Մի քանի օր շարունակ հայերը հետևում են և կռահում, որ նրանք պատրաստվում են հարձակվել գյուղի վրա: Ութերորդ օրը, վտանգը կանխելու համար և մինչ կհավաքվեին ավելի շատ քրդեր, հայերը նախահարձակ են լինում ու մի քանի անգամ կրակում հակառակորդի վրա: Հայերը ընդամենը 60 հոգի են եղել, իսկ քրդերը՝ շուրջ 4000: Սակայն հայերը գտնվում էին բնականից ամրացված դիրքերում, և քրդերն ստիպված էին նրանց վրա հարձակվել բաց տարածությունից: Մութն ընկնելուն պես քրդերը նահանջում են: Նրանք կորցրել էին նվազագույնը 100 մարդ, թեև, հավանական է՝ ավելի քան 200 հոգի: Հայերից սպանվել էր հինգ տղամարդ և մի կին: Մի քանի հրացանից բացի, որոնք լիցքավորվում էին ետևից, մյուս բոլոր հրացանները կայծքարի էին:

Կառավարությունը, հենց որ իմացել է այս դեպքերի մասին, անմիջապես Տալվորիկ է ուղարկել մի քանի գումարտակ՝ ռազմամթերքով ու լեռնային թնդանոթներով: Վալին[17] ինքն է գնացել Մուշ: Պատրաստություններից երևում է, որ հարձակում էին նախապատրաստում, սակայն, կամ վախենալով, որ պարտության կմատնվեն և կամ անաղմուկ գործե-

լու մասին Կ. Պոլսից ստացված հրամանից զգուշանալով, իշխանությունները հանձնարարել են կանոնավոր զորքին քրդերի օգնությամբ պաշարողական դիրքեր գրավել: Զորքերն իրենց վրանները տարածել են մինչև գյուղերի սահմանները, այն էլ այնպիսի սովի ժամանակ, ինչպիսին էր ներկա տարվանը, ձիերին բաց են թողել արածելու արտերում և ոչնչացրել են ամեն ինչ: Վալին իր մոտ է կանչել գյուղի գլխավորներին և հրամայել, որ գնան Մուշ, սակայն վերջիններս չեն համաձայնել, մինչև որ անվտանգության համար գրավ չեն վերցրել: Երբ հայերը ներկայացել են վալիին, սա հարցրել է, թե ինչու՞ են ապստամբել կառավարության դեմ և տուրք չեն վճարում: Հայ մեծամեծները պատասխանել են, թե իրենք չեն կարող ծառայել մի քանի տիրոջ, որ պատրաստ են սիրով ենթարկվել կառավարությանը, եթե վերջինս հոժարի իրենց պաշտպանել քրդերից: Վալին պատասխանել է, թե այդ բանը կկարգավորվի, պայմանով, որ հայերը հանձնեն ամբողջ զենքը և լիովին հնազանդվեն կառավարությանը: Հայերը վստահություն չեն ունեցել կառավարության հանդեպ, ուստի չեն համաձայնվել առաջարկված պայմաններին: Գործն էլ այդպես կանգ է առել: Որոշ ժամանակ անց զորքը տեղափոխվել է Սեմալ գյուղը, իսկ երբ ձյունել է, նրանք հեռացել են քաղաք[18]:

Այդ ընթացքում Դաղմահտյանի ոտքը չէր լավանում: Քաղաքի զինվորական բժիշկները որոշել են ոտքը կտրել, սակայն գտնվել է մի գեղջուկ, աստծուց օժտված վիրահատելու շնորհքով, որը հեռացրել է կոտրած ոսկորի մի մասը և ոտքը չի անդամահատել: Դեռ հիվանդ վիճակում Դաղմահտյանին տարել են դատարան՝ վալիի մոտ: Առաքյալը[19] անվախ էր ու անկեղծ: Նա հայտարարել է, թե այս կողմերն է եկել ժողովրդին համոզելու, որ հաստատակամ լինեն իրենց իրավունքները պաշտպանելու գործում: Ինքը ասելիք չի ունեցել կենտրոնական իշխանության դեմ, բայց նրան հայտնի էին քրդերի և գավառի պաշտոնյաների գործած զուլումները, դրա համար էլ ժողովրդին խորհուրդ էր տվել այլևս չհամբերել ու բացահայտ բողոքել: Բոլոր հայերը համակրում էին այս շարժումը: Եթե գտնվեն մարդիկ, որ կպնդեն հակառակը, ուրեմն՝ ստախոս են, ասել է Դաղմահտյանը: Այս և նման ցուցմունքներ է տվել բանտարկյալը: Մոտավորապես մեկ տարի առաջ հարավային ճանապարհով նրան տարել են Կ. Պոլիս: Այստեղ մի ինչ-որ վճարի դիմաց, ասում են, դարձել է կառավարական վկա: Ուրիշներն ասում են, թե ոչ թե նա, այլ մեկ ուրիշ Դաղմահտյան է եղել: Ինչ որ է, նրա ագիտացիան որոշ չափով հասել է իր նպատակին:

Մոռացա ասեմ, որ Տալվորիկի կռվից հետո քրդերը շատ դժգոհ են մնացել իրենց որպես գործիք օգտագործելու համար և մի քիչ լարվել են կառավարության դեմ: *Քուրդ գլխավորներից ոմանք միամտաբար ցույց են տվել այն գրավոր հրամանները, որոնցով կառավարությունը իրենց*

ստիպել է հարձակվել հայերի վրա: Այս առումով ես մեծ ուշադրությամբ հարցուփորձ արեցի և միանգամայն համոզված եմ, որ ինչպես անցյալ տարի, այս տարի ևս կառավարությունը քրդերին հայերի վրա հարձակվելու գրավոր և բանավոր հրամաններ է տվել, խոստանալով նրանց թողնել հայերից թալանված ավարը, հավաստելով, թե ոչ մի բանի համար պատասխանատու չեն լինելու: Միայն բակրանլի քրդերն են ժխտում, որ իրենք մասնակից են եղել այդ գործերին: Սասունի քրդերը չկամությամբ են մասնակցել, գիտենալով, որ միևնույն է՝ այսպես թե այնպես ստիպելու են այդ բանն անել: Նրանք զբաղվել են բացառապես կողոպուտով: Իսկ ոմանք գաղտնի օգնել են հայերին, որպեսզի վերջիններս փախչեն: Իշխանությունները քրդերի երեք գլխավորներին բանտարկել են, պատճառաբանելով, թե ինչու ժամանակին չեն հայտնել կառավարությանը, որ հայերի մեջ շարժում կա, և կամ հայերի դեմ կռվելիս անհրաժեշտ եռանդ չեն դրսևորել, կամ էլ՝ թե մեկի, թե մյուսի համար:

Թեթևակի հիշատակեմ մի քանի դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել վերջին ծմեռը: Ոչ միայն Բիթլիսի հայ հարուստները, այլև հեռավոր շրջաններում և գավառներից դուրս գտնվող հարուստ հայերը ուղարկվել են Բիթլիսի բանտ, որտեղից նրանք ազատվել են միայն ամեն ինչ տալուց կամ պահանջվածի համար վճարելուց հետո: Եվ, որպեսզի առավել մեծ ճնշում գործադրեն, փետրվարի 8-ին, Մարգար անունով մի ուսուցչի[20], որն իբր թե անցյալ ձմռանը Ավզուդում սպանել է մի թուրք ոստիկանի, հրապարակավ կախաղան են բարձրացրել: Մինչ այդ, Մարգարը գնացել է Կ. Պոլիս Մուսա բեյի[21] դեմ վկայություն տալու, միաժամանակ, իր համագյուղացիներին հորդորելով, որ գլուխ չծռեն քրդական զուլումի առջև: Ինչպես երևում է, ուզեցել են վրեժխնդիր լինել: Նա վկայել է, որ հարուստ հայերից պլոկած գումարը 20000 լիրայից պակաս չի եղել, որովհետև հայտնի է դարձել, որ միայն մի տուն վճարել է 1200-1300 լիրա:

Բայց անցնենք ավելի թարմ դեպքերին: Գարնանը, մայիսի վերջերին, հենց որ ձյունը հալվել է, մի գունդ շարժվել է դեպի Սեմալ և Շենիկ գյուղերը, որոնք գտնվում են Մուշից 11 մղոն հեռավորության վրա, այս տեղերի գլխավոր ճանապարհին: Ձմռանը քրդերը լցվել են հուզումներով հղի վայրերը և պահել գրեթե պաշարողական դրության մեջ, մանավանդ՝ Տալվորիկը: Քրդերից ոմանք իրենց վրանները տարածել են մինչև Սեմալի մոտակայքը, և ժամանակ առ ժամանակ իրենց հոտերն ավելացրել մերձակա Մոտկանի գյուղերից գողացված անասուններով: Համբերությունը կորցրած՝ գյուղացիները հավաքվել են, միասին հարձակվել քրդերի վրա և խլել իրենց ոչխարներն ու մի բան էլ ավելի: Ընդհարման ժամանակ երկու քուրդ է սպանվել: Քրդերն անմիջապես վերցրել են սպանվածներին և տարել Մուշի վալիի մոտ: Առավել մեծ աղմուկ բարձ-

ռացնելու համար, սպանվածների մարմինները այլանդակել են և կառավարչին հայտնել, որ լեռներում վխտում են հայ և օտարազգի զինվորներ: Այս դեպքը պիտի որ պատահած լինի հունիսի վերջին (1894 թ. - *թարգմ.*): Ավելացնենք նաև, որ Գալիեմսուրի և Ալիանքի գյուղացիները, միասին շուրջ 60 տուն, այլևս չդիմանալով քրդերի կողոպուտին, թողել են իրենց տները և փախել արևելք, դեպի Շենիկ և Սեմալ գյուղերը:

Բայց շարունակենք. *կառավարությունը քրդերին իրավունք և ազատություն է տվել, որ ինչ կարող են անել հայերի նկատմամբ՝ անեն*: Տեղում գտնվող երկու քուրդ առաջնորդներից մեկը, զորքի հրամանատարների հետ խորհրդակցելուց հետո, 50 ձիավորներով գնացել է Շենիկ և Սեմալ գյուղերի մոտերքը, կանչել է նրանց առևտրականներին և պահանջել 20000 լիրա: Հայերը պատասխանել են, թե ձեռքի տակ չունեն այդքան գումար, բայց կարող են փոխարենը ապրանք տալ: Այս պատասխանը քրդերին դուր չի գալիս, որոնք առանց այդ էլ կռվի առիթ էին փնտրում: Նույն գիշերը նրանք հարձակվում են քնած երկու պահապան հայ հովիվների վրա և մեկին սպանում: Առավոտյան հարձակվում են երկու գյուղերի վրա, հրկիզում, որի հետևանքով կռիվ է բորբոքվում հայերի և քրդերի միջև: Հայերը ինչքան կարող են պաշտպանվում են՝ ծառերի և ժայռերի ետևում թաքնված: Այս ընդհարման ժամանակ սպանվել է 20 քուրդ, իսկ հայերից՝ 4 տղամարդ և մի կին: Կռվի ընթացքում հայ կանայք օգնել են տղամարդկանց՝ ջուր, պարեն և զինամթերք հասցնելով: Ամբողջ 10 օր կռվել են հայերն ու քրդերը: Առհասարակ, հայերն ամուր էին պահում իրենց դիրքերը և նույնիսկ մի քանի անգամ ետ են մղել քրդերին:

Այդ ժամանակ վալին շտապել է գործող և պահեստի զորքեր կենտրոնացնել: Տարբեր կողմերից նա հավաքել է 15-16 գունդ: Սրանց միացել են քրդական բոլոր ցեղերը՝ հետևակ ու հեծյալ, բացառությամբ բակրանլի քրդերի: Քրդերին առաջ են թողել, սակայն հայերը կարողացել են պաշտպանվել, նույնիսկ նրանց հաջողվել է մի քանի անգամ ետ մղել հակառակորդի հարձակումը: Ինչպես երևում է, քրդերն այնպես էին հուսալքված նախորդ տարի Տալվորիկի մոտ կրած պարտությունից, որ եթե օգնություն չհասներ, նրանք չէին կարող հաղթանակ տանել հայերի նկատմամբ: Սակայն, երբ նկատել են, որ քրդերը տատանվում են, թուրքերը նրանց ավելի լավ զենքեր են տվել:

Չնայած դրան, հայերը դիմադրել են: Միայն այն բանից հետո, երբ նրանք տեսել են, որ քրդերին միացել են կանոնավոր զորքի ստվար զանգվածները, որոշ չափով տեղի են տվել: Որքան տեղեկացա, նրանք ոչ մի զենք չեն պարպել կանոնավոր զորքի դեմ. գոնե դա իրականություն է: Զորքի հրամանատարությունը առաջարկել է անձնատուր լինել, խոստանալով, որ ներման կարժանանան: Մի քահանա և Սեմալի 40 մեծամեծներ ենթարկվել են հրամանին, զենքը վայր են դրել և անձնատուր

եղել: Սրանք երկու օր պահվել են թշնամու ճամբարում և մանրակրկիտ հարցաքննության ենթարկվել: Իշխանությունները համոզվել են, որ լեռներում հայերից բացի ուրիշ կռվողներ չկան, իսկ նրանց պաշարներն էլ սպառվելու վրա են: Երրորդ օրը խեղճ հայերին, որոնց մեղքը միայն այն էր, որ պաշտպանվում էին քրդերից և հավատացել էին կառավարության ազնիվ խոսքին ու ներողամտությանը, շարել են մի խանդակի մոտ, ապա թուրք զինվորները, հրաման ստանալով, հարձակվել են և հրացանների սվիններով ու խզակոթերով նրանց գցել խանդակի մեջ ու կիսակենդան թաղել:

Այնուհետև զորքը շարվել է շքերթի: Բիթլիսի վիլայեթի վալին՝ Հասան Թահսին փաշան, Գելիեգուզանում (Գալին),[22] բարձրացել է մի գերեզմանաթմբի վրա, դուրս բերել սուլթանի ֆերմանը, կախել է կրծքից և մի էֆենդի-քարտուղարի կարգադրել է կարդալ այն: Ֆերմանի իմաստը հետևյալն էր. *այն ատելի գյուղերը, որոնք մեղադրվել են ըմբոստության մեջ՝ հիմնահատակ կործանել: Վալին ճառ է ասել՝ զորքին և քրդերին հրահրելով, որ կարեկցություն չցուցաբերեն ոչ մեկի և ոչնչի նկատմամբ, զի ինչ որ անում են, անում են սուլթանի և մարգարեի համար*: Չկարողացա ճշտել, թե ե՞րբ է կարդացվել սուլթանի այդ հայտարարությունը: Ենթադրում եմ, որ այն ընթերցվել է օգոստոսի երկրորդ կամ երրորդ շաբաթվա մեջ[23]:

Այժմ կոտորածի մասին, որը հաջորդել էր այս դեպքերին, բայց չգիտեմ ո՞րտեղից սկսեմ և ի՞նչ ասեմ: 19-րդ դարի արևմտականները ինձ չեն հասկանա: Այդուհանդերձ, փորձեմ անդրադառնալ մի քանի փաստերի: Ասացի, որ քրդերի դեմ կռվելիս հայերի պաշարները գրեթե սպառվել էին, ուստի չգիտեին ինչով դիմադրեին զինվորներին, թեև հնարավոր է, որ ծայրահեղ հուսահատության մեջ ոմանք իրենց կյանքը ըստ ամենայնի թանկ են ծախել: Հենց որ իմացել են, թե ինչ ճակատագրի են արժանացել հանձնվողները, ոմանց հաջողվել է փախչել: Ասում են, ոմն Պետո՝ Գալիհից, քրդերի մեջ ճանաչված էր վերքեր բուժելու իր արվեստով, վերջիններիս օգնությամբ փրկվել է իր ամբողջ ընտանիքով, բայց նրա ունեցվածքը ևս թալանվել է: *Հետո քրդերն արցունքն աչքերին պատմել են հայկական գյուղերում, թե չնայած հայերն իրենց թշնամիներն են, այնուամենայնիվ սիրտ չեն արել սպանելու կանանց ու երեխաներին, ինչպես արել են զինվորները: Բայց շարունակենք: Բոլոր հայերի տները հրկիզվել են, մեծահասակներն ու փոքրերը, տղամարդիկ ու կանայք սրի են քաշվել: Ձեռքներն ընկած երիտասարդ տղաներին կապկպած տապալել են գետնին, վրաները չոր փայտ դիզել և վառել՝ մինչև այրվել են: Ուրիշներին կտոր-կտոր են արել: Շենիկում մի տան մեջ հավաքել են շուրջ 50 տղամարդ, կանայք ու երեխաներ և տունը կրակի են տվել, իսկ զինվորները շուրջը հսկել են, որ ոչ ոք դուրս չպրծնի*: Մի տղա փորձել է

փախչել, բայց խոցել են սվինով ու տուն վերադարձրել, որպեսզի այրվի: Գերգոն,[24] գյուղի մեծահարուստներից մեկը, բռնվել և բերվել է Զիլանի[25] շեյխի և զորքերի հրամանատարի մոտ: Անցյալ տարվա հայ-քրդական ընդհարումների ժամանակ Գերգոն իբր վիրավորել է շեյխի եղբորը: Եվ վրեժխնդիր զինվորներն ու քրդերը Գերգոյին տարել են իր տունը, ուր անկողնում պառկած է եղել նրա կինը, որը մի քանի օր առաջ էր ծննդաբերել: Նորածնին վերցրել և դրել են մոր կրծքի վրա ու երկուսին ջարդել, երկու կտոր արել: Գերգոյին տարել են հեռու և սպանել: Հետո մարդիկ գտել են նրա շապիկը, որը կարված է եղել յուրահատուկ կտորից, սվիններով ու դաշույններով ծակծկված 20 տեղից: Գերգոյի եղբոր կինը, արտակարգ գեղեցկուհի, մի քանի օրով պահվել է զինվորների մոտ և բռնաբարվել, որ հավատը փոխի, սակայն, տեսնելով, որ անդրդվելի է, սպանել են: Գերգոն, կինը, երեխան և Գերգոյի երկու եղբայրների կանայք սպանվել են, իսկ մյուսներին հաջողվել է փախչել:

Սեմալում, ուր կար 50-60 տուն, 12-ը լրիվ քանդվել են: Գալինում 52 հոգուց բաղկացած մի գերդաստանից միայն երկուսը՝ մի ծերունի և նրա թոռնիկն են փրկվել: Հարյուրավոր կանայք ու մանուկներ փակվել են Գալինի եկեղեցում: *Կանայք պատվազրկվել են և ապա սպանվել: Մի տան մեջ այնքան մարդ են մորթել, որ արյունը շեմից դուրս է հոսել*: Գալինից մի խումբ գեղեցկուհիներ, որոնցից երկուսը կույս, հինգը՝ Հերինգից[26] և չորսը՝ Արհնիկից, պահվել են զինվորների մոտ: Մի քանի օր չկարողանալով ստիպել, որ ընդունեն իսլամը, գազանաբար մորթել են: Զինվորներից մեկը վերցրել է 11 տարեկան մի աղջնակի, մեկ ուրիշը փորձել է խլել նրանից, կռվել են, աղջնակի առաջին տերը կրակել է և տեղն ու տեղը սպանել ախոյանին: Մի պառավ՝ թոռան հետ, տասը-տասներկու տարեկան, եկել է զորքերի ճամբար, որպեսզի սպաներից գթություն աղերսի: Դեռ խոսքը չավարտած՝ մի զինվոր թիկունքից սվինահարել է նրան: Սպան սաստել է զինվորին և ասել, որ տղային վերցնում է: Երկու շաբաթ տղան կենդանի է մնացել: Մի օր սպան տղային ուղարկել է մոտակա աղբյուրը, որ ջուր բերի: Հինգ րոպե անց կրակոց է լսել: Սպան սարսափած դուրս է նետվել և իր փոքրիկ ծառային տեսել է գետնին փռված՝ մահվան ճիրաններում գալարվելիս:

Ամենուր սպաները զինվորներին ստիպել են վայրագություններ անել, որից շատերը հրաժարվել են: Իմ վստահությունը վայելող մի զինվոր արել է հետևյալ պատմությունը... Նրանք տեսել են մի կին՝ «երկու հոգով» (այսինքն՝ պատճառավոր - *ծ. թ.*), որ փախչում էր մոտակա գյուղից: Սպան հրամայել է կրակել նրա վրա: Բայց ինքը չի ցանկացել սպանել և կրակել է այնպես, որ չկպչի կնոջը: *Սպան կատաղած հարձակվել է զինվորի վրա, սաստիկ ծեծել, վերցրել է հրացանը և սպանել խեղճ կնոջը: Ապա վազել է սպանվածի մոտ, որովայնը ճեղքել և դուրս բերել դեռ*

կենդանի երեխային: Նման դեպքեր մի անգամ չէ, որ պատահել են: Եվ մի զինվոր չէ, որ հետագայում խոստովանել է, թե սպաները հաճախ են հարկադրել դաժանություններ գործել: Մի գյուղի մոտով անցնելիս փողոցում տեսել են գետնին նստած մի երեխա: Սպան զինվորին հրամայել է անմիջապես սպանել նրան: Սակայն զինվորը համարձակություն է ունեցել հարցնելու, թե այդ փոքրիկը ինչ է արել, որ նրան մահվան բաժին անի: Պետը հարցրել է զինվորին, թե՝ չլինի «քյաֆիր», այսինքն ապստամբ է դարձել, վերջինս ստիպված թրի երեսով խփել է երեխային ու անցել գնացել: Մի քրդուհի մարագում թաքցրել է 20 մանչուկների և ամեն օր գոգնոցով նրանց հաց է տարել: Հացը շպրտում էր հեռվից և շտապ հեռանում, որ տեսնող չլինի: Մի օր, սակայն, զինվորները հետևում են և բռնում քրդուհուն՝ գոգնոցում պահած հացով: Եվ հայտնաբերելով երեխաներին, անմիջապես կոտորում են նրանց: Մի քանի զինվոր, որոնք դես ու դեն էին ընկել զոհեր գտնելու համար, հարձակվել են չորս փոքրիկ երեխաների վրա և բերել հազարապետի մոտ: Մի քանի օր անց մայրը, իմանալով երեխաների տեղը, գալիս է զորակայան և տեսնելով երեխաներին՝ ուշագնաց է լինում: Հենց որ ուշքի է գալիս, հազարապետը դիտավորյալ հրամայում է մոր աչքերի առջև ծեծել երեխաներին: Մի ուրիշ մայր, օրորոցի հետ երեխային գրկած փախչելիս, շփոթվել, խփվել է ծառին և երեխային բաց թողել ձեռքից: Նրանց հալածող զինվորը հասել է և երեխային շամփրել սվինի վրա, իսկ մայրը կարողացել է մի կերպ ճողոպրել ծառերի ու թփերի արանքով:

Զինվորներն իրենց վրանները ցրել էին ամենուր: Միայն Տալվորիկում կային շուրջ 150 վրաններ: Եվ ամեն առավոտ զինվորներից շատերը դուրս էին գալիս գյուղացիներ որսալու: Նրանք ամեն տեսակ հնարներ էին մոգոնում իրենց զոհերին հայտնաբերելու համար: Պատահել է, որ մայրերը խեղդել են իրենց երեխաներին՝ չմատնվելու համար: Տալվորիկի միջով հոսող կատաղի գետի գահավեժ ափերին նստած զինվորները զոհերին շամփրել են սվինների վրա և նետել արագավազ ջրերի մեջ: Տալվորիկում մի երիտասարդ քահանա համոզել է 70 հոգու, որ գնան իր հետ հանձնվելու: Մի երիտասարդ տղա չի ուզեցել հետևել նրանց, բարձրացել է մոտակա բլրակը և այնտեղից դիտել, թե ինչ է պատահելու իր ընկերների հետ: Երբ այս վերջինները հասել են զինվորական ճամբար, քահանային առանձնացրել են մի վրանում, իսկ մյուսներին պահակի հսկողության տակ տարել են մեկ այլ տեղ և ստիպել, որ գետինը փորեն: *Երբ փորել են մի մեծ խանդակի չափ, նրանց սպանել են, կտոր-կտոր արել կամ, ինչպես վկան է ասում՝ «կտրատել են, ինչպես թութունը» և լցրել խանդակը: Եվ որպեսզի ծիծաղեն մարդկային մսի այդ կույտի վրա, բերել են մի շուն, նրան ևս կտրատել ու նետել են մարդկային աճյունների վրա, ապա նոր միայն հողով ծածկել: Ճամբար վերադառնա-*

լով, այս գազանները դուրս են բերել բանից անտեղյակ քահանային, խաչել մի գերանի վրա, մաս-մաս կտրատել և, որքան հնարավոր է, կտորները հեռուն շպրտել տարբեր ուղղություններով: Քրդերը քահանայի պարեգոտն ու գլխարկը տարել-ծախել են հայկական մի գյուղում: Քահանայի եղբայրը ճանաչել է եղբոր պարեգոտը: Եվ հիմա դա ինձ մոտ է: Մեկ այլ վայրում մի ուրիշ քահանայի հետ վարվել են այլ ձևով. վզին գցել են շղթա, և երկու զինվոր սկսել են ձգել: Քահանան հենց ուշաթափ էր լինում, թուլացնում էին՝ մինչև կրկին ուշքի գալը, ապա նորից տանջում էին: Այս միջոցը կրկնվել է մի քանի անգամ, մինչև կորցրել է գիտակցությունը: Ապա սվինները շարել են ուղղահայաց և զոհին նետել սվինների վրա: *Վեց թե յոթ քահանաներ սպանվել են ամենազազրելի եղանակներով:*

Այստեղ նկատենք, որ դիմադրել են միայն Շատախի գլխավոր գյուղերը, որոնք հիշատակեցի իրենց անուններով, ապա Տալվորիկի և մերձակա մի քանի այլ գյուղեր: Որքան տեղեկացա, մյուս բոլոր գյուղերի վրա հարձակվել են առանց դիմադրության հանդիպելու: Վերջում հիշատակեմ նաև մեկ այլ յուրահատուկ դեպքի մասին: Քրդերը և զորքը հարձակվել և ավերել են մի գյուղ: Վերադառնալիս հանդիպել են կույր հայ մարդու, որը լսել է պատահածի մասին և ստույգ մի բան իմանալու համար նույնիսկ հանդգնել է հարցնելու, թե ինչը ինչպես եղավ: Քրդերը պատասխանել են, կեղծելով, թե իրենք ևս հայեր են և հայտնել, թե գյուղացիները դիմադրեցին ու ետ մղեցին քրդերին: Խեղճ կույրը ժպտացել է և այդ ժպիտի համար տեղն ու տեղը սպանվել:

Օգոստոսի 25-ը նշանավորվեց մեծ կոտորածով: Նաև օգոստոսի 31-ին՝ սուլթանի գահակալության օրը, շատ մարդիկ են կորստյան մատնվել որպես ակներև ապացույց այն նվիրվածության, որ քրդերն ու զորքը տածում են *իրենց մարգարեի և տիրոջ նկատմամբ:*

Տալվորիկի և Շատախի միջև կա մի լեռ՝ Անտոք անունով: Լեռան փեշերին կան գահավեժ ժայռեր, իսկ լանջերը լավ ծառապատված են: Ռազմամթերքի ու պարենի պաշարով ապահովված մի փոքրիկ խումբ այստեղ կարող է մնալ անպարտելի: Դեռ թշնամական գործողությունները չսկսած, որոշ գյուղերի բնակիչներ փախել են այդ լեռը՝ իրենց հետ տանելով ունեցվածքից ու հոտից որքան կարող են: Առաջին փախստականներին անընդհատ գումարվել են թշնամուց խուսափած նորերը: Ի վերջո, զորքն ու քրդերը պաշարել են լեռը: Այնտեղ թաքնված հայերը օր-օրի ստիպված են եղել սպառել իրենց պաշարները, իսկ քրդերից ու զորքից ոչ ոք չի իմացել ի՞նչ ճանապարհով մոտենալ լեռան գագաթին: Վերջում հայտնվել է մի աղա, Ամառ անունով, բակրանլի քրդերից Գակոյի որդին, որը գիտեր լեռան գաղտնի արահետները: Նա առաջնորդել է քրդերին ու զորքին հայերի վրա հարձակվելու: *Ասում են, այս ծառայության համար Ամառը սուլթանից պարգևատրվել է ինչ-որ զարդանշանով:*

Սակայն ինձ չհաջողվեց հանդիպել որևէ մեկի, որ տեսած լիներ այդ զարդարանքը: Եվ այսպես, մի առավոտ քրդերն ու զորքը բարձրացել են լեռան գագաթը: Սարսափը պատել է հայերին: Նրանք ամեն կողմից պաշարվել են: Ճիչերը, կանչերը արձագանքել են լեռան բարձունքներում: Շատերն ընկել են թշնամու գնդակների տարափի տակ, ապա սկսվել է կոտորածը՝ թրերով ու սվիններով: Ասում են, թե կոտորվել է 40000-50000 մարդ: Սակայն այս թիվը հավանորեն չափազանցված է: *Դիակները դիզվել են նավթի մեջ թաթախված փայտերի վրա, որ շուտ վառվեն:* Իսկ ժայռերի ու թփուտների մեջ սպանվածներին թողել են անթաղ, որպեսզի ագռավները կտցահարեն:

Այս հարձակումը տեղի է ունեցել սեպտեմբերի սկզբներին կամ օգոստոսի վերջին օրերին՝ մոտավորապես սուլթանի գահակալության տոնին: Այսքանով ավարտվել է հայերի դեմ կազմակերպված արշավանքը, չնայած զինվորները դեռ թափառում էին նոր զոհեր որսալու համար: Նրանք փնտրում էին հատկապես Գևորգ էֆենդիին, նրա ընկերներին ու նրանց զինապահեստները: Մի գյուղացի, մահվան սպառնալիքի տակ, ստիպված է եղել ցույց տալ այն քարայրը, որտեղ թաքնված էին Գևորգ Չաուշը և նրա տասը ընկերները: Եվ բոլորն էլ բռնվել են կենդանի: Նրանց մոտ գտել են զենքեր, որոնք լիցքավորվում էին ետևից և մի քանի ռումբ: Անկասկած, հայերից ոմանք ևս ունեին այդպիսի զենքեր: Բայց կասկածում եմ, որ հայերի մոտ գտնվող այդպիսի զենքերի թիվը 10-ից կամ 20-ից ավելին լիներ: Ինչ վերաբերում է ձեռնառումբերին, չկարողացա տեղեկանալ, թե հայերը դրանից օգտագործե՞լ են, թե ոչ: Քրդերից ոմանք հավաստում էին, որ, իսկապես, ինչ-որ բան էր տրաքվում իրենց դիմաց ու միանգամից սպանում 20 մարդ: Բայց ես հակված եմ հավատալու, որ այս ամենը քրդական երևակայության արդյունք է, որի պտուղն են նաև այլ պատմություններ, ինչպես և այն պատմությունը, թե օտարների օգնությամբ օդապարիկով Անտոք լեռն են բարձրացվել թնդանոթներ: Վերոհիշյալ տասնմեկից բացի ծերբակալվել և բանտարկվել են տասնվեց հոգի ևս, որոնցից մեկը՝ 12-15 տարեկան մի տղա:

Ոչխարներից, կովերից ու այլ ապրանքներից բացի, քրդերը, որպես ավար, տարել են նաև շատ կանանց ու երեխաների: Ասում են՝ միայն բակրանլի ցեղի քրդերը առևանգել են 400 կին: Քրդերի ու զորքի, մանավանդ սպաների տարած կանանց ու երեխաների թիվը հասել է մոտավորապես 1000-ի: Ջիլանի քրդերի առաջնորդն ավարից վերցնում էր մեկ ութերորդը: Նրան բաժին է ընկել 8600 ոչխար ու այծ, 40 ջորի, 33 ընտիր կով, երեք կամ չորս զամբիկ: Այսքանը միայն շնչավոր ապրանքից: Դրանից բացի նրան հասել է շատ հագուստ, գորգեր, ամաններ և այլն: Այս առաջնորդը հայտարարեց, թե իր 14 կամ 15 հազար մարդկանցից սպանվել է 120 հոգի: Նա ասաց, որ սպանվել են նաև շուրջ 150 զինվորներ:

Կառավարությունը, սակայն, ժխտում է, որ զինվորների մեջ կան սպանվածներ: Զիլանի քրդերից սպանվել է 300 մարդ: *Որ քրդերը հրահրվել են ուղղակի իշխանությունների կողմից՝ գրավոր ու բանավոր, բոլորովին չեմ կասկածում:* Ճշմարիտ է նաև այն, որ զորքը, տեսնելով քրդերի անկարողությունը հանձնարարություններն ինքնուրույն կատարելու գործում, ստիպված մասնակցել է ընդհարումներին: Ամենայն հավանականությամբ, զորքը բռնություններով զբաղված է եղել ոչ պակաս, քան երեք շաբաթ, այսինքն՝ օգոստոսի վերջին երկու շաբաթները և սեպտեմբերի առաջին շաբաթը[27]:

Երեսուներկու (32) գյուղ այրվել է, բնակչությունը՝ կոտորվել, իսկ թե հայերից ընդհանրապես որքան մարդ է զոհվել, դժվար է հաշվել: Քրդերը կռիվներից վերադառնալիս համոզված են եղել, որ հրկիզված գյուղերում ոչ մի կենդանի մարդ չեն թողել: Սակայն կասկած չկա, որ շատերը փրկվել են՝ թաքնվելով անտառներում ու քարանձավներում: Ասում են, թե Մուշի նահանգապետը իր մի զեկուցագրում հայտնել է, որ կոտորել են քսան հազար մարդ: Դրա համար նրան պաշտոնանկ են արել և տեղափոխել: Պատմում են, թե Վերջիի կառավարիչը՝ եկամուտների հսկիչը, այս շրջանում սպանվածների թիվը հասցնում է տասը հազարի: Թահսին փաշան զայրացել է զեկույցի վրա և հրամայել է զեկուցագրում գրել, որ կոտորվել է միայն 2000 հոգի: Ես գտնում եմ, որ սպանվածների թիվը 25000-ից պակաս չէ: Տասնվեց հազարը *նվազագույնն է*, և չէի առարկի այն մարդկանց, ովքեր կասեին, թե զոհվել է 36000 հոգի:

Ապա թող մոռացության չտրվի նաև այն փաստը, թե որքան գյուղ որ հրկիզվել է, դրանից ոչ պակասը թալանվել է: Մուկտինգ[28] գյուղը, օրինակ, որ փրկվելու համար վճարել է 1000 լիրա, այդուհանդերձ թալանվել է: 30 տուն ունեցող Պուվի գյուղը թալանվել է, և բոլորը, բացի 8 տնից, թողել հեռացել են գյուղից: Հոսներ գյուղը երկու անգամ դատարկվել է բնակիչներից: Եթե հաշվի առնենք առհասարակ բոլոր կոտորվածներին, գերեվարվածներին, անտուն-անտեր մնացածներին և թալանի հետևանքով ծայրահեղ աղքատության եզրը հասցվածներին, զոհերի թիվը պետք է որ հասնի 30000-ի: Դրան պիտի ավելացնել նաև զորքի բերած հիվանդությունների հետևանքով տարածված համաճարակի զոհերը և այն ծախսերը, որ արվել են հայերի դեմ կազմակերպված արշավանքների մասնակից 10-15 հազար զինվորներին ու 20000 քրդերին պահելու համար»:

(«Թայմս» լրագրից)

1896 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պոլսում բացահայտ կոտորածներն իբր դադարեցին, բնական է, սուլթանի՝ վագրի սիրտը փափկելուց հետո: Բայց գաղտնի սպանությունները, բռնությունները, քաղաքի խուլ փողոցներում ու անկյուններում տղաների ու աղջիկների պատվազրկումները շարունակվում են ասիական ամբողջ վայրագությամբ, որով օժտված են մանաֆներն ու ամեն տեսակ հաստագլուխները: Հայոց համարյա բոլոր խանութներն ու դուքանները փակ են: Մեծ թվով հայեր, գրեթե ամբողջ մտավորականությունը և երիտասարդությունը, ինչպես նաև առավել ճարպիկները արտագաղթեցին գարշահոտ Կ. Պոլսից: Թշվառները, անտուն-անտեր, փախչում են դեպի Բուլղարիա, Հունաստան, Ֆրանսիա[29]:

Իր քաղաքակրթությամբ երևելի և հզոր Թուրքիայի կողմնակից Եվրոպային թուրքերը մեկ անգամ ևս ապացուցեցին, որ իրենք վայրի ժողովուրդ են, ասիական և անկարող են յուրացնել եվրոպական մշակույթը: Այն, ինչ սանկյուլոտները (այլասերված թուրքերի կատաղած ամբոխը) կատարում են Հայաստանում, առնաուտները՝ Մակեդոնիայում, նույնը անում են մոլլաները, սոֆտաները և ոստիկանությունը Կ. Պոլսում, այն էլ՝ եվրոպական դեսպանների քթի տակ, քսան հազար եվրոպացիների աչքի առաջ: Եթե ինչպես որ ձեռնարկվել և ընթանում է հայերի ոչնչացումը, շարունակվի մեկ-երկու տարի ևս, *Հայաստանում հազիվ թե կենդանի մնա հայ տղամարդկանց մի այնպիսի սերունդ*, որը ունակ լինի մտածելու մարդկային իրավունքների մասին: Այնտեղ ամեն օր, ամեն ժամ, նույնիսկ ամեն րոպե ասիական բոլոր միջոցներով մորթվում, կոտորվում ու ոչնչացվում են հայերի լավագույն ուժերը: Հիմա սարսափելի է ապրել շնական Կ. Պոլսում: Այնտեղ տիրում է կատարյալ ասիական անիշխանությունը: Ոչ ոք ապահով չէ իր կյանքի, պատվի և ունեցվածքի համար: Սուլթանը, որն իր ձեռքում կենտրոնացրել է ամբողջ իշխանությունը, բնական է, եթե ցանկանար, կարող էր կոտորածների առաջին օրն իսկ սանձահարել մոլեգնած ամբոխի կատաղությունը, որին առաջնորդում էին ոստիկանությունն ու զորքը, բայց նա ուզեցել է դաժանորեն վրեժխնդիր լինել նրանցից, ովքեր հանդգնել էին խռովել նրա հարեմական հանգիստը: Բոլոր նրանք, ովքեր մոտիկից ճանաչում են սուլթան Աբդուլ Համիդի անձը, միահնչակ պնդում են, որ վայրագությունները կատարվել են նրա հույժ գաղտնի հրամանով: Որովհետև նա ամենամեծ, ամենամոլեռանդ թուրքն է և, ինչպես ամեն մի թուրք, հոգով ու սրտով ատելությամբ է լցված քրիստոնյա աշխարհի հանդեպ: Իսկ հայ ժողովրդի նկատմամբ նրա ատելությունն անսահման է: Նա երդվել է մահմեդական ղուրանի վրա, որ երկրի երեսից վերացնելու է այս դրժբախտ ժողովրդին և կամ նրա թիվը նվազեցնելու է այն աստիճան ու այն-

պես է ջնջելու հայ տղամարդկանց, որ եթե բարենորոգումներ անելու էլ լինի, ղեկավարությունը դարձյալ մնա թուրքերի ձեռքին, մի բան, որը նրան հասկանալի է ու քաղաքավարի: Նենգ, վայրագ, դաժան քաղաքականություն: Այժմյան սուլթանը անգութ, վրեժխնդիր, խորամանկ ու խարդախ մարդ է՝ ասիական մակարդակով: Նա շատ լավ է ըմբռնել բարոյապես փչացած եվրոպական հասարակության թուլությունը (հասկանալի է, ոչ ամբողջ հասարակության, այլ միայն որոշ լրագրերի)՝ կաշառքի միջոցով պարտադրելով գովաբանել և լուսապսակներ ու արժանիքներ հյուսել իր՝ որպես եվրոպական կրթված թագավորի շուրջը, արժանիքներ, որոնցից նա միանգամայն զուրկ է, ինչպես ամեն ասիացի: Ամոթ ու խայտառակություն այդ լրագրերին: Արտահայտվելով մերոնքավարի նման լրագրողների մասին, ասենք *«Թող գետինը բացվի և կուլ տա դրանց»*:

Այդպիսի լրագրողներին կաշառելու համար ասիական խալիֆը տարեկան տալիս է 250000 թուրքական լիրա-չքավորի քրտինք, և թող հարեմական սուլթանը, թիկն տված աննման չերքեզուհիների մեջ, բաշխի այդ քրտինքը եվրոպական մակաբույծներին, որոնք իրենց գրիչներով կրկնակի մարդասպանություն են գործում: Իրավ, ինչ պնդերեսն ու անխիղճն են այդ լրագրողները: Մարդկության համար խայտառակություն է այս դարը, որի ժամանակակիցն ենք: Ամերիկացի բողոքականների *բարեհոգի* մի ընկերություն սուլթանին պարգևատրել է *մարդասերի* վկայականով: Համիդ և մարդասիրություն: Թուրք և մարդկայնություն: Սրանք հակոտնյա հասկացություններ են, մեկը մյուսի հետ չհամատեղվող: Բողոքականների միամտությունը սահմանակցում է կենդանականին: Պարոնայք, սա ծաղր է մարդասիրություն կոչված հասկացության համար և ցույց է տալիս, որ Ամերիկայում, ուր իբր իշխում է կատարյալ ազատությունը, մարդիկ հիմնավոր պատկերացում չունեն թուրքերի ասիական բնույթի մասին, և այդ սանձարձակության հետևանքով բողոքական ընկերություններն իրենց միամտությամբ հիմարանում են այն աստիճան, որ հասնում են անասնական խորհրդածությունների: Սուլթանին անվանել մարդասեր, այն սուլթանին, որի հրամանով ամեն ամիս մորթվում են 500 գյավուրներ, անհեթեթություն է, իսկ եթե ուզում եք՝ նաև խայտառակություն, և միայն ցնդած ուղեղը, մարդկային մթագնած միտքն ու խիղճը կարող են նման բան ասել: Եթե դա անի հունական պատրիարքը[d], ինչ-որ տեղ ներելի է, զի վերջինս սուլթանի դրածոն է, իսկ բողոքականների արածը կատարյալ սրբապղծություն է այն կրոնի, որն իբր իրենք դավանում են:

***

Կան հավաստի վկայություններ, որ սպանությունները, բռնաբարությունները ու թալանը կատարվում են Փոքր Ասիայի երկրաչափական բոլոր ուղղություններով և ծովափնյա բոլոր քաղաքներում, որտեղ կան հայեր: Զմյուռնիայում, Ռոդոսթոյում և այլ քաղաքներում հայերի նկատմամբ իրագործված խժդժությունները, եթե չեն համեմատվում Կ. Պոլսում կատարված դաժանությունների հետ, համենայն դեպս դրանցից նվազ չեն: Դժբախտ հայ ժողովուրդ՝ 19-րդ դարի զարմանք: Խայտառակություն ու ամոթ այս դարի համար, որն ապրում ենք, ծաղրուծանակ քաղաքակրթության համար, խայտառակություն Եվրոպայի համար, քանզի երկրի երեսից վերանում է մի ամբողջ ժողովուրդ:

Ինչու՞ այսքան դաժան դատավճիռ: Ի՞նչ ծանր հանցանքներ է գործել այս դժբախտ, հալածական ժողովուրդը[h]:

Որ այդ ժողովուրդը պահանջում է իր մարդկային ու ազգային իրավունքնե՞րը: Որ այսքան ժամանակ ասիական գազանի կողմից ենթարկվել է թալանի ու հալածանքի՞, որ այս թշվառ ժողովրդին մերկացրել է անատուլիական վագրը և սոսկալի խուզում ու կոտցահարո՞ւմ է: Իսկ Եվրոպան ունի վավերացված իրավասություններ ինչպես այս ժողովրդի, որ հերոսաբար ձեռնոց շպրտեց անգլուխ բռնակալին, այնպես էլ մեր դժբախտ եղբայրների, երիցս թշվառ հայրենիքի՝ Մակեդոնիայի հանդեպ: Ինչու՞ Եվրոպան գոնե հավանություն չտվեց հրեա-բեռլինյան դաշնագրին: Ա՜խ, ստոր ես, Եվրոպա: Ստոր ես և ջհուդական: Իսկ ի՞նչ է անում Ռուսաստանը՝ ուղղափառների ու սլավոնների այս պաշտպանը: Ինչու՞ է քնած ռավանդապահ «քեռի Իվանը»: Եթե չի օգնելու խեղճ հայերին, որոնք ուղղափառ կամ սլավոն չեն, ինչու՞ չի օգնում մեզ՝ մակեդոնացիներիս: Ախ, դատարկ ու խարդախ դիվանագիտություն: Ո՜վ, Աստված իմ: Ո՜վ, ամենափրկիչ Հիսուս Քրիստոս: Կա՞ս արդյոք երկնքում: Տեսնու՞մ ես, թե ինչ է կատարվում երկրի վրա: Դեռ պիտի քարոզե՞ս մեզ, թե ամեն մի իշխանություն Աստծուց է տրված: ...Լավ: Բայց չէ՞ որ վայրի քրդերի ու սոսկալի ալբանացիների իշխանությունը դժոխային չարիք է: Իբլիսի տանջարան... Ա՜խ, անհիծյալ ճիզվիտություն և մոնղոլականություն...

***

Հայկական հեղափոխությունը միայն առերևույթ է դադարել, իսկ իրականում այն եռում է ինչպես ստորերկրյա հրաբուխ, որպեսզի ժայթքի առավել հզոր բոցով: Այո՛: Ընդերքում այն շարունակում է և պիտի շարունակի եռալ այնքան ժամանակ, մինչև հայերը նվաճեն իրենց իրավունքները: Բոլոր հայտանիշների համաձայն, արյունոտ հուզումներն ու խռովությունները պիտի կրկնվեն, և այն ժամանակ տեղի է ունենալու սոսկալի, ավելի ահավոր աղետ: Հայերի վրդովմունքը գնալով սաստկանում է՝ կատաղեցնելով թուրք մոլեռանդ, հաստագլուխ բնակչությանը: Թուրքե-

ին քծնող ամենահաստավիզ, ամենապահպանողական հայերն անգամ Կ. Պոլսում և այլ տեղերում կատարվող վերջին ահավոր դեպքերից հետո դարձան հեղափոխականներ և հրապարակավ հայտարարեցին, թե ասիական Թուրքիայում բացահայտ ոչ մի լուրջ բանի չես հասնի, և հայերին կփրկի միայն հեղափոխությունը: Տարեց թե երիտասարդ հայերն անդադար անդամագրվում են հեղափոխական կոմիտեներին, որպես զինվոր արդարության և ասիական յաթաղանի դեմ սպասվող ահավոր կռվի, որ կարող է բռնկվել վաղը, մյուս օրը, տասը, քսան կամ 50 օր հետո, կամ վեց ամիս անց: *Եվ դա անխուսափելի է ու պիտի կատարվի:*

Շնական Կ. Պոլսում բոլոր քրիստոնյա ժողովուրդների մեջ տիրում է բարդուղիմեոսյան տագնապ:

Չնայած դժոխային այն ատելությանը, որ դարերով առկա է հայերի և ուղղափառ հույների միջև, Կ. Պոլսի վերջին կոտորածների ժամանակ զոհվել է 30-40 հույն, սպանվել են նաև մի քանի բուլղար կաթնավաճառներ ու այգեգործներ: Նույնիսկ ոմանք թողել են իրենց արհեստները և փախել Բուլղարիա՝ Բուրգաս, Վառնա: Կ. Պոլսում այլևս իշխում է տնտեսական աղքատությունը, կատարյալ անտիրությունը, մուրացկանի չքավորությունն ու փողոցային թշվառությունը: Օտոմանյան բանկը, ջհուդական և թուրքոֆիլների այդ որջը, դադարեցրել է իր գործառնությունները: Սնանկացողները մեկը մյուսի ետևից կաթկթում են անձրևի պես:

Ստամբուլի փողոցներում և, հատկապես Սուրբ Սոֆիայի, Ինջիր-Դիբի, Մուսալայի և Դիկիլի-Թաշի թաղերում, ինչպես նաև Սուլեյմանիե Ջամիսիի մերձակայքում, այսպես կոչված սոֆտաների, ուլեմների և մոլլաների որջերում ու կատակոմբներում, որոնք սնվում են հավատացյալների ողորմությամբ և բարեգործությամբ, թուրքերը միայն անառակությամբ են զբաղված: Հայտնվել են նաև պատերին փակցված ազդագրեր՝ տարատեսակ բովանդակությամբ: Դրանցից մեկում քարոզվում է մուսուլմանների ընդհանուր աշխարհազոր և համատարած կոտորածներ կազմակերպել քրիստոնյաների դեմ: Մյուս հայտագրերում՝ կոտորածներ միայն հայերի նկատմամբ, որոնք սասանել են չալմայակիր կայսրությունը, իսկ մեկ ուրիշում ժողովրդին հրահրում են գահից տապալել կատարյալ ենիչերիական սուլթանին, որովհետև գլխավոր պատճառը նա է, նրա խարդախ անհատականությունը, որպեսզի «պետություն և հավատ» հաստատվի այս անելանելի դրության մեջ: Իսկ այլազանության համար կա նաև չորրորդ տեսակի ազդագիր՝ *«Երիտասարդ Թուրքիա»* կուսակցության հայտարարությունը, որն ուզում է կայսրության մեջ համընդհանուր բարենորոգումներ անցկացնել: Ըստ մերոնց՝ դա կոչվում է անձրևից հետո անձրևանոց, կամ թուրքերեն՝ *«Տոնից հետո՝ տոնդ շնորհավոր»*:

***

Երբ այս ամենը կատարվեց Կ. Պոլսում, Անգլիայում, գրեթե հարյուրամյա ծերունու, մեր ժամանակների մեծագույն մարդու և մարդասերի՝ ազնվական Գլադստոնի անձնական նախաձեռնությամբ մի ուժգին փոթորիկ, օվկիանոսային մի ահեղ մրրիկ բարձրացվեց ասիական դահիճների վայրագությունների ու մոլագարության դեմ: Հսկայական հանրահավաքներում, որոնց մասնակցում էին 10-20 հազար մարդ, ժողովուրդն իր վրդովմունքն էր արտահայտում Ստամբուլի բռնակալի դեմ:

Սպիտակահեր ու վրեժխնդիր ծերունին անձամբ քաղաքից քաղաք էր ճանապարհորդում և կազմակերպում հսկայական միտինգներ՝ հոգուտ Հայկական հարցի և, առհասարակ, մուսուլմանների լծի տակ հեծող բոլոր տառապյալների: Ակնածանքով գլուխ խոնարհենք 19-րդ դարի այս լուսավոր ու մեծ մարդու հումանիստական, անշահախնդիր և վեհ ու վիթխարի գործունեության առջև:

***

Մեր առաջին հրատարակության մեջ նշել էինք և այժմ էլ կրկնում ենք, որ ապրում ենք կարևոր քաղաքական ու ճակատագրական ժամանակներում: Ի՞նչ են անում մեր բուլղարները, որոնք ամենից շատ պետք է հետաքրքրվեն նման իրադրությամբ: Ի՞նչ է անում բուլղարական կառավարությունը: Ունի՞ արդյոք գործունեության որոշակի հստակ ծրագիր և լուրջ խորհրդատու, ի՞նչ է մտածում Հին Բուլղարիայի (Մակեդոնիայի) մասին, այստեղ ապրող երիցս դժբախտ միլիոնանոց բուլղար բնակչության մասին, որի ճակատագիրը առավել կամ նվազ չափով նման է հայոց ճակատագրին: Արդյոք մտահոգվո՞ւմ է բուլղար ժողովրդի ամբողջական շահերի մասին: Մտածու՞մ է արդյոք այս երկրում ապրող բուլղարների համար նվաճել գոնե բեռլինյան դաշնագրով նախատեսված իրավունքները: Թե՞ գնալու է երջանկահիշատակ «Վոենեն լիստ» թերթի սադրիչների ճանապարհով: Ափսոս բուլղարական կառավարությանը, եթե որդեգրի մահաբեր անջատողականությունը... Բայց մենք հավատում ենք բուլղար ժողովրդի ամուր կեցվածքին: Այլևս անօգուտ են ամեն տեսակի դիվանագիտական խորամանկությունները: Վարդապետները չեն կարող փրկել Մակեդոնիայի բուլղարներին թշվառ վիճակից: Առկա է չորրորդությունը, ի՞նչ արեց նա:

Մակեդոնական բուլղարի ուղին ինքնին բաց է և ցուցանշված: Ցավոք՝ առաջնորդ չունենք: Շոպական[29] Սոֆիայում բոլորն աշխատում են, բայց թե մեկը չկա, որ ըմբռնի իրադրությունը:

Իսկ իրադրությունը լուրջ է, տագնապալի ու բախտորոշ...

Եղբայրական ձեռք մեկնենք հային և միասնական պայքար, անդադրում, առանց հանգստանալու, մինչև վերջ... Առա՛ջ...

ՀԱՎԵԼՎԱԾ

Գլադստոնի կարծիքը Կ. Պոլսի գազանությունների ու վայրագությունների մասին:

Հայերի նկատմամբ Կ. Պոլսի անօրինակ ու ահավոր սպանդի մասին ահա թե ինչպես է արտահայտվում 19-րդ դարի ամենաբարի մարդը և մեծագույն մարդասերը՝ սպիտակահեր ծերունի Վ. Յ. Գլադստոնը, այն բարերարը, որը բուլղարների համար սարսափելի 1876 թվականին իր ձայնը բարձրացրեց մեր ժողովրդի մարդկային իրավունքների համար և Բաբակի կոտորածների դեմ, որոնք խորապես վրդովեցին «մեծ ծերունու» ազնիվ հոգին:

Արտասովոր այդ մարդը, նշանավոր անգլիացին ու պետական այրը ահա այս նամակն է հղել ոմն Ի. Վինդելին՝ *«Հայաստանը և նրա վշտերը»* գրքի հեղինակին:

«Հարգարժան պարոն,

Շնորհակալ եմ Ձեր սիրալիրության համար, ինձ հաճելի կլիներ, եթե ձեզ հաջողվեր արթնացնել հասարակայնությանը, որպեսզի նա զգար այն ամոթն ու խայտառակությունը, որ կրում է մեր ժողովուրդը մեծ պետությունների հետ միասին՝ համբերությամբ հանդուրժելով Կ. Պոլսի գահին նստած մարդասպանին:

1876 թվականին մեր հայրենակիցներն արտահայտեցին իրենց ազնիվ զգացումները շատ ավելի նվազ այն սարսափների հանդեպ, որ կատարվեցին Բուլղարիայում նույն սուլթանի *հովանավորությամբ*: Բուլղարական այդ դեպքերը մեծապես տարբերվում են հայոց սոսկալի ողբերգությունից:

Ձեզ հավատարիմ՝ Վ. Յ. Գլադստոն»:

Նույն մեծ մարդասերը Փարիզում լույս տեսնող ֆրանսիական «Ֆիգարո» թերթի խմբագրությանն ուղարկել է քրիստոնյաների նկատմամբ թուրքական վայրագություններին վերաբերող հետևյալ նամակը.

«Ձեր խնդրանքով ինձ շփոթության եք մատնում, որովհետև նպատակահարմար չեմ գտնում ֆրանսիական կառավարությանը կամ ֆրանսիական ժողովրդին հորդոր հղել, քանզի հիշողությանս մեջ պահպանում եմ բազում ապացույցներ բարեկամական այն վերաբերմունքի, որին արժանացել եմ միայն Ֆրանսիայում: Մյուս կողմից ես չեմ ուզում անտարբեր մնալ այս հարցի նկատմամբ, երբ հիշում եմ, որ նախքան 1830 թվականը և նրան հաջորդող տարիներին Ֆրանսիան և Անգլիան դաշնակիցներ էին, և աշխարհի մի կետում չէ, որ հանդես են եկել հոգուտ ազատության. այդ համագործակցությունը պատկառելի ավանդ է թողել Եվրոպայի ժողովուրդների պատմության մեջ: Համարձակվում եմ ասել, *որ մեր կողմ բնակչությունն այսօր ավելի համախմբված է իր զգաց-*

մունքների մեջ, քան 1876 թվականին, և այդ իրողությունը հաստատվում է այն գիտակցությամբ, որ այսօր անհրաժեշտ է ավելի վճռականորեն ծառանալ սադրանքների ու սպանությունների դեմ, որոնք, ինչպես բուլղարական սարսափների ժամանակ, *իմ կարծիքով, հրահրված են ուղղակի Աբդուլ Համիդի կողմից:*

Ավստրիական թերթերում կարդացել եմ մտքեր՝ մի տերության մեկուսի գործողությունների մասին: Այս ճգնաժամին, սակայն, կան միայն երկու առաջնակարգ պետություններ, որոնք չեն կարող ազդվել այդ մտքերից: Մեկը Ռուսաստանն է, որը 1878-ին ինքնակամ և ըստ արժանվույն նվաճեց իր վաստակը, ազատագրեց Բուլղարիան և ամրապնդեց բալկանյան մյուս պետությունների ազատությունն ու ապահովությունը: Մյուս ուժը Ֆրանսիան էր, որ 1840-ին իր ձեռքը վերցրեց եգիպտական խնդիրը և ինքը ևս ներգրավվեց եվրոպական պատերազմին: Ֆրանսիան խելամտորեն ձեռնպահ էր մնում ծայրագույն չարիքի հրահրման գործում: Իմ կարծիքով, այն ժամանակ Ֆրանսիան իրավունք ուներ, իսկ մյուս պետությունները անհրավացի էին իրենց վարած քաղաքականության մեջ:

Այսօր մարդասպանը, որ նստած է Կ. Պոլսում, առավել խորամանկ է դարձել, կոտորածը կոտորածի վրա է սարքում և երբ փորձում է արյունահեղությունների պատասխանատվությունը բարդել թշվառ զոհերի վրա, հիշեցնում է այն բազմաթիվ չարագործությունները, որոնք կատարվում են նրա կառավարական մեքենայի միջոցով: Ավելի քան վեց ամիս է, ինչ նրան հաջողվում է իշխել վեց մեծ պետությունների դիվանագիտության վրա:

Ճշմարտությունն այն է, որ այս տերությունները նվաստանում են նրա առջև, և պատմության մեջ չկա նրանց հեզության նախադեպը, որ նրանք ցուցաբերեցին այդպիսի հանդուրժողությամբ: Դրա հետևանքով սուլթանը համարձակություն ստացավ գնալ այն ճանապարհով, որը տվեց նման արդյունքներ և, ըստ երևույթին, բուն խնդիրն այն չէ, թե ուզու՞մ է, արդյոք, կանգ առնել այդ ճանապարհին, թե ոչ, այլ այն, թե երբ և որտեղ ավելի շուտ *կվերսկսի իր մահասփյուռ արկածները:*

Այս վերաբերմունքի հետևանքները հավանորեն պիտի ի չիք դարձնեն նրա՝ չարաբաստիկ և նույնքան չարաբարո ղեկավարվող թագավորության պահպանման վերջին հնարավորությունները: «Exoriare aliguis nostris ex ossibus ultor»[30] Նրա ուժի առջև ծառացած է հարցը, թե արդյո՞ք պիտի արտոնվի նրան՝ նոր, անհամար ոճիրներով ավելացնել զոհվածների առանց այն էլ սոսկալիորեն ուռճացած քանակը: Նախկինում, երբ ես ղեկավարում էի, իմ ամբողջ ուժերով ձգտում էի բարելավել եվրոպական միասնությունը, բայց առանց երկմտության ենթադրում եմ, որ գլխավոր չարիքը, որ վերջին 20 տարիների ընթացքում տեղ է գտել

Թուրքիայում, կատարվել է ոչ թե եվրոպական համաձայնությամբ, այլ դրան հակառակ:

Ինձ թվում է՝ համառոտակի ներկայացրի բավական շատ փաստեր, որպեսզի ընդունելի լինեն այն հորդորները, որոնք տրվում են ձեզ, և քանի որ ինձ իրավունք չի վերապահված բարոյականության ու արժանապատվության դասեր տալ ֆրանսիական ժողովրդին, այլևս ոչինչ չունեմ ավելացնելու: Ես բավարարվում եմ հույս հայտնելով, որ այս ժողովուրդը ներկայիս հանդիսավոր պարագայում պիտի հետևի Նորին բարձրության, նրա անվանն ու բարձր դիրքին արժանավայել քաղաքականությանը, որով նա վաղուց ի վեր գրավել է իր պատվավոր տեղը եվրոպական պատմության և քրիստոնեության մեջ:

Հավարդեն, 1896 թ.,

Վ. Յ. Գլադստոն»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Երկու օր շարունակ Կ. Պոլիսը վերածվել էր իսկական սպանդանոցի: Սա ասվում է առանց որևէ չափազանցության: Օգոստոսի 14-ին և 15-ին ամենադաժան միջոցներով սպանվեցին հազարավոր մարդիկ: Միայն այն բուլղարները, որոնք տեսել են Բաթակի ջարդերը, կարող են որոշ պատկերացում կազմել մահմեդական բնակչության սոսկալի վայրագությունների մասին, որոնք տեղի ունեցան այս երկու ահավոր օրերին: (1876-ին, Բուլղարիայում՝ Ապրիլյան ապստամբության օրերին, թուրք բաշիբոզուկները հրի ու սրի մատնեցին նշված և մի շարք այլ քաղաքներ: Այդ օրերին թուրքերը կոտորեցին շուրջ 30000 բուլղարներ.-*թարգմ.*):

Օգոստոսի 14-ին, կեսօրից հետո, սկսվել է հեղափոխությունը: 40 հայ հեղափոխականներ, զինված ատրճանակներով ու պայթուցիկ ձեռնառումբերով, ծառայողներից աննկատ, թափանցել են Օտոմանյան բանկ: Ոմանք մտել են իբր փող մուծելու, մյուսները՝ իբր փող վերցնելու և այլն: Թուրքական ժամանակով ճիշտ ժամը 6-ին, նախապես տրված ազդանշանով, հեղափոխականները հանել են ատրճանակները և հայտարարել, թե բանկը գտնվում է իրենց տրամադրության տակ: Փոքրաթիվ պաշտոնյաներ հազիվ կարողացել են ճողոպրել, իսկ մեծամասնությունը, փոխտնօրենի հետ միասին, մնացել են ներսում: Մոտակա տեղամասից անմիջապես վրա են հասել ոստիկաններ և շրջապատել հսկայական շենքը: Կարճատև հրաձգությունից հետո ոստիկանները նահանջել են: Շուտով եկել է զորքը, և սկսվել է իսկական ճակատամարտ: Հեղափոխականները կրակել են ատրճանակներից և ձեռնառումբերով մեկ ժամ անց ոչնչացրել պաշարողներից շատերին: Ժամը 2-ի կողմերը Բերայում հայտնի դարձավ եղելությունը: Գալաթան և Բերան (Կ. Պոլսի հայաբնակ թաղամասեր.- *թարգմ.*) լցվեցին մահմեդական ստոր տականքով՝ զինված մահակներով, դաշույններով ու երկաթյա ձողերով: Այս խառնամբոխը կազմված էր մահմեդական ամենաահավոր ու վայրագ ցեղերից՝ լեզգիներից ու քրդերից:

Անմիջապես սկսվեցին սպանությունները: Սկզբում միայն փողոցներում. ճանապարհին հանդիպած յուրաքանչյուր հայ դաժանորեն սպանվում էր մահակներով: Եվ քանի որ նավահանգստի շուրջը՝ Գալաթայում կային հարյուրավոր հայ բեռնակիրներ, առևտրականներ և արհեստավորներ, այնտեղ տեղի ունեցան սարսափելի կոտորածներ: Կարագյոյի կամրջից մինչև Թոփխանե ճանապարհը ծածկված էր դիակներով: Երեկոյան, ժամը երեքն անց կեսից-չորսին, ատրճանակներով զինված հայերի մի ջոկատ հարձակման է ենթարկվում թուրք տականքների կողմից, հայերը վճռում են քաջաբար պաշտպանվել: Մահակներով

զինված սրիկաների ոհմակը փախուստի է դիմում՝ թողնելով հարյուրավոր դիակներ: Հայերը նման դիմադրություն ցույց տվեցին նաև դեպի Թոփխանե տանող իրենց փողոցներում: Այդ ժամանակ երևացին զորքն ու ոստիկանները, և փողոցները մաքրվեցին երկար ու համառ դիմադրությունից հետո: Երբ այս ամենը կատարվեց, անմիջապես Գալաթան լցվեց քրդերով ու լազերով, և սկսվեց հարձակումը խանութների, տների ու խաների վրա: Ոստիկանական սպաների առաջնորդությամբ մի ջոկատ հարձակվեց մաքսատան վրա և գազանաբար կոտորեց 200-ից ավելի հայ բեռնակիրների: Առանց խղճահարության ու գթության սպանվում էին ծերերն ու երիտասարդները, սպանվում էին բացառապես խաղաղ բնակիչներ: Բռնի ուժով բացում էին խաներն ու հյուրանոցները, սպանում էին այնտեղ գտնվող հայերին՝ մայրերի, կանանց ու երեխաների եվրոպացիների, բանակի ու ոստիկանության աչքի առաջ: 40-50-ական դիակներ փռված էին յուրաքանչյուր հյուրանոցի և Գալաթայի յուրաքանչյուր պաշտոնատան առջև: Ոստիկանությունը կատաղեց և ամենաեռանդուն մասնակցությունն ունեցավ սպանություններին: Հասարակության ու ոստիկանության ներկայությամբ գնդակահարվում էին խաղաղ ու անզեն առևտրականներ, արհեստավորներ ու բեռնակիրներ: Գալաթայում մինչև երկինք բարձրացան վայնասունն ու սրտակեղեք ճիչերը: Շատ հայեր, տեսնելով, որ ոչ մի փրկություն չկա, իրենց տներում կամ խանութներում զինվեցին ով ինչով կարող էր, և սկիզբ առավ մի սոսկալի գոտեմարտ:

Գիշերը Գալաթան լցված էր զինվորներով, ոստիկաններով, քրդերով ու լազերով: Սկսվեց խանութների ավերմունքը: Ընտրվում էին միայն հայերինը, որոնք ունեին հայերեն ցուցանակներ: Թալանի ու կոտորածի ժամանակ ամենագործուն մասնակցությունն ունեցավ զորքը: Յուրաքանչյուր խանութում կային 3-4 հայեր, սեփականատեր կամ ծառայող, որոնք հերթով սպանվում էին: Ջարդերն ու թալանը շարունակվեցին մինչև առավոտ:

Երեկոյան բանկի շրջակայքում հարյուրավոր սպանված ոստիկաններ ու զինվորներ կային: Բանկի ներսում սպանվել էր 6 հեղափոխական, 5-6-ը վիրավորներ էին: Բանկի մոտակայքի բոլոր հայկական խանութները ջարդուփշուր էին արվել, իսկ տներում գտնվող հայերը՝ սպանվել: Բանկից վերև, մի փոքրիկ խանութում և Դոմուզ Սոքաք փողոցի որոշ տներում ու խանութներում հայերը զինվել էին ատրճանակներով ու պաշտպանվում էին մինչև վերջին շունչը: Ներսը՝ բանկում, հեղափոխականների ղեկավարները հայտնել են փոխտնօրենին, որ իրենց նպատակը հեղափոխության միջոցով ձայն բարձրացնելը և Եվրոպայի ուշադրությունը հրավիրելն է հայ ժողովրդի հուսահատ վիճակի վրա, որը 3 տարի շարունակ կոտորվում է: Փոխտնօրենը խնդրել է ազատ արձակել բանկի ծառայողներին: Հեղափոխականները հայտարարել են, թե կխնայեն բանկը և ծառայողներին, պայմանով, եթե նա ազդի եվրոպական դեսպանների վրա, որպեսզի պաշտպան կանգնեն հայ ժողովրդին: Նրան հանձնել են 12 կետից բաղկացած իրենց պահանջները և ազատ արձակել: Բարձր պաշտոնյան մեկնել է պալատ:

Ով որ գիտե, թե որքան մեծ նշանակություն ունի Օտոմանյան բանկը ինչպես թուրք կառավարության, այնպես էլ մեծ տերություններից մի քանիսի համար, կարող է հստակ պատկերացում կազմել այն ցնցող տպավորության մասին, որ ստեղծվել է Յլդզ-Քյոշկի և օտարերկրյա դեսպանների շրջանում, երբ հայտնի է դարձել, թե ինչպիսի վտանգավոր իրավիճակում է հայտնվել բանկային այս հիմնարկությունը: Պայթուցիկի մի մեծ քանակություն պատրաստ է եղել ամեն վայրկյան վերջնականապես հոդս ցնդեցնելու ամբողջ բանկը՝ միլիոնների հասնող արժեքներով ու բոլոր ծառայողներով հանդերձ:

Կեսգիշերին եկել են դեսպանությունների և սուլթանի ներկայացուցիչները, երկար բանակցություններից հետո հեղափոխականների պահանջներն ընդունվել

են: Դեսպանները խոստացել են, որ գործադրելու են բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի Ասիայում և Ստամբուլում ապրող հայերի կյանքի, ունեցվածքի ու պատվի անվտանգությունը, որ պիտի աշխատեն ապրելու ազատություն տալ ժողովրդին և հասնել այլ օրենքների ընդունմանը, որոնց մանրամասները մեզ հայտնի չեն: Դեսպանները երաշխավորել են նաև հեղափոխականների կյանքը: Գիշերվա 2-ի կողմերը 22 հայեր դուրս են եկել բանկից՝ ռուսական դեսպանատան առաջին թարգման, եռանդուն Մաքսիմովի և ռուս նավաստիների ջոկատի ուղեկցությամբ: Նրանցից 17-ը, որոնք վնասվածք չունեին, առաջնորդվել են բանկի տնօրեն պարոն Վինցետի զբոսանավը: Այստեղից փոխադրվել են մի ֆրանսիական նավ, որը մեկնել է դեպի Մարսել: Հինգ վիրավորներին տարել են ռուսական հիվանդանոց, որտեղ ցարդ բուժվում են:

Երբ հայտնի են դառնում Գալաթայում տեղի ունեցած խռովությունները, անմիջապես խանութները փակվում են, բնակչությունը վախեցած փախչում է և թաքնվում տներում: Ժամը 3-ի կողմերը փողոցներում հայտնվեցին մահակներով զինված քրդերի և լեզգիների փոքր հրոսակախմբեր: Ժամը 4-ին վայրենիների հոսքը ուժեղացավ, և դա ավելի մեծ երկյուղ պատճառեց բնակչությանը: Ավազակներից շատերը գնում էին արյունոտ մահակներով: Առաջին օրը Բերայում սպանությունները համեմատաբար քիչ էին, քանի որ հայերը թաքնվել էին, իսկ ոստիկանությունը դեռ բացահայտորեն չէր մասնակցում կոտորածներին:

Գալաթա Սարայի ոստիկանատանը հավաքվել էին բազմաթիվ պաշտոնյաներ և լրտեսներ: Ինչպես երևում էր, սպասում էին գործողության հրամանի: Ինչ-որ տեղից նրանց մեջ ընկնում է մի ծեռնառուսբ, որը ոչնչացնում է շուրջ 20 հոգու: Այս դեպքը սոսկալի տագնապ է առաջացնում ժամանած զորքի մեջ: Ոստիկանությունը ցիր ու ցան է լինում, և կես ժամ անց միայն կարողանում է հավաքվել: Այդ ժամանակ, ինչպես պարզվում է, ստացվում է հայերին անգթորեն կոտորելու հրամանը, քանի որ ոստիկանները ջարդն սկսեցին տեղնուտեղը: Շուրջ 40 հայեր, որոնք ծերբակալվել էին տեղամասում, անմիջապես մորթվեցին ոչխարների պես: Դրանից հետո ամբողջ տեղամասը վերածվեց սպանդանոցի: Ոստիկանությունը հարձակվում էր տների վրա, դուրս քաշում տարեց մարդկանց և սպանում հարազատների աչքի առաջ, ապա կոտորում տեղամասի նկուղներում գտնվողներին:

Լույս հինգշաբթի գիշերը սոսկալի ճիչեր լսվեցին Բերա թաղամասի շրջակայքում: Առավոտյան հայտնի դարձավ, որ Քասըմ փաշայի ամբողջ հայկական թաղամասն ավերված, ամայացած է: Միայն այդ գիշեր այնտեղ սպանվել էր շուրջ 600 տղամարդ: Առավոտյան քաղաքի ոստիկանատան առջև 60 դիակ կար: Բուլղարների պարտեզները նույնպես լցված էին դիակներով: Տեղամասի բուլղարներին ձեռք չեն տվել: Այդ գիշեր Քասըմ փաշայում սպանվել են կանայք ու երեխաներ, տները թալանվել են մինչև վերջին փշրանքը: Կանանց ու երեխաների աղերսանքները սրտակեղեք էին: Վերազգեստավորված ոստիկանական պաշտոնյաները առաջնորդել են խառնամբոխը և մատնացույց արել միայն հայերի տները, որի շնորհիվ այդ ահավոր գիշերը ոչ մի այլադավան չի տուժել:

Հինգշաբթի առավոտյան Գալաթայի պալատական ոստիկանատնից դուրս բերվեցին 80 սայլ դիակներ: Մի գերմանացի Բերայի քաղաքապետարանի շենքից հաշվել է 64 սայլ: Իսկ թե որքան է դուրս բերվել Գալաթայից՝ թիվ ու հաշիվ չկա: Կեսգիշերին սկսվեց դիակների փոխադրումը Շիշլիի գերեզմանատուն, և շարունակվեց մինչև առավոտյան ժամը 8-10-ը: Սոսկալի տեսարան էին ներկայացնում բոլորովին մերկ դիակները, որոնք քարշ էին տրվում Բերայի փողոցներով: Ոստիկանությունը միտումնավոր ցուցադրում էր զոհերին՝ ժողովրդին սարսափեցնելու համար: Կեսօրին Բերան որոշ չափով հանդարտվեց: Ոմանք համարձակվեցին դուրս գալ իրենց տներից: Քաղաքային այգու դիմացի սրճարա-

նում այցելուներ երևացին: Կեսօրից հետո, սակայն, Գալաթայից հասան տագնապալի նոր լուրեր: Բերայում հայտնվեցին մահակավորներ, և սկսվեցին նոր սպանություններ: Երկու հայ սպանվեց թունելի դռան մոտ: Շվեդական դեսպանատան առջև թուրք ոստիկանը գնդակահարեց մի հայի, որը կաթ էր տանում: Բերայում տագնապը սաստկացավ Սարայի ոստիկանների ձեռքով կատարված մի գազանային, սահմռկեցուցիչ ոճրի հետևանքով, որի ականատեսն էր տողերիս հեղինակը: Շուրջ 20 ոստիկան պաշտոնյաներ ներխուժեցին մի հայկական տուն, որը գտնվում էր անգլիական դեսպանատան դիմաց: Լսվեց կանացի սարսափելի ճիչ, և քիչ հետո վայրենի ոստիկանները դուրս քշեցին 35 տարեկան մի հայի, որի ետևից դուրս եկան ողբացող չորս կանայք: Հինգ ոստիկաններ մտրակներով հարձակվեցին կանանց վրա և սկսեցին անողոք ծեծել, մինչև որ բոլորն էլ փռվեցին գետնին: Այդ ժամանակ մյուս ոստիկաններն արդեն տապալել էին իրենց զոհին, իսկ երբ բարձրացրին, դժբախտ հայի ճակատը բացվել էր, ուղեղը արնաշաղախ հոսում էր, և ոստիկանները, արյունոտ դանակները ձեռքներին, քարշ տվեցին զոհին, որը հոգին ավանդում էր նրանց ձեռքերում: Անգլիական դեսպանատնից նայում էին զինված թիկնապահները և մի քանի պաշտոնյաներ: Դեսպանատանը գտնվող կանայք սկսեցին լաց լինել, լուսամուտներից նայող բնակիչները սարսափից քարացան:

Քիչ հետո այդ տնից դուրս բերեցին ևս 2 հոգու, որոնք մահամերձ տարվեցին ոստիկանատուն:

Գիշերը Բերայի ոստիկանությունը հարձակվում էր հայերի տների վրա, դուրս բերում տղամարդկանց և դեռ կենդանի մտցնում ոստիկանական տեղամասի մի դռնից, որպեսզի մեկ այլ դռնից դուրս բերեին նրանց դիակները:

Ուրբաթ առավոտյան Բերայի բնակչությունը ականատես էր հարյուրավոր սայլերի մեջ լցված նոր դիակների, որոնք դուրս էին բերվում Գալաթա Սարայի ոստիկանական տեղամասից և քաղաքապետարանից: Շոգից տեղամասի շուրջը տարածվեց դիակների սոսկալի գարշահոտը: Մեծ քանակությամբ կարբոլյան թթու բերեցին և սկսեցին ջրել սպանդի վայրերը: Այժմ էլ շրջակայքում նստել է կարբոլաթթվի հոտը:

Ուրբաթ առավոտյան կոտորածը դադարեց: Հասկանալի էր, որ թուրքերը դա կամովին չարեցին: Սուլթանը, հարկադրված, միայն այն ժամանակ վերջ տվեց սոսկալի սպանդին, երբ եվրոպական դեսպանները հայտնեցին, որ նրա գահը վտանգի տակ է:

Չորեքշաբթի օրը, մինչև երեկո, Սիրկեջիում եղան համեմատաբար քիչ սպանություններ, քանի որ ամբոխը զավթել էր Բերայի և Գալաթայի շրջակա թաղամասերը: Գիշերը կոտորվեցին նավահանգստի շրջակայքում գտնվող բեռնակիրները: Հինգշաբթի առավոտ ոստիկանական պաշտոնյաների առաջնորդությամբ բազմությունը հարձակվեց երկաթգծի կայարանի վրա ճիշտ այն պահին, երբ ուղևորներով լի մի գնացք պատրաստվում էր շարժվելու դեպի Սան Ստեֆանո: Անմիջապես սպանվում են 30 հայեր՝ երկաթգծի ծառայողներ: Մի ոստիկան իջեցնում է գնացքի մեքենավարին, և ամբոխը տեղն ու տեղը սպանում է նրան: Գնացքում գտնվողները սահմռկում են: Ամբոխը ետ է շրջվում և սկսում ջարդել խաները, որտեղ հայեր կային: Այսպես սկիզբ առան սպանությունները ծովափնյա փողոցներում՝ մինչև Էյուբ: Ամենից սոսկալի դեպքերը տեղի ունեցան Բալատում, որտեղ այդ օրը սպանվեցին շուրջ 700 հայեր:

Բալկապանի շրջակայքում գտնվող խանութների մեծ մասը քանդված է, բոլոր հայերը սպանված են, իսկ Բալկապանը մնացել է անվնաս շնորհիվ մի թուրք վաճառականի, որը եռանդուն միջոցներ է ձեռնարկել ամբոխի դեմ: Հայ բեռնակիրները, որոնք գտնվել են այդ շենքում, փրկվել են:

Գալաթայից և Պսամաթիայից հետո *Խասգյուղը* ամենաավերված թաղամասն

է: Չորեքշաբթի գիշերվանից մինչև ուրբաթ առավոտ տեղի են ունեցել կոտորածներ, և հայերի բոլոր տները ամբողջովին թալանվել են: *Այստեղ, ցավոք, կողոպուտին մասնակցել են նաև հրեաները*: Հիմա թաղում չի մնացել հայի ոչ մի տուն, որը թալանված չլինի, ոչ էլ կարելի է հանդիպել 16-ից մինչև 61 տարեկան որևէ հայի: Միայն այս թաղամասում տղամարդկանց հետ կային նաև սպանված կանայք ու երեխաներ:

Խասգյուղցի շուրջ 200 հայ ընտանիքների հաջողվել է փրկվել եկեղեցում:

Տողերիս հեղինակը ականատես էր Խասգյուղին մոտակա նավահանգստում կատարված միջադեպերից մեկին, որից նույնիսկ քարը կսարսռար: Այդ օրը եկեղեցին բաց էր, և փրկվածները փախել են նավահանգիստ՝ նավերում փրկություն փնտրելու: Շուրջ 80 հոգի, տղամարդիկ, կանայք ու երեխաներ բարձրացան նավը, որտեղ գտնվում էի նաև ես: Դրանք կենդանի դիակներ էին, գերեզմանից հանված մարդիկ, սարսափից համրացած կանայք, քաղցից ուշակորույս երեխաներ: Նավում գտնվող թուրքերը ոխակալությամբ էին նայում հայերին: Այս թշվառները 45 ժամ մնացել էին եկեղեցում՝ ծարավ ու անոթի, ամեն րոպե սպասելով իրենց մահվանը: Եվ փախել էին, չիմանալով ուր...

Մինչև կեսօր անցավ բավական խաղաղ, նույնիսկ տեղ-տեղ սկսեցին բացել խանութները: Ոստիկանությունը դադարեցրեց ջարդերը: Մսագործները (ոճրագործները - *թարգմ.*) անմիջապես վերածվեցին խաղաղության ու կարգուկանոնի պահապանների: Ձերբակալությունները շարունակվում էին, սակայն այլևս չէին սպանում: Այդ օրը բոլոր կոտորողները գնացել էին սովորական աղոթքի: Վերադարձին, Բերայում՝ ոստիկանական տեղամասի դիմաց, պայթուցիկ է նետվել զորքի վրա: Վասիլիադիի դեղատանը գտնվող երկու հայերի զինվորները տեղն ու տեղը մորթեցին: Այդժամ Գալաթայի որոշ փողոցներում հայերի կողմից լսվեց հրացանաձգություն: Փողոցները լցված էին ոստիկաններով: Տագնապը վերսկսվեց, և խանութները կրկին փակվեցին:

Մինչև երեկոյան ժամը 4-ը խաղաղ անցավ: Բայց այդ ժամանակ Գալաթայում սկիզբ է առել իսկական ճակատամարտ՝ մի խումբ հայ հեղափոխականների և զորքի միջև: Ականատեսն այդ դեպքը պատմում էր այսպես. «Ժամը 4-ն անց կեսի կողմերը փոխհրաձգություն սկսվեց տներում թաքնված հայերի և ոստիկանության միջև: Հայերը կրակում էին և ձեռնառումբեր նետում: Անմիջապես վրա հասավ զորքը և բռնեց մերձակա բոլոր փողոցները: Մի քանի տեղից զորքերի վրա պայթուցիկներ նետեցին, որը սոսկալի շփոթ առաջացրեց զինվորների մեջ: Հետևակն ու հեծելազորը փախչում էին և կրակում շենքերի պատուհաններին: Այս դեպքերը շարունակվեցին շուրջ մեկ և կես ժամ: Ամբողջ գիշեր ողջ Գալաթան հեղեղված էր զորքերով: Ի՞նչ է կատարվել ապստամբների հետ, ինձ հայտնի չէ:

Վերջին օրերին կրքերը հանդարտվեցին: Ողջ մնացած հայերը փախչում էին դեպի կղզիները, դեպի Բոյուք դերե, Սան Ստեֆանո և Մաքրի գյուղ:

Պսամաթիան ենթարկվել է սոսկալի ավերվածության: Այս թաղը գտնվում է Գում-Գափուի մոտ և բնակեցված է միայն հայերով: Այստեղ շուրջ 200 զինված հայեր մինչև ուրբաթ երեկո կռվել են ոստիկանության և զորքի դեմ: Բոլորն իրենց գլուխները դրեցին մարտի դաշտում: Զորքն ու բաշիբոզուկները ոչնչացրին տղամարդկանց: Այստեղ սպանվեց շուրջ 2000 հայ, բոլոր տները թալանված են:

Մենք տեսել ենք մոլեգնության հասած մոլեռանդ ամբոխ՝ վայրագություններ կատարելիս: Դեպքեր եղել են, հիմա էլ պատահում են Եվրոպայում: Բայց մայրցամաքի ոչ մի երկրում, բացառությամբ Թուրքիայի, չկա մի պետություն, որտեղ իշխանությունը կոտորի իր խաղաղ հպատակներին:

Տարբեր հավատի ու ազգության մարդիկ, բոլոր օտարերկրացի ու տեղացի բնակիչները, բոլոր եվրոպական դիվանագետները Կ. Պոլսում իրենց աչքով տեսան, թե ինչպես թուրք ոստիկանությունը օրը ցերեկով գլխավորում էր ամենաա-

հավոր ու ավազակ ամբոխին՝ սպանելու ու կողոպտելու համար, տեսան, թե ինչպես 40 ժամ շարունակ ոստիկանական տեղամասերը վերածվել էին սպանդանոցների, թե ինչպես սպաները թալանելու ու սպանելու էին հրահրում վայրի քրդերին ու լազերին:

Զուր տեղն է «Նոյե ֆրայե պրեսե» ծախված թերթը ջանում արդարացնել թուրքերին: Ծանր պատասխանատվություն է ընկնում թուրքական բարձրագույն ղեկավարության վրա, որը թույլ տվեց, հանդուրժեց, հրահրեց խաղաղ բնակչության կոտորածը:

Այսօր հայերից զոհվածների թիվը անցնում է 5000-ը: Ոմանք ասում են, թե գերեզմանոց է տարվել մինչև 6000 դիակ: Այժմ դժվար է ճշգրիտ թիվը տալ:

Բուլղարնե՛ր: Դուք հիշում եք 1876 թվականը, երբ կորստյան մատնվեց 100000 մարդ՝ Թրակիայում, Բուլղարիայում: Կարեկցեք հայերին և օգնեք այն տարագիրներին, որոնք մի կերպ փրկվելով թուրքի յաթաղանից՝ օթևան են փնտրելու մեզ մոտ:

Բուլղարնե՛ր, պատրաստ եղեք, քանզի նման վիճակ է սպասում նաև Մակեդոնիային: Թուրքական բարձրագույն իշխանությունը հոգեվարքի մեջ վճռել է կոտորել բոլոր քրիստոնյա ժողովուրդներին, որոնք տնքում են նրա լծի տակ:

Կ. Պոլիսը դեռ չի խաղաղվել: Հնարավոր են ամեն տեսակի անակնկալներ: Անկախ քաղաքական հավատամքից, ամբողջ ժողովուրդը պետք է պատրաստ լինի, եթե որևէ աղետ պատահի Բոսֆորի շուրջը: Անհրաժեշտ է, որ բուլղարական բանակը կազմ ու պատրաստ լինի և բուլղարական իշխանը Սոֆիայում լինի:

(Ն. Պ.)

բ. Ասում են, թե բոլոր ապստամբ թուրքերը, որոնք հարձակվել են վիրավորների և խաղաղ քրիստոնյաների վրա, հանձնվում են ռազմական դատարանին, և միայն դատապարտվելուց հետո են ենթարկվելու պատժի: Սակայն, մի՞թե այդպես են վարվում Թուրքիայում: Բնական է, ոչ ոք չի այպանի թուրքական կառավարությանը, եթե նա վերաբերվի ինչպես եվրոպացիները, քանզի ճշմարտություն է՝ ոչ մի կառավարություն, լինի եվրոպական, թե ասիական, հաշվի չի նստում հեղափոխականների հետ: Օրինակ, «բարեպաշտ» սուլթանը և նրա կառավարությունը գնդակահարեց ու ամենադաժան միջոցներով պատժեց հայ հեղափոխականներին, որոնք բռնագրավեցին Օտոմանյան բանկը: Սակայն անզոր չալմայակիրը չգոհացավ 30 ապստամբների մաքրազարդումով, որը գուցե և իր իրավունքն էր, այլ ուզում է մի ամբողջ ժողովրդի ոչնչացնել: Նա չի հասկանում: Ո՜վ, ալլահ:

գ. Այդպես պատահեց Բուլղարիայի Ստարա-Զագորա, Կազանլըք, Սևլիևո քաղաքներում և այլ տեղերում, որովհետև ռուսական զորքերի հետ միասին կռվում էին նաև բուլղար աշխարհազորայիններ: Սուլեյման փաշան իր հորդաներին հրամայել էր մոխրի ու փոշու վերածել Ստարա-Զագորան և այլ քաղաքներ:

դ. Իսկ հնարավո՞ր է արդյոք նկարագրել 1875-1876 և 1877 թվականների բուլղարական կոտորածները: Մի՞թե կարելի է նկարագրել գազանությունները, դաժանությունները, սպանությունները, բռնաբարությունները, թալանն ու կամայականությունները Մակեդոնիայում բուլղարների նկատմամբ:

ե. Սա դատարկ խոսք է և թուրքական նենգություն, քանի որ ոչ մի դաժանություն չի գործվել թուրքերի նկատմամբ: Նման դեպքերը կարելի է հաշվել մատների վրա: Եթե բուլղարների փոխարեն մեկ ուրիշ ազգ լիներ, թուրքերն իրավամբ իրենց վրա զգալու էին անօրինակ դաժանություններ, քանզի արժանի են դրան: Շնորհիվ ռուսների՝ մի մազ անգամ չի ընկել մուսուլմանների գլուխներից, ինչպես երևում է Ալեքսանդր II թագավորի ստորև բերված հեռագրից, որն ուղարկված է

ի պատասխան Համիդի հեռագրի.

«Ձերդ գերազանցություն՝ հեռագիրը տխուր տպավորություն թողեց ինձ վրա: Ես հակված եմ հավատալու, որ Ձերդ կայսերական գերազանցությանը հասած հաղորդագրությունները թուրքերի տառապանքների մասին կամ թյուրիմացություն են, կամ գոնե չափազանցված:

Համոզմունքը, որ արտահայտում եք, թե ես չեմ հանդուրժելու նման իրավիճակը, ճշմարիտ է: Զորքերի գլխավոր հրամանատարությանը և Բուլղարիայում կայսերական կոմիսարին ուղղված իմ հրամաններով հանձնարարված է առանց դավանանքի և ազգային խտրության, հոգ տանել բոլոր ժողովուրդների ապահովության ու բարեկեցության ապահովման մասին: Այս իսկ պատճառով հավատացած եմ, որ նրանք երբեք չեն խուսափի խստորեն պատժելու ամեն մի անօրինականություն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ»:

զ. Կ. Պոլսից ստացված վերջին մի թղթակցություն ահա թե ինչ մանրամասնությամբ է նկարագրում հայերի սարսափելի կոտորածները: Դա մի սրտակեղեք պատկեր է, որի համեմատությամբ աղոտանում է միջնադարյան ամենաահավոր բռնակալի կատարածը... «Այս պահին, երբ գրում եմ քեզ, քրդերը, մանաֆները և ամեն տեսակի փողոցային սանկյուլոտներ, ինչպիսիք կարող է պարտակել Կ. Պոլիսը, զինված այլևայլ զենքերով, հանդիսավոր խաչաձևում են Բերայի փողոցները, գազանաբար սպանում խաղաղ հայերին և թալանում նրանց տները, խանութներն ու կրպակները: Իսկ Գալաթայում՝ Ստամբուլում, թաքստոցներից դուրս են բերում խեղճ հայերին և ինչպես շների՝ սպանում փողոցներում: Տեղացիների վկայությամբ, նրանք երբեք քաղաքը չեն տեսել նման սոսկալի վիճակում, նույնիսկ ամենամեծ խռովությունների ժամանակ, որ մինչ այդ տեղի են ունեցել այստեղ: Փողոցները բոլորովին ամայի են: Բերայում՝ ոչ մի պահակախումբ, ոչ մի քսու ոստիկան: Երեկ գիշեր (26-ը օգոստոսի, 1896 թ.)՝ ահավոր ջարդեր Խասգյուղում, Քասըմ փաշայում, Պսամաթիայում, Գում-Գափուում, Յեդի-Կուլեում և այլ տեղերում: Աննկարագրելի սարսափներ: Սրտաճմլիկ տեսարաններ: Արյունով ներկված փողոցներ: Արյան լճակներ փողոցների ցածրադիր տեղերում: Աղբատար սայլերը անընդհատ տանում են հենց նոր սպանված կամ դեռ կիսակենդան հայերին: Հրացանների ու հրանոթների որոտը ճեղքում է օդը: Վայրենի ամբոխը հայերին դուրս է բերում տներից, թաքստոցներից և սպանում ինչպես շների: Ջարդուփշուր արված ու թալանված խանութներ և կրպակներ, քանդում են ու թալանում, և այս ամենի վրա ոստիկանությունը նայում է անվրդով, սառնասրտորեն (հասկանալի է, արժե՞ արդյոք ուղղափառ օսմանյան ոստիկանության ու զորքի հանգստությունը խռովել ինչ-որ գյավուր շների՝ հայերի համար): Հազարավոր սպանվածներ կան նաև Բերայում: Մի հայ սպանված ընկել է հենց շվեդական հյուպատոսության դռան առջև, որտեղ, հավանորեն, փրկություն է փնտրել: Քաղաքը սոսկալի տեսարան է ներկայացնում: Խառնամբոխը շարունակում է կատաղորեն վայրագություններ գործել բուն ասիական ձևով: Զոհերի թիվը, որ հայտնում են հեռագրերը՝ խիստ նվազեցված է: Վստահելի անձանց ասելով, միայն սպանվածների թիվը հասնում է 20000-ի (քսան հազարի): Իսկ վիրավորների հետ միասին՝ 40000-ի (քառասուն հազարի): Հավաստի աղբյուրները հաղորդում են, որ սպանվածներ կան նաև գավառներում: Խասգյուղում, Պսամաթիայում, Էդիրնե Գափուում.կենդանի չի մնացել ոչ մի հայ, մանավանդ արական սեռից»:

է. Դու ասա «հունարեն» Բռավո: Այս տեսակետից հույները հայրենասերներ են ու վարպետներ: Աշխարհը խլացրին, թե ընդհանուր ոչինչ չունեն կրետացիների հետ, սակայն հունական նավերն անընդհատ երթևեկում են Աթենքի և Կրետե կղզու միջև: Դե, ի՞նչ: Մարդիկ հայրենասերներ են:

ը. Ընթերցողը թող ների մեր այս փոքրիկ կամայականության համար:

թ. Այստեղ տեղին է հայտնել մեր ընթերցողներին, որ Ռումինիան, այն Ռումինիան, որը մեր հայրենիքում այնքան երկրպագուներ ունի, չբարեհաճեց իր երկրում ընդունել հայ գաղթականներին: Մեզ մոտ ստեղծվել է այն կարծիքը, թե Ռումինիան երևի թե աշխարհի ամենաազատասեր ու հումանիստական պետությունն է: Սակայն, ինչպես այս, այնպես էլ անցյալ տարվա Կ. Պոլսի իրադարձությունները հակառակն ապացուցեցին: Հումանիզմի մասին ռումինական ինչ-որ հայտարարություններին չպետք է մեծ հավատ ընծայել: Ռումինիայի մեր երկրպագուները պետք է նվազեցնեն իրենց պաշտամունքն այդ երկրի նկատմամբ. ինչպես անցյալ տարի, այնպես էլ ընթացիկ տարում տեղի ունեցող հայկական կոտորածների ժամանակ Կ. Պոլսում ռումինական դեսպանությունը կատարել է մի աններելի, արգահատելի դեր: Ահա թե անցյալ տարի ինչ էին գրում ռումինական դեսպանության այս անարժան դերի մասին.

«Առհասարակ, ջուրը պղտորելիս նրա երեսն են դուրս գալիս ամեն տեսակ աղտեղություններ: Հայկական շարժումների ժամանակ ևս դրանք նկատվեցին ինչպես բարձր խավի, այնպես էլ կրթված հասարակության շրջանում: Գոնե հայերի մեջ հաստատապես խոսվում է այն մասին, թե Կ. Պոլսում ռումինական դեսպանությունը իր ամբողջ կազմով, բացահայտ թե ծածուկ, գտնվում է թուրքական գաղտնի ոստիկանության տրամադրության տակ, իսկ ինքը՝ դեսպանը կամ նրա թարգմանիչը, հայկական ցույցերի նախօրյակին ուր որ անկ է հայտնել էր հայկական կոմիտեի ծրագրերի մասին այնքանով, որքանով այդ գործակալությունը տեղեկացել է իր գաղտնի ծառայության միջոցով»: Մի՞թե սա սոսկալի արատ չէ, որ դրոշմվել է ռումին ժողովրդի ճակատին:

Պետք է ցավել ռումինական կառավարության այս անմարդկային արարքի համար, որ հայ գաղթականներին թույլ չի տալիս մտնել Ռումինիա: Ցավում ենք նաև, որ տարիներ առաջ Ռումինիայում ևս սկսեցին հայտնվել ռումինական Պապպարիգովցիներ և ռումինական Միլոշ Միլոևիչևցիներ (խոսքը ռումին և սերբ մեծապետականների մասին է.- *թարգմ.*): Քանզի, ինչ-որ պրոֆեսոր Հրժդաու քարոզում է մի նոր ուսմունք հին Բուլղարիայի և Մակեդոնիայի վերաբերյալ, որ իբր այնտեղ անհիշելի ժամանակներից ապրել են միայն ռումինացիներ, և որ հիմա էլ տեղի ամբողջ բնակչությունը վալախներ են: Իններորդ հրաշալիք: Հույներն ու սերբերն էլ հավակնություններ ունեն այս դժբախտ երկրի նկատմամբ, սակայն ռումինացիներն այդ հարցին մոտեցել են ավելի կարճ, կտրուկ ճանապարհով: Եվ այս ուսմունքի համար պրոֆեսոր Հրժդաուն ռումինական գիտությունների ակադեմիայի կողմից պարգևատրվել է ինչ-որ վկայականով: Պարզապես ապշելու բան է: Մենք հավակնություն ունենք ճանաչելու Մակեդոնիան (որպես նրա զավակը), և որքան մեզ հայտնի է, ստորև մեր հիշատակած բնակավայրերից ու գյուղերից բացի, այլ տեղերում ռումինացիներ, որոնց Մակեդոնիայում անվանում են ցինցարներ, չկան: Այդ բնակավայրերն են՝ Վլախո-Կլիսուրյա, Նևեսկա, Գոնիշտա, Մագարևո, Տրոռնովո, Կրուշևո (բուլղարների հետ խառն), Պիսոդեր և Բելկամեն: Նույնպես հետևյալ քաղաքներում՝ Օհրիդում՝ մինչև 100 ընտանիք, Ստրուգայում (ի դեպ՝ եկվորներ)՝ մինչև 35 տուն, Վելեսում, Սկոպիեյում, Սելանիկում, Բիթոլիայում, Նևրոկոպում, Սերեսում, Մելնիքում, Դրամայում, Պրիլեում և Կիչևոյում՝ մի քանի ընտանիք, այն էլ միայն սովորույթներով, չհաշված այսպես կոչված կարակաչանները, որոնք ձմեռն անցկացնում են Սպիտակ և Սև ծովերի ափերին, իսկ ամռանը դեգերում Բալկանյան թերակղզու բարձրաբերձ լեռներում: Սրանք զբաղվում են բացառապես անասնապահությամբ, պահում են մանր եղջերավոր անասուններ՝ ոչխարներ:

Ըստ մեր հաշվումների, Մակեդոնիայում ապրող վալախները 125000-ից ավելի չեն, իսկ կարակաչանների հետ միասին (միայն Մակեդոնիայում)՝ մինչև 135000: Սրանք են Մակեդոնիայում ապրող նշանավոր վալախները (ցինցարները):

ժ. Հունական խոնարհ պատրիարքը անցյալ տարվա հայոց կոտորածների առթիվ սուլթանին կոչեց պահապան հրեշտակ, այն էլ՝ սուրբ խորանից: Սարսափելի ստորաքարշություն ու պնակալեզություն:

ի. Կ. Պոլսից ստացված նորագույն տեղեկությունների համաձայն, ասում են, թե Բոսֆորի ինքնակալը հնարել է հայերին կոտորելու ասիական մի նոր մարտավարություն: Ըստ սուլթանի հրամանագրի՝ Կ. Պոլսում գտնվող բոլոր հայերը, հատկապես Հայաստանից և այլ գավառական քաղաքներից եկած բանվորները ու առևտրականները, պետք է հեռանան Կ. Պոլսից և ամեն մեկը գնա իր ծննդավայրը:

Այս հրամանի համաձայն, տեղ են հասցվել անհրաժեշտ նավեր, որոնք, Բոսֆորից դուրս գալուց հետո, ռազմական նավերի կողմից ենթարկվել են ինչ-որ վերստուգման: Այնտեղ, Մարմարայի կանաչ ալիքներում, զինվորները խեղճ հայերին պարկերի պես շպրտել են ծովի խորքերը: Այսպես, երեք չորս նավերի մեջ լցված հայերը ոչնչացվել են... Մեծ տերությունների դեսպանները, իմանալով Բ. Դռան դավադրությունը, ուղարկեցին իրենց մշտական ուժերը, որոնք կանգնեցրին աղետի ենթակա երկու նման նավեր: Դեռևս երեկ (29 օգոստոսի, 1896 թ.) դրանք գտնվում էին Բոսֆորի նեղուցից մինչև «Ֆեներ» կոչվող տեղանքը վերահսկող տերությունների մշտական ուժերի հսկողության ներքո.

Աստված պահի ասիական բարթուղիմեոսությունից... Ամոթ Եվրոպային:

Խայտառակությու՛ն 19-րդ դարի համար... Սարսափելի՞ է, սարսափելի, սարսափելի:

2. Այս և հետագա բոլոր ընդգծումները հեղինակինն են:

3. Հոգևորական դպրոցի սան:

4. Մուսուլման դատավոր:

5. Մուսուլման աստվածաբան, հոգևորական:

6. Փոքրասիական թուրքերի քամահրական հորջորջումը:

7. Խոսքը թուրքական բարեփոխումների սին խոստումների մասին է:

8. Բոգորով Իվան (1820-1892), բուլղար հայրենասեր, լուսավորիչ:

9. Թուրքերը հայդուկ էին անվանում անբաններին, ավազակներին:

10. Պանագյուրիշտեն Բուլղարիայի այն քաղաքներից էր, որը 1876 թվականի Ապրիլյան ապստամբության օրերին թուրքերը հրկիզեցին և կոտորեցին բնակչությանը:

11. «Իրադե» - շնորհագիր, «ֆերման» - սուլթանի հրաման, «թեսքերե» - անձնագիր կամ անցագիր:

12. Անձանոթ երկիր:

13. Ալբանացիների ազգային իդեալը՝ թագավորություն, Մեծ Ալբանիա:

14. Սահմանամերձ լեռ՝ Արևմտյան Բուլղարիայի և Մակեդոնիայի միջև:

15. Անատոլիայի հարավ-արևելքում գտնվող Դիարբեքիր կամ պատմական Ամիդա քաղաքը, անցյալ դարի երկրորդ կեսին եղել է թուրքական իշխանությունների կողմից ձերբակալված բուլղար հայրենասերների գլխավոր աքսորավայրը: Հայ և բուլղարական աղբյուրները վկայում են, որ տեղի հայ բնակչությունը զգայուն վերաբերմունք է ցուցաբերել բուլղար տարագիրների նկատմամբ և ամեն կերպ

օժանդակել է նրանց տաժանելի կյանքը գեթ մասամբ տանելի դարձնելու համար:

Տե՛ս Տ. Մկունդ, «Ամիդայի արձագանքները», հտ. 1, Նյու Ճերսի, 1950, էջ 181-197: ***Կ. Հ. Ճինգոզյան***, «Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից», Երևան, 1966, էջ 59-62:

16. Խոսքը արևմտահայերի ազգային ազատագրական շարժումների եռանդուն գործիչ Միհրան Տամատյանի (1863-1945) մասին է:

17 Նահանգապետ: Խոսքը Բիթլիսի Վալի Թահսին փաշայի մասին է:

18. Մուշ:

19. Բուլղարները օսմանյան տիրապետության դեմ գրչով ու զենքով մաքառող իրենց հեղափոխական գործիչներին անվանում էին апостоли-առաքյալներ:

20. Խոսքը 1890-ական թվականներին Վարդենիսում, Տարոնում և Սասունում ծավալված դիմադրական շարժումների գործուն մասնակից, հայ հեղափոխականների համար Ռուսաստանից զենք փոխադրող Մարգար վարժապետի, նույն ինքը՝ վարդենիսցի հեղափոխական գործիչ Մարգար Ամիրյանի (1858-1894) մասին է: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. VI, 1981, էջ 238՝ Մ. Ամրոյան, էջ 1004՝ Մ. Ամրոսյան:

21. Մուսա բեյը հայտնի էր հայերի նկատմամբ գործած վայրագություններով ու հարստահարություններով: Եվրոպական դիվանագետների ճնշման տակ թուրքական կառավարությունը ստիպված եղավ կեղծ դատավարություն կազմակերպել, սակայն, զգուշանալով Մուսա բեյի մերկացումներից, գործը կարճվեց, և նրան աքսորեցին: 1905 թվականին Մուսա բեյը Արևմտահայաստանում հանդես է գալիս նոր հանցագործություններով: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. VI, Երևան, 1981, էջ 151, 277, 491:

22. Խոսքը Սասունի առաջապահ Գելիեգուզան (Գելի) գյուղի մասին է, որի բնակիչները 1890-ական թվականներին աչքի ընկան թուրք և քուրդ միացյալ զորախմբերի դեմ մղած հերոսական կռիվներով:

23. Ըստ «Հայ ժողովրդի պատմության»՝ «1894 թ. օգոստոսի սկզբներին հարձակման անցան թուրքական կանոնավոր զորամասերը: Մուշում հանդիսավոր արարողությամբ ընթերցվեց ապստամբ անհավատներին բնաջնջելու մասին սուլթանական ուղերձը»: Տե՛ս նույն տեղում, հտ. VI, Երևան, 1981, էջ 244:

24. Խոսքը Շենիկ գյուղի տանուտեր, 1894 թ. Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից և ամենահերոսական դեմքերից մեկի մասին է:

25. Խոսքը Զիլանի շեյխ Մահմեդի մասին է: Այս շեյխին էր հանձնարարված սրբազան պատերազմ հայտարարել Սասունի հայությանը:

26. Հեղին գյուղից:

27. Խոսքը 1894 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Սասունում ծավալված ինքնապաշտպանական կռիվների մասին է:

28. Մկթենգ գյուղ, մեծ հայդուկապետ Գևորգ Չաուշի ծննդավայրը:

29. Արևմտյան Բուլղարիայում և հիմնականում Սոֆիայի մերձակայքում ապրող գյուղացիների անվանումը:

30. «Եվ մեր ոսկորներից վրիժառու կհառնի»: Քաղված է հռոմեացի բանաստեղծ Վերգիլիոսի (Ք.ծ.ա. 70-19 թթ.) «Էնեական» դյուցազներգությունից: